




ՀԱՄԱԾԻՆ

1973

Գ




ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Վոլգա

1973





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԶԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿՅՈՒԼԵՍԵՐՅԱՆ—Մեծ պահք	3
II. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ—Ապաշխարութեան շարականներ	6
Լուրք Ներսես Ծնողիայի Հայրապետի մահվան 800-ամյակը	8
Էրզ. Տեառն Ներսիսի հայոց կաթողիկոսի ողբերգությունը ամօժիմ զղջացելու և քողոք իրաքանչիւրոց դիմի խոստովանաբար	10
Վարդանանց տոմը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում	13
ԶԳՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ—Սիրո կրակով	17
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	20
Հովվական այցելություն	22
Լրացի և եգիպտոսի հայոց թեմերում	24
ԳԵՎՈՐԳ ՀԱՏԻՏՅԱՆ—Գրախոսություն—Վանքի օրեր	26
ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ (ԴԵՆ-ՄԱՀ)	
Դեռ մեր հրաշք	30
Ամայքներում վրա	30
Մայրավանքի զանգակ	31
ԳՐԻԳՈՐ ԳԹՈՒԼՅԱՆ—«Տաթև» ուսանողական պարբերաթերթը	32
ՀՈԱՋ ԲԱՐԹԻԿՅԱՆ, ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ—Ազաթանգեղոսի մի նորահայտ հունարեն խմբագրություն (Օքրիդայի Վաքրը)	36
ՀԵՆՐԻԿ ԲԱՆՁՈՒՅԱՆ—Հոլիանդոս կաթողիկոս Դրասխանակերտցի	44
ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ—Մանրամկարիչ Կիրակոս Զահանգ	48
Յուզակ Մայր Աթոռ և Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	55
Լուրեր Հայաստանյայց եկեղեցու թեմերից	59
Լուրեր քույր եկեղեցիներից	62
Լուրեր եկեղեցիների համաշխարհային խորհուրդից	68

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԷ, ԷԶՄԻԱՍԻՆ


«ԷԶՄԻԱՍԻՆ» ԱՄՐԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 6/III 1978 թ.: Ատորագրված է տպագրության 4/IV 1978 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ 60X84/4, պատվեր 172:

Մայր Աթոռ և Էջմիածնի տպարան, 1978 թ.



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԲԱՐԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿՅՈՒՆԵՆԵՐՅԱՆ

ՄԵԾ ՊԱՀՔ

Գ. ԿԻՐԱԿԻ. ԱՆԱՌԱԿԻՆ

Երիտասարդությունը մարդկության կենսագործող ույժն է: Աշխարհի տիրելու, աշխարհը վայելելու իրավունքը երիտասարդինն է: Իբրև կյանքի աղբյուր, իբրև եռանդուն արյուն, իբրև գեղեցկություն, իբրև ներկա և ապագա, անոր կենցաղը, միտումները, աշխուժությունը, առողջությունը, հիվանդությունը, ներկայությունը, բացակայությունը, ամեն մեկ շարժումը, խոսքը, պրածը ու վերցուցածը արժեք մը ունին, կշիռ մը կներկայացնեն անոր, այդ երիտասարդին, անհատականության մեջ, ընտանիքին մեջ, ընկերության մեջ, մարդկության մեջ:

Անառակ որդվույն առակը սուրբ Ավետարանի հավիտենական դասերեն է: Ավետարանական աղամանդ մըն է ադա առակը, որ կպահեն իր հարազատ, իր անվթար ցուքերը, թե՛ հին դարերու համար և թե՛ նոր ժամանակներու համար: Երիտասարդ կյանքի փորձանքներուն ու փորձերուն հուզիչ մեկ դրվագը, որ սակայն խորունկ է, բազմակողմանի, ցնցող, զգաստացնող, հուսալից, շենշող, մարդկային և միանգամայն աստվածային դրվագ մը:

Սիրելի հայորդի, Հայաստանյայց եկեղեցին, այս կիրակի Ավետարանի այդ առակավոր դրվագին վրա կսենեռն ու կքնեռն մեր ուշադրությունը:

Ի՞նչ է պատահեր, եղածը ի՞նչ է:—Երիտասարդության հատուկ բան մը: Ի՞նչ կա ասոր մեջ: Ամեն երիտասարդ կիյնա կելնե. և ասիկա շատ սովորական երևույթ մըն է կյանքի մեջ: Այսպես եկեր է, և այսպես կերթա:

Այո՛, բարեկամս. ճիշտ այս իյնալու և ելնելու սովորական երևույթին մեջն է Ավետարանի դասը:

Երիտասարդները կիյնան. քնեն թե ինչո՞ւ կիյնան, ի՞նչպես կիյնան:

Երիտասարդները ինկան, քնեն թե ի՞նչ կորսնցուցին այդ անկման մեջ:

Երիտասարդ մը կարող եղավ ելնելու իր անկումներու մեջեն. ելավ, կանգնեցավ, քնեն թե ինչե՞ր տեսավ, ինչե՞ր գտավ ինկած կյանքի թաթթսփումներուն մեջ:

Անկումը գիտակցական է: Փորձանքը կամ փորձությունը, որ հաճախ իբրև մեղմացուցիչ փաստ կգործածվի անկումը արդարացնելու համար, գերծ չէ՛ կեղծիք: Վասն զի ո՛չ միայն փորձվողը բաներ մը կզգա, կգուշակե, պայծառ կամ աղոտ միճակի մը մեջ, այլ նաև փորձվածներու և մա՛նաւանդ փորձառուներու ազդարարությունը, հոգածությունը, սերը, խանդադատանքը, նույնիսկ խստությունը, արդեն գիտակից ըրած են դեպի անկում գացող երիտասարդը՝ ատոր վտանգներն ու վնասները, ատոր ահավորությունը զգացելով իրեն:

Եվ Ավետարանի անատակին վրա անկման ճիշտ այս նկարագիրն է, որ շեշտված է:

Կրճաճ շատ բնական կերպով երևակայել, թե անատակին հայրն ու մայրը՝ շատ խրատներ ու խորհուրդներ շտալենցին իրենց հոգեհատորը զգուշացնելու համար կարգ մը ստույգ վտանգներն և հավանական փորձանքներն: Մերթ սիրով, ծնողական անհուն սիրով աղաչեցին, լացին, ողբացին որ երիտասարդը չհեռանա հայրենի տունեն. մերթ սաստեցին, սպառնացին:

Բայց երիտասարդը չուզեց կարևորություն ընծայել անոնց: Արյունը կեռար գեռար, ինքն էր խելացին, ինքն էր արդիականը, նորգլուխը, հայրիկը, մայրիկը հինգուիսներ էին, բան չէին գիտեր, նոր աշխարհի, նոր քարքերու պետքերն ու պահանջները չէին կրճար տեսնել ու գնահատել: Փորձության հմայքը այնքան զորավոր է որ երիտասարդը միայն մեկ բան գիտե. այսինքն՝ զոհացում տալ իր խելքին, որ ամենահին տարբերություն չունի իր ԿԻՐՔԵՆ: Ունակոխ կընեն ծնողական սերը, կարհամարհեն փորձառությունը, և դուրս կնետվի հայրենի տունեն, «դուրսի աշխարհը», կերթա կնետվի ուղղակի փորձանքին մեջ, «կիյնա»...

Եվ Ավետարանին անատակն ինկա՛վ: Եվ ամեն օր կիյնան երիտասարդներ այսպես կամ այնպես, կիյնան մարդիկ այսպես կամ այնպես: Ինչո՞ւ. — որովհետև փորձանքը հմայիչ է, հրապույրներ ունի, և փորձվողներ չեն տեսներ վտանգը, անկման առաջին քայլը: Փորձանք և մեղք շատ տարբերություն չունին իրարմե: Մարդիկ կփորձվին, մարդիկ կմեղանան, որովհետև փորձանքը հրապույրներով ծածկված է. որովհետև մեղքերը անուշ են: Եվ Աստվածաշունչի հեղինակներն սկսելով, փորձառու անձինք՝ մեղքը նմանցուցած են ԱՆՈՒԾ ՊՏՈՒՂԻ:

Մարդիկ վտանգավոր ձեռնարկներ կընեն մերթ առանց կանխատեսության, և շատ անգամ գիտակցաբար: Եվ երբ կծախողին, տրտմությունը կկոխեն անոնց վրա. կափստան, կավաղեն. բայց ի՞նչ օգուտ: Իսկ գիտակցաբար վտանգողներ (այս երկրի ոճով՝ ոխաք ընողներ), եթե ձախողին, «է՛հ, արդեն այնք առած էինք», կըսեն, էրած սիրտը միայն թարելու համար. վասն զի մարդ պարտավոր է ողջմտորեն՝ չդիմել վտանգի, կամ Ավետարանի լեզվով՝ պարտավոր է «մի՛ կալ հակառակ չարին»: Իսկ՝ եթե չձախողին, այսինքն՝ եթե հավանական նկատված վրտանգը չպատահի, ասիկա հիմաբանք քաջություն, գործգիտություն, ճարպիկություն, ձեռներեցություն, եթե նույնիսկ այսպիսի ոչ-ձախողության պարագային մարդիկ վրա տված լլվան՝ իրենց ամենեն ազնվական և

սմենեն թանկագին հատկություններն մի քանի, կամ իրենց ամբողջ նկարագիրը: Եվ այսպիսի շահ մը, հաջողություն մը դատապարտված է Ավետարանով. «Ջի՛նչ օգտիցի մարդ, եթե զաշխարհ ամենայն շահեսցի և զանձն իւր (իր հոգին, իր նկարագիրը) տուծեսցէ»:

Բայց գործի ու փորձի աշխարհին մեջ իրողությունը սա՛ է, վտանգը, փորձանքը հաճելի չէ իր ունե ձևով ու երևույթով: Մնան կացող վաճառականներ կամ գործի մարդիկ կտխրին: Փորձանքը քացած է անոնց աչքերը, անոնք կտեսնեն այն բաները, զորս չէին տեսած հառաջագույն, և կամ տեսած էին և արհամարհած գիտակցաբար: Եվ հիմա տրտում տխուր կնստին, մտմտութ, ապաշավ, ա՛խ վա՛խ: Զգաստացած են, կամ թե զգաստացա՞ծ են:

Անտակ կենցաղի փորձանքները գիճով-ցընող են: Մարդիկ, մանավանդ երիտասարդ մարդիկ, որոնց արյունը եռուզեռի մեջ է, որոնց ջիղերը թարմ են և դյուրաքորք, կիյնան փորձանքներու մեջ, կիյնան հաճախ կամակորությանմբ, արհամարհելով, ո՛չ թե քարոյական խորհուրդներ ու խրատներ, ո՛չ թե բժշկական ազդարարություններ, այլ փորձանավորներուն վիճակները, և ահա՛ թույնը կապական են անոնց երջանկության աղբյուրը, մաքուր արյունը, ցեղեցիկ նկարագիրը: Եվ հիմա անոնք ալ տրտում տխուր են. բան մը կմաշեցնեն գիրենք. ա՛խ, վա՛խ, ապաշավ: Զգաստացած են, արդյոք զգաստացա՞ծ են:

Հավիտենական կրկնությունները կյանքի երևույթներուն: Ավետարանի դասերուն նպատակն է բուժել այս խորունկ ախտը. վերցնել անկման պատճառները որպեսզի մարդիկ ժամանակ չվատնեն կյանքի տխեղծ, տկար, մեղավոր կողմերուն մեջ թարթափելով: Կյանքին անտխեղծ, զորավոր, ամենը կողմերուն հաճույքները, վայելքները, երջանկությունները մարդ կզգա թե վախճան չունին:

Թող տվեք որ կյանքը՝ իր ֆիզիկական պահանջներն ու պայմանները լրացնեն բնական և օրինավոր (նորմալ) ընթացքով: Աշխատեցե՛ք վերցնել չափազանցությունները, գեղծումները, տգիտությունները կենցաղի, վարքաբարքի մեջեն: Մի՛ անարգեք հայրենի տան կարգուկանոնը, մի՛ արհամարհեք փորձառության դասերը, և պիտի տեսնեք, թե ո՛րչափ դուրին է և հաճելի այս կյանքը Ավետարանի լույսերուն և բույրերուն մեջ:

Միքելի հայրդդի, մարդկային մարմինը հրաշալի մեքենա մըն է, ամենեն զորավոր և ամենեն արդյունավոր մեքենա մը: Մարդիկ չեն գիտեր անոր հարգն ու արժեքը: Իրենց ամենօրյա կյանքն է, կարծես, աշխատիլ թե ո՛րչափ շուտ կրճան ավրել, խան-

գարել այդ մեքենան, գիտությամբ և անգիտությամբ նետելով իրենքզիրենք վտանգներու և փորձությանց մեջ:

Եվ կյանքը, որ այդ հրաշալի մեքենային անվթար գործունեության շնորհիվ պիտի ըլլա երջանիկ, կրնա մեկ ակնթարթի մեջ վտանգվիլ, ապականիլ, ոչնչանալ:

Ո՞րը կուգես, սիրելի բարեկամս, ո՞րը: Երջանիկ կյանքը, թե վտանգված, ապականված կյանքը:

Ավետարանին անառակը ինկավ, արհամարհելով փորձառությունը և գոհացում տալու համար իր կիրքերուն. վասն զի իր հարստությունը փնացուց անառակությամբ ապրելով:

Ավետարանին անառակը իր անկյալ կյանքին մեջ կորսնցուց իր հարստությունը միայն: Չկորսնցուց աշխատության ոգին և իր նկարագիրը. նույնիսկ զիջավ խոզարածության, որ ամենեւնի զգվելի զբաղում մըն էր հրեից ազգին:

Ավետարանին անառակը ինկավ, և տեսավ ինկած կյանքին թուր աղետալի կողմերը, կարող եղավ կանգնիլ, չհամառեցավ իր մոլորումներուն և թափառումներուն մեջ, և վերադարձավ հայրենի տունը, ուր ամեն ապահովություն կար իրեն համար. գոնե երջանիկ ծառաներու ապահովություն մը: Բայց ավելին, անակնունելին գտավ հայրենի տան ապահովության մեջ:

Կտեսնե՞ս, թե ո՞րչափ իրական է Ավետարանին կյանքը, և ո՞րչափ պարզ են Ավետարանին դասերը.

...Իսկ եթե ինկած ես, պարտավոր ես ելնել, վերականգնիլ, հայացի արիությամբ վերադառնալու համար քու հայրենի ավանդություններուն:

Հայը վայելած է աստվածային օրհնությանց առատությունը իր մաքուր կենցաղին մեջ, հայրենի տան ինկաբույր մթնոլորտին հավատարմութեամբ մնալով, իր կյանքի թուր երկություններուն մեջ:

Անկման փորձությունները օտարոտի են, կրնամ ըսել, մեր ազգին համար, այս անկումները, որ կշեռվին այսօր անառակի կենցաղին վրա:

Բայց անկման մեջ հայուն վերականգնումն ալ հիանալի եղած է:

Ազգիդ պատմությունը՝ անկման և վերականգնման պատմություն մըն է՝ ազգային-քաղաքական տեսակետով: Եվ հայոց և յուրաքանչյուր հայու անհատական, ընտանեկան և կրոնական կյանքին ու կենցաղին անկումներն ալ անջատ չեն մեր ազգային ճակատագրեն: Մեր ազգը միշտ գուն գործեր է կանգնիլ, վերականգնիլ, իր հայացի նկարագրով:

Մի՛ մոռնար, որ դուք մեկ անդամն ես հայ ընտանիքին: Աշխատե՛ որ չիյնաս, չվտանգվիս: Իսկ եթե ինկած ես, փորձության մեջ ես, մի՛ ամչնար, մի՛ վարանիր, հետևե Ավետարանի անառակին, լավ ըմբոցե Ավետարանին դասերը:

(«Դասեր Ավետարանեն», Զ, Աճթիկաս-Լիբանան, 1986, էջ 19—25):





Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

1. Հա՛յր բազումողորմ, խոստովանիմ առ
Քեզ

Որպէս զանառակ որդին.

Թո՛ղ ինձ ըզմեղս իմ և ողորմեա:

2. Տէ՛ր որ գոթացար ի կինըն Քանանացի,
Գրթա՛ւ և յիս ի մեղաւորս, և ողորմեա:
3. Տէ՛ր, որ դարձուցեր ըզմաքսաւորն
Ի գիտութիւն ճշմարտութեան.
Դարձո՛ւ և զիս ըզմոլորեալս. և ողորմեա:

1. Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ:
2. Մըրըրկեալ ալիք թշնամին ինձ յարուցա-
նէ:
3. Նաւապետ բարի՛ լեր անձին իմոյ ապա-
ւէն:

1. Զրդջըման իմոյ զարտասուս արկանեմ
Առաջի քո Քրիստոս. թո՛ղ ինձ ըզմեղս իմ
Որպէս երթեմն ըզպոռնըկին.
Որ միայնդ ես բազմագութ:
2. Անկանիմ առաջի քո Քրիստոս
Որ հովիտ ես քանաւոր հօտի.
Խնդրեա՛ւ և զիս ըզմոլորեալս.
Որ միայնդ ես բազմագութ:
3. Ըզմեղս իմ ցուցից քեզ Քրիստոս.
Որ բըծիշկդ ես հոգւոց և տէր կենաց.
Բըժըշկեա՛ւ և զիս զհիւանդութիւնս.
Որ միայնդ ես բազմագութ:

1. Դարձո՛ւ զցասումըն քո ի մեռչ,
յաղաղակել հողեղինացս.
Բազմագութ, Տէ՛ր, խնայեա և մի՛ կորու-
սաներ:
2. Կանգնեա՛ զանկեալս ի գլորմանէ՝
Ըզվիրաւորեալս ի թըշնամոյն.
Որ բըծիշկդ ես հիւանդաց՝
Բըժըշկեա զիմ զհիւանդութիւնս:
3. Ի յանցանաց իմոց թախծեալ անձն իմ,
գոչեմ որպէս ըզմաքսաւորն.
Աստուած, քաւեա՛ զիս ըզմեղաւորս:

1. Յոյս իմ ես դու, Տէ՛ր, քափշ յանցանաց իմոց.

Մի՛ անտես առնեք զբողիսումն արտասուաց իմոց.

Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

2. Առ քեզ ապաւիճեցայ որպէս զանառակ որդիք.

Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո.

Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

3. Փըրկեա՛ զիս, Աստուած, ի բազում մեղաց իմոց.

Արա՛ արժանի քոյին սուրբ արքայութեանդ.

Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

* *

1. Մեղք իմ բազում եմ յոյժ, Ծանր եմ քան զաւագ ծովու.

Քանզի քեզ միայնոյ մեղայ.

Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

2. Բա՛ց, Տէ՛ր, ըզդռուն ողորմութեան՝

Որ ողբալով կարդամ առ քեզ.

Քանզի քեզ միայնոյ մեղայ

Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

3. Հեղ յիս ըզգըթութիւնդ քո Բազումողորմ և մարդասէր.

Քանզի քեզ միայնոյ մեղայ,

Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

* *

1. Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ՝

Զի քեզ միայնոյ մեղայ:

2. Առաւել լուս զիս ի տըղմոյ յանցանաց

Աղթիւր թըժըշկութեան.

Եւ ողորմեա՛:

3. Յարեմէ փըրկեա՛ զիս՝

Որ հոգւոց և մարմնոց ունիս իշխանութիւն.

Եւ ողորմեա՛:

* *

1. Մաքսաւորն հառաչանօք ի տաճարին էառ ըզքատութիւն.

Նովին ճայնիւրն և ես գոչեմ՝

Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

2. Աւագակն աղաղակեր ի խաչին՝

Յիշեա՛, զիս Տէ՛ր,

Նովին ճայնիւրն և ես գոչեմ:

3. Անառակ որդին աղերսանօք աղաչէր ըզքեզ.

Հայր, մեղայ յերկինս և առաջի քո.

Նովին ճայնիւրն և ես գոչեմ՝

Ողորմեա՛, ինձ Աստուա՛ծ:

* *

1. Համբառնամ առ քեզ, Տէ՛ր, զաչս իմ.

Նայեա՛ յիս զըթութեամբ քո և ողորմեա՛:

2. Դու ես յոյս և ապաւէն իմ.

Զերծո՛ զիս յորոգայթ մեղաց և ողորմեա:

3. Ապրեցուցիչ իմ և փրկիչ իմ.

Ապրեցո՛ զիս յորոգայթ մեղաց և ողորմեա:

* *

1. Անկանհիւ առաջի քո և խնդրեմ

Զթուլութիւն յանցանաց իմոց.

Մի՛ անտես առնեք, Հայր, զաղաչանս իմ:

2. Աղաղակեմ որպէս մաքսաւորն.

Եւ հեղում զարտասուս իմ առաջի քո որպէս պոռնիկն.

Մի՛ անտես առնեք, Հա՛յր, զաղաչանս իմ:

3. Յաներևոյթ թշնամւոյն պարտեցայ.

Եւ ի գաղտնի նետից բանսարկուին վիրաւորեցայ.

Մի՛ անտես առնեք, Հա՛յր, զաղաչանս իմ:

* *

1. Ալիք յանցանաց զիս այեկոծեց.

Եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեց:

2. Արդ՝ զի՛նչ արարից մեղուցեալ անձամբս.

Ոչ եմ ապրելոց յահագին հրքոյն:

3. Մեղայ քեզ Քրիստոս Որդի Աստուծոյ.

Ծնորհեա՛ զթողութիւն բազում յանցանաց իմոց:





ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԸ (1173—1973)

Այս տարի օգոստոսի 19-ին լրացում է սուրբ Ներսես Ծնորհալու մահվան 800-ամյակը:

Հիշարժան այս տարեթվի առթիվ 1973 թվականի հունվար 16 թվակիր իր գրած սրբատառ կոնդակում Վեհափառ Հայրապետը, նշելով սուրբ Ներսես Ծնորհալու պատմական դերն ու տեղը ԺԲ դարի մեր եկեղեցական տառեգության և հայ մշակույթի պատմության մեջ որպես Հայրապետ Հայոց և մեծավաստակ մատենագիր, արդարորեն հաստատում էր, որ ԺԲ դարը առանց Ներսես Ծնորհալու անվան ու վաստակի «պիտի մերկանար... իր փառքից»:

Արդարև, Ծնորհալին, ինչպես նրան բնութագրել է ԺԳ դարի հայրենաւոր պատմիչ Կիրակոս վարդապետ Գանձակեցին, «առաւելեալ էր իմաստութեամբ քան զյոլովս ի ժամանակի անդ, ո՛չ միայն քան զվարդապետս հայոց, այլև քան զՅունաց և զԱսորոց, այնքան՝ մինչ զի համբաւ իմաստութեան նորա տարածեցաւ ընդ ամենայն ազգս»:

Հայրապետական կոնդակը 1973 թվականը հայտարարում էր հորեյանական տարի և հրահանգում՝ մեծաշուք հանդիսություններով, քովանդակալից, գիտական ուսումնասիրություններով և հոդվածներով ոգեկոչել պայծառ անունը, խնկելի հիշատակն ու մատենագրական քաղմածանր վաստակը հայ եկեղեցու մեծագույն սրբի և եռամեծ Հայրապետի՝ նրա մահվան 800-ամյակի առիթով:

Հայրապետական քարեհան կարգադրությամբ կազմվել է հորեյանական հանձնաժողով Մայր Աթոռում (տես «Էջմիածին» ամսագիր, 1973 թվականի փետրվար, էջ 18), որի վրա պարտականություն է դրվել հորեյանական հանդիսությունների կազմակերպումն ու անցկացումը առաջիկա աշնանը:

«Էջմիածին» ամսագիրը ս. Ներսես Ծնորհալու հիշատակին, կյանքին, եկեղեցական, մատենագրական ու հայրենասիրական գործունեությանն է նվիրելու բացառիկ մի համար, իսկ Մայր Աթոռի՝ Հայաստանյայց եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների բաժինն այս առթիվ հրատարակելու է օտար լեզվով մի ուսումնասիրություն Ծնորհալուն նվիրված:

Ա. Ներսես Ծնորհալին թողել է բազմաժանր, հարուստ մատենագրական ժառանգություն, որն անկողոպտելի փառքն է կազմում մեր մշակույթի պատմության:

«Լճմիածին» ամսագրի սույն համարում մեր ընթերցողների ուշադրությունն ենք ներկայացնում Ծնորհալու հոգևոր րամաստեղծության գեղացիկ գանձերից մեկը՝ «Աշխարհ ամենայն»-ը, որն աշխարհաբարի է վերածել տ. Եղիշե եպիսկոպոս Դուրյանը (տես «Լոյս» կրոնական շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1905 թ., էջ 208):

Ամսագրի հաջորդ համարներում քաղվածաբար կհրատարակվեն Ա. Ներսես Ծնորհալու արձակ և չափածո ստեղծագործություններից այլ հատվածներ:





ԵՐԳ

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԱՆՁԻՆ ԶՂՋԱՑԵԼՈՅ

ԵՒ

ԲՈՂՈՔ ԻԻՐԱՔԱՆՁԻՐՈՑ ԴԻՄԻ
ԽՈՍՏՈՎԱՆԱԲԱՐ

(ՅԱԻԱՐՑ ԻԻՐԱՔԱՆՁԻՐ ՏԱՆ ԴՊԻՐՔՆ ԵՂԱՆԱԿԵՆ ԵՐԻՑՍ՝
ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ. ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ. ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱ.)

Աշխարհ ամենայն, առ իս մայնեցեալ,
ախտակից լերո՛ւք:
Բանամ զշրթունս, բարբառիմ զլեզուսս,
բողոքեմ զանձնէս:

Գող եղէ մեղաց, գտող կորստեան,
գութ ինձ փորեցի:
Դաւեցի զանձն իմ, դաւաճանեցի,
դարամ գործեցի:

Երբեմն էի լոյս, և այժմ եմ խաւար
և ստուեր մահու:
Զիա՛րդ պատմեցից զթիւ մեղաց իմոց,
զի բազում եմ յոյժ:

Էրկինք և երկիր, եկա՛յք, ողբացէ՛ք,
եղկելի զանձն իմ:
Ընդ րեցի զչարս, ընկալայ կամաւ
զհողլս մեղաց:

Թաթաւիմ տղմով, թաթաւիմ ի մեղս,
թոթափիլ չկարեմ:
Ժանտ ախտիւ լցեալ, ժաճաճիտ եղէ
ժամանակս բազումս:

Ի բաց մեկնեցայ ի սուրբ խորհրդոց,
ի բարեաց գործոց:
Լաւ վարկաւ անձն իմ լուսոյն հեռանալ,
լինել ընդ խաւար:

Խորհուրդք չարին խաբեն զհոգիս
խորատոյճ առնեն,
Ծածկեն անդնդօք, ծիծաղին զլորմամբս,
ծանակ զիս առնեն:

Կամաւ կորացայ, կարկամեալ անձամբ,
կանգնիլ ո՛չ կարեմ:
Հուր մեղաց կիզող հրդեհեաց որ յիս՝
հոգևոր բարիս:

Ջաղկեցայ մեղօք, ձաղեցին տեսողքն.
ձանձրացաւ հոգիս:
Ղեւի դառնութեան լժողեալ ի սիրտ իմ,
դամբար իմ շիջաւ:

Ճաշակմամբ մեղաց ճաշեցի գման,
ճոխս աղքատացայ:
Մեռեալ եմ հոգւովս, մոլորեալ մտօքս,
միայն կսւմ մարմնովս:

Յորոգայթ մահու յորսողին անկայ.
յաղթեցայ յաղտից:
Նետից թշնամույն նշաւակ եղէ,
նոր միշտ խոցոտիմ:

Շուրջ պատեալ զինն շունք բազումք եղեն,
շաղախին արեամբս:
Որս եղէ չարին, ոռկանաւ մեղաց
որսացաւ անձն իմ:

Չարաչար վշտօք չարչարի անձն իմ.
չունիմ դադարումն:
Պարտապան գտայ պարտուց յանցանաց
պարտեալս ի մեղաց:

Ջանամ զղջանալ, ջերանիմ դարձեալ,
ջեռնում հրով մեղաց:

Ինքրի կոչեցայ, ոսկայ անուանիմ
ոսմկական վարուքս:

Սիրով ցանկութեան, սաստիկ բարկու-
թեամբ
սիրտ իմ խոցեալ է:
Վիրօք յանցանաց վշտանայ հոգիս.

Վարանեալ շրջիմ:
Տիրեցին ինձ չարք, տարագիր հանին
տիրական գրկացն:
Բաբունոյն բարոյ ըստնական ձայնին
րոտինս ո՛չ լուայ:

Ցանկութիւն չարեաց ցանկալի դիմօք
ցաւեցուց զաչս իմ:
Ինքաբանջիրոց լիսմամբ խտուն ախտից
իւծեալ է հոգիս.

Փութացի՛ր, անձն իմ, փախչիլ ի չարեաց,
փափագիլ բարեաց:
Քեզ միշտ մերձ ծանիր քուն մահու եղեալ,
քննող դատաւոր:

Սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբ
Յիշեա՛, Տէ՛ր, և ողորմեա՛:

ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ

Ա. Թո՛ւ աշխարհ ամեն նայելով ինձի՝
կարեկցի ինձսնն.

Բ. Շուրթերս կշարժեմ որ լեզվովս բողոք
քառնամ անձիս դեմ.

Գ. Մեղքի գող մ'եմ, ո՛վ, կորուստս գտա
գութ մը փորելով.

Դ. Դավ դրի ինձի, ու յարդավանքով
թակարդ լարեցի.

Ե. Լույս էի երբեմն, ու հիմա մահվան
սովերին մեջ եմ.

Զ. Ի՞նչպէս պատմեմ ես մեղքերս բազմա-
թիվ,
մեղքերս պեսպէս.

Է. Երկինք և երկիր, եկե՛ք ողբացեք,
անձս ախտակիր.

Ը. Չարն սեպեցի լավ, ու մեղքերն ամեն
հանձն առի կամով.

Թ. Անոնց մեջ թավալ՝ տիղմով թաթախված՝
հնար չէ ինձ դուրս գալ.

Ճ. Երկար միջոցի ախտով ես լցված՝
ժանտ հոտ բուրեցի,

Ի. Մեկդի ես ըրի անբիծ խորհուրդներն
ու գործերն բարի.

Լ. Ուզելով անշեջ լույսեն հեռանալ՝
մնացի մութին մեջ.

Խ. Երբ հոգիս խաբված չար խորհուրդներն՝
կսուզվի անդարձ

Ս. Անդունդներն ի վար, վրաս կխնդան
ծաղրելու համար.

Կ. Կամալ կորացած՝ չե՛մ կրնար կանգնիլ,
կարկամ ու հոգած.

Ղ. Մեղքի կրակն էր որ այրեց իմ բոլոր
բարիքս հոգևոր.

Ձ. Մեղքը ձաղկեց զիս. տեսնողն այլանցեց,
ձանձրացալ հոգիս.

Ղ. 'Եղին դառնաշուր սիրտս ողողելով՝
ճրագիս մարեց հուր:

Ճ. Մեղքն ու մահն անջատ ճաշակելով
ճոխս՝

Ս. Հոգիս անկենդան ու միաքս է մուրա,
Մարմնով կամ միայն.

- Յ. Յանցը մեղսամած ինկա որսողին,
ախտերով ընկնված.
Ն. Նշավակ դիվսւծ թշնամվոյն ճետին՝
կառնեմ նոր հարված.
Շ. Շուներուն ոհմակ միշտ կշաղախվի
արյունոտվս անհագ.
Ո. Չարին որս եղա, մեղքի ուղկանով
անձս որսաց նա.
Չ. Վիշտեր չարաչար գիս կտագնապեն
ու չունին դադար.
Պ. Մեծ հանցավորի պատժովն ես ինկած
մեղքերու գերի.
Ջ. Կջանամ զղջալ, բայց կիրքի կրակով
կախտանամ դարձյալ.
Ռ. Ռաբբի կոչվեցա, այլ վարքս է ռամիկ,
անունս է ռակա.
Ս. Բարկության բոցեն վառված ցանկու-
թյունք
սիրտս կխոցեն.

- Վ. Հանցանքի վերքեր ցալ կուտան հոգ-
վոյս, ժուռ կուգամ վար վեր.
Տ. Չարերն կգրկեն վրաս տիրելով՝
գիս Տիրոջ զարկեն.
Ր. Րաբունվոյն բարի զվարթարար ձայնին
ականջ ես չդրի.
Թ. Թանկություններ սին ցանկալի տեսքով
աչքերս ցավցուցին.
Ի. Ու բազմապիսի ախտերու հյուսքով
հոգիս կհյուծի.
Փ. Անձն իմ, փութա՛ ալ չարիքեն փախչիլ,
բարիին ցանկալ.
Ք. Մահվան քունդ երբ գա՛ քեզի մոտ գիտ-
ցիր
դատավորն անմահ:
ԵՂԻԾԵ ԵՊՍ. ԴՈՒՐՅԱՆ

Իզմիր

(«Առյա» շաբաթաթերթ, 1905 թ., էջ 208):





ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 1-ին, հիգզաբթի օրը, Մայր Աթոռ ս. Էջմիածնում հանդիսավորությամբ նշվեց «Արքոք Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն» տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը:

Չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարում կատարվում է ս. Վարդանանց նախատոնակը և «Նորահրաշ պսակաւոր» ու այլ շարականների հոգեզմայլ մեղեդիներով փառավորվում ս. Վարդանանց և ս. Ղևոնդյանց պայծառ ու խնկելի հիշատակը:

Հիգզաբթի օրը, առավոտյան, Մայր տաճարում պաշտվում է ժամերգությունը, որից հետո, ժամը 11-ին, սկսվում է ս. պատարագի արարողությունը: Պատարագում է հոգեվոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարությանը:

Զնայած օրվա տխուր և ամպամած եղանակին, հավատացյալների խուռներամ բազմությունը փութացել էր ներկա գտնվելու ս. պատարագին և տոնակատարությանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, շրջապատված քարձրաստիճան հոգևորականներով, առաջնորդվում է Մայր տաճար:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց», ննջեցյալներ, որոնք արհամարհելով օտար բռնակալի մեծ ուժը, դուրս եկան մարտի

դաշտ և իրենց նիզակի ծայրով ազատություն բերեցին հայ ժողովրդին:

Պատարագի տեր հայրը «Մահ իմացեալ անմահութիւն է, մահ ոչ իմացեալ՝ մահ» բնաբանով խոսում է հայրենաշունչ մի քարոզ և վեր հանում Վարդանանց տոնի խորհուրդը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է Հայրապետական մատթանք:

Ժամը 13-ին հոգևոր ճեմարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում ս. Վարդանանց և ս. Ղևոնդյանց հիշատակին նվիրված հանդես: Հանդիսությունը սկսվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով և Հայաստանի պետական հիմնի նվազով:

Բացման խոսքով հանդես է գալիս հոգեվոր ճեմարանի փոխ-տեսուչ տ. Արիս Ժ. վրդ. Ծիրվանյանը: Հոգևոր ճեմարանի սարկավագների խումբը հուզմունք կատարում է «Նորահրաշ պսակաւոր» ու «Արիացեալք» Վարդանանց նվիրված շարականները, իսկ ճեմարանի երգչախումբը՝ «Իմ հայրենյաց», «Բամ փորոտան», «Պլպուլն Ավարայրի» և «Երգ մեռնող հայրենասերի» խմբերգերը:

Բ լսարանի ուսանող Վաչե սրկ. Նալբանդյանը արտասանում է մի հատված Ն. Զարյանի «Զայն հայրենական» պոեմից, Ռ. Պատկանյանի «Հիմի» էլ լոնք» բանաստեղծությունը: Գ լսարանի ուսանող Հակոբ սրկ. Խաչատրյանը, Եղիշեի պատմությունից

վարդանի ճառը՝ Գ. լսարանի ուսանող Ավետիք սրկ. Արարաքյանը: Ա լսարանի ուսանող Կիրակոս Հովնանյանը երգում է Մ. Եկմայանի «Լոռեց: Ամպերը եկան ծածկեցին երկինք»-ը:

Օրվա հանդեսի բանախոսությամբ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի դասախոս Ա. Սահակյանը:

«Հայ ժողովուրդը, դարերի այս համառ ու անխոց ուղեկիցը, իր երեքհազարամյա գոյատևման ընթացքում անցել է պատմության քարքարոտ ճանապարհներ. հաղթահարել անթիվ ու անհամար խոչընդոտներ, բոլոր մարտեր է մղել մի շարք արշավող վայրագ ցեղերի դեմ, որոնք կոտորած ու սարսափ են բերել, լուծ ու արյուն, իրենց զարշապարի ներքո տրորել մեր հայրենի հողը ու սրբությունները:

Այս մոլորակի վրա իցիվ թե գտնվի որևէ ազգ, որն այնքան տառապած ու հայածված, կեղեքված ու խոշտանգված, խարված ու դավված լիցի, որչափ մեր ժողովուրդը:

Բազմաթիվ են այն պահերը, երբ հայ ժողովուրդը կանգնել է անդունդի եզրին, մահվան հետ դեմադդեմ, իր հանճարով երկնած դարավոր գանձերը ձեռքին անօգնական ու լքված, ու մի պահ թվացել է, թե ուր որ է հավետ կկործանվի և ասուրի պես կանցնի մոռացության գիրկը: Սակայն շնորհիվ իր աննկուն և համառ կամքի կարողացել է իր հոգում այնքան ուժ ու ավյուն հավաքել, որ այդ չափազանց վճռական և բախտորոշ պահերին ապրելու խոր հավատը սրտում մահը վերածել է հաղթանակի, Փյունիկի պես իր մոխիրներից հարություն առել և շարունակել է իր աշխարհաբեռ ընթացքը: Նա ոչ թե միայն ապրել է. ապրելու համար, իր ֆիզիկական գոյությունը ապահովելու միայն, այլև այդ օրհասական ժամանակներին եթե նույնիսկ մեկ խաղաղ օր է գտել, ստեղծագործել է, ստեղծել մտքի ու մշակույթի այնպիսի կոթողներ, որոնց արժեքը վաղուց դուրս է եկել Հայաստանի սահմաններից և դարձել համամարդկային:

Ինչպես միշտ, այսօր ևս երախտապարտ համայն հայ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնության ներքո իր գլուխը խոնարհում է ոչ միայն ս. Վարդանանց և ս. Ղևոնդյանց քաջերի, այլև անհայտ ու հայտնի մեր այն բոլոր հերոսների և մարտիկների սուրբ հիշատակի առաջ, Հայկ նահապետից մինչև Հունան Ավետիսյան և Ավարայրից մինչև Սարգսյանապատ, որոնք զեն ի ձեռին ընկան մարտի դաշտում և իրենց գիտակցված մահով կյանք պարգևեցին մեր բազմաշարժար ժողովրդին:

Ավարայրի ճակատամարտը իր բնույթով

դժբախտաբար հայ ժողովրդի համար ոչ առաջինը էր և ոչ էլ վերջինը: Արդ, որո՞նք էին այն դրդապատճառները, որ Հայաստանը դարեր շարունակ դարձավ պատերազմների թատերաբեմ և մեր ժողովուրդը կրեց բազում տառապանքներ:

Նախ և առաջ պետք է ընդգծել, որ ընդհանրապես մարդկային ցեղի պատմությունը միշտ էլ եղել է Կայենի և Աբելի փոխհարաբերության մեմո մի բան: Ընչաքաղցությունը, նախանձը, գոռոզությունը, իշխելու ձրգտումը և մարդկային հոգում բուն դրած նման բազմապիսի հոռի կրքերը մարդկանց ու ցեղերի հանել են իրար դեմ, կոտորել են իրար, քանդել, ավերել ու հրի մատնել մարդկային մտքի ու հոգու միջոցով դարերի ընթացքում ստեղծված մշակույթի անկրկնելի կոթողները, կասեցրել մարդկային մտքի ու ստեղծագործության առաջընթացը՝ և Աստծո ստեղծած դրախտային այս մոլորակը վերածել գեհենի:

Հայ ժողովուրդը կազմավորվել է աշխարհագրական մի այնպիսի դիրքում, որի վրայից էին անցնում ժամանակի քաղաքակիրթ աշխարհի ճանապարհները՝ և մեր Պատմահոր մեմո ասած դեպի արևելք և արևմուտք խաղացողները պետք է անպայման անցնեին մեր դժբախտ երկրի վրայով:

Այդ, ճանապարհների եզրին սճած քաղցրապատուղ ծառի մեմո հայ ժողովուրդը ճղակոտոր էր լինում, իսկ մեր երկիրը դառնում թատերաբեմ արևելքի ու արևմուտքի մեծ տերությունների արյունահեղ պատերազմների:

Այս բոլորի հետ մեկտեղ մեր երկիրը մեծ ուժ էր ներկայացնում Փոքր Ասիայում: Երբ երկու տերություններ կոպում էին իրար դեմ Հայաստանը իր մասնակցությամբ վճռում էր պատերազմի ելքը, նայած որ կողմից էր կոպում և հավասարաբեռ ճարներից մեկի վրա դրված կշռաքարի մեմո իջեցնում էր լծակը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, երբ որևէ աշխարհակալ նվաճում էր Հայաստանը, նա իր անվան վրա հպարտորեն ավելացնում էր նաև Արմենիայի հաղթողի տիտղոսը: Այս մասին վկայում են աշխարհակալների կտրած դրամները, Հայաստանի մասին արևմտաեվրոպական մի շարք թատերագիրների կողմից գրված ողբերգությունները:

Յուրաքանչյուր տերություն ձգտում էր նվաճել ուղղակի հարմար, բարձր ու իշխող դիրք ունեցող Հայաստանը և նրա աշխատանք ու տաղանդավոր ժողովրդին:

Մինչև 440-ական թվականները պարսիկները Հայաստանի վրա իշխելու համարյա հազար տարվա մի երկար փորձ ունեին, սակայն այդ պատկառելի ժամանակի ըն-

թացքում նրանք չէին կարողացել հանգանակորեն ճանաչել հայ ժողովրդի բուն ոգին: Նրանք Հայաստանը արդեն վստահորեն համարում էին Պարսկաստանի մի անջակտելի մասը, իսկ հայ ժողովրդին՝ կիսապարսկացած և մի հարմար առիթով կարող էին նրան էլ դարձնել գրադաշտական, ձուլել իրենց մեջ ու այդ ձևով լուծել հայկական հարցը:

Այս ծրագիրներով ոգևորված պարսկական արքունիքը Հայաստան է ուղարկում կրոնափոխության այն չարաքաստիկ ցամախ-առաջարկը, որը սակայն պատռում է հայ ժողովրդի հոգում հազար տարվա ամբարված ցասման ու ըմբոստության համբերությունը: Պարսկական այս տմարդի քաղաքականությունը ոտքի է հանում հայ ամենահետից ռամիկից մինչև ամենավերջին ազնվականին և սկսվում է հայոց պատերազմը:

Եվ ահա Ասիայի ու Եվրոպայի այս սահմանագլխին իրար են բախվում քրիստոնեությունը և հեթանոսությունը: Ավարայրի բռնությունն այնքան զեղեցիկ ու կենդանի գույներով է նկարագրում այս մարտը, որ մենք գիտակցաբար խուսափում ենք այդ մասին խոսելուց, մեր տկար գրչով այն չաղավաղելու համար:

Բուռն ցատուժով լցված Վարդանը և նրա քաջերը կոչվում էին այնպիսի անձնագործությանը, որ պարսիկները կարծես նոր միայն ճանաչելով հայերին, բնականաբար պիտի ասեին.

—Հայեր, Ահրիմանը տանի ձեզ, կոլո՛ւմ եք, ապրեցեք...

Եվ հայ ժողովուրդն իսկապես ապրեց, որովհետև նա ազնիվ ու բարի էր, այս երկրների տակ ապրելու իրավունք ուներ, բացօթի իր հոգում ամբարված գանձեր կային աշխարհին տալու, երկրի դատարկության իրեն բաժին ընկած մասը իր առանձնահատուկ մասունքներով լցնելու:

Արդյոք Վարդանանք կամ իրենք՝ պարսիկները կմտածեին՞, թե Ավարայրից ավելի սարսափելի օրեր էին բաժին ընկնելու մեզ հետագայում, դեռ պարսիկին հաջորդելու էր արաբը, արաբին՝ ավելի վայրենի սելջուկները, թաթար-մոնղոլները, թուրքերը, որոնք մույնիսկ Հայաստանում իրենց կառուցած գլխն քուրգերով չպիտի կարողանային ջնջել հայոց ազգը և մեր ծառը նորից պիտի դալարեր, որովհետև Վարդանանք ամմահ ոգին ուղեկցում էր մեզ:

Մշտնադյուրություններն ի հայտ բերելու ամենամեծ դատավորը ժամանակն է, որը ցույց է տվել, որ ոչ մի գեներ, ոչ մի իշխանություն, ինչքան էլ այն ուժեղ լինի, անկարող է ստրկացնել թեկուզ իրենից շատ թույլ, սա-

կայն գաղափարապաշտ և պատմական իր առաքելությունն զգացող մի ժողովրդի:

Հայ քաջարի ժողովուրդը դարեր շարունակ իր մահվան գնով բարբարոսներից և հեթանոսներից պաշտպանել ու ապահովել է քրիստոնեության, քաղաքակրթության սահմաններն արևելքում:

Մեծ գրագետները ժողովուրդների գոյատևման հիմնական ազդակներ են համարել միտքը, մշակույթը, տնտեսական կարողությունը և պայքարելու ոգին: Ավարայրից և ընդհանրապես մեր ժողովրդի պատմությունից եզրակացնելով մույն մտահանգման են եկել նաև մեր պատմաբանները և դա աղպես է: Սակայն դարձյալ, ելնելով մեր ժողովրդի գոյատևման փորձից, մենք մեզ հարց տանք. արդյոք քի՞չ են եղել ժողովուրդներ և մեծ տերություններ, հենց թեկուզ արևելքում, մեզ սահմանակից, ինչպես Բաղդադ, Բաբելոնը, Ասորեստանը, Փյունիկիան և շատ ուրիշ աշխարհակալ պետություններ, որոնք ունեցել են և՛ գիր, և՛ բարձր մշակույթ, մտավոր, տնտեսական ու ֆիզիկական մեծ, ահեղի կարողություն և դեռ ավելի ուրիշ առավել հատկանիշներ, սակայն նրանցից ոչ մեկը այժմ գոյություն չունի, բանաստեղծի խոսքերով ասած. անցել են չար մշուշի պես: Ուրեմն, սառը տրամաբանությամբ հաստատվում է, որ մեր չարքաշ ժողովուրդը ունի նաև հոգեկան մի այնպիսի հատկանիշ, որ ուրիշները դրանից գուրկ են եղել:

Դեռևս 1937 թվականին Վեհափառ Հայրապետը Իր «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վեթֆելի վեպին մեջ» գրքում գրել է. «Հայուն մասին ունեցած առաջին տպավորությունը միշտ սխալ է: Միայն երբ գիտես անոր հոգիին խոր ծալքերը հասկնալ, այն ատեն կհամոզվիս որ ան ընդունակ է բացառիկ բարոյական թո՛չքներու: Արդարև, այս չէ՞ արդյոք գաղտնիքը հայ ազգի կյանքի: Դարեր շարունակ կեղեքված, հալածված, կազմալուծված, ստրկացած, կոտորված, ցրված և սակայն հակառակ այս բոլորին ան կապի և կապի լրիվ կյանք մը, մշակութային կյանք մը՝ մտքի, գագաթմի և կամեցողության անսպառ ու միշտ նորոգվող ուժերով:

Վարդանանք իրենց անմահ գործով արժանի են ամեն մի գովասանքի, նրանք սրբազան են մեր եկեղեցու կողմից:

Եղիշեի հանճարեղ պատմության յուրաքանչյուր տողից զգացվում է, որ հայ ժողովուրդը իր կատարելիք գործի բարոյական ու դժվարության գիտակցությունն ունեն, նրա ըմբոստ ոգին համեմված ու օծված էր մեր մախորդ քաջերի անմահ սխրանքներով: Վարդանանք իրենց առաջ ունենին երկարու-

ծիգ դարերի հոլովույթով սրբագործված քաջագործությունների մի մեծ ավանդույթ, փոքր գործով մեծ ու հզոր քանակների դեմ դուրս գալու կամք ու կորովի փորձ:

Մենք հավատում ենք հոգու անմահությանը, հետևաբար գոնե այսօր, այս ցվիդական կամարների տակ թևածուլ են մեր անթիվ ու անհամար հերոսների սուրբ հոգիները, այնպես վարվե՞ք, որ նրանք չխռովեն մեզանից: Եթե ոչ տարվա այս սրբագործված օրը, ապա էլ ե՞րբ կարող ենք փառաբանել նրանց: «Երախտագիտության և գնահատել կարողանալու զգացումն էլ մեծ շնորհք է, որ ամեն ժողովուրդի չի տրված»,— ճշմարտացիորեն ասել է Վեհափառ Հայրապետը:

Միայն անցյալով ապրող ժողովուրդները անխուսափելիորեն բռնում են մահվան ճանապարհը: Մեր ժողովուրդը այս տեսակետից երջանիկ է, շնորհիվ իր մշտանորոգ, ժամանակի շուկը զգալու, վայրկյանը առարկայացնելու մշակութային հրաշալիքներով:

Պատմությունը ցույց է տվել, որ որևէ ժողովրդի ամեն մի սերունդ իր նախնիների նմանողությամբ պարտք ունի կատարելու գալիք սերնդի համար:

Պարոնյանը մի առիթով գրել է. «Ի՞նչ է պատմությունը»,— և ինքն էլ անմիջապես

պատասխանել է. «Եռեղ նայե, առաջդ տես»: Իր մեջ հատորի խորհուրդ ներփակող այս հանճարեղ միտքը մեզանից յուրաքանչյուրի մշահաբանը պետք է լինի, մանավանդ քաղում տառապանքներ տեսած մեր ժողովրդի համար: Պետք է լավ հասկանալ դարի ոգին և երբեք չշեղվել անմահության ճանապարհից, որն սկիզբ դրեցին մեր հերոս, իմաստուն նախնիները: Մի՞թե մենք չպիտի կաշոդանանք գնալ աղ ճանապարհով:

Ամեն ժամանակաշրջան կյանքի պայմանների հրամայականից ելնելով պահանջներ է թելադրում սերունդներին, նմանականորեն մեր շրջանի արագությամբ առաջ ընթացող մշակութային այս վազքը. և վայ այն ժողովրդին, ով ետ կմնա այդ ընթացքից:

Մեզ մնում է հոգու ամբողջ խանդավառանքով և անմացորդ սիրով սիրել մեր քաղցրաբարբառ և հնարույր լեզուն, մշակույթը, վերածնված հայրենիքի յուրաքանչյուր մասունք, որոնք շաղախված են մեր սուրբ Վարդանանց արյունով:

Երանի՜ նրանց, ովքեր ս. Վարդանանց նման կսիրեն իրենց հայրենիքը:

Հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:





ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԻՐՈ ԿՐԱԿՈՎ

Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԱՆՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ ԵՒ ՎԱՐՊԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑՆ ՍԵՐՈՑ

Դ դարու կիսուն պարսից արքայից արքան Հազկերտ Բ սպառնալիքով պահանջեց որ հայերն ուրանան քրիստոնեությունը և ընդունին Զրադաշտի կրոնը:

Հազկերտի նպատակն էր հայերը ծուլել պարսից մեջ, որպեսզի անոնք այլևս կապ մը չունենան հակառակորդ Բյուզանդիոնին հետ:

Այս անիրավ պահանջին դեմ կեցան հայերը:

Ուխտապահ Վարդանանք իրենց կրոնին և հայրենի սրբություններուն պաշտպանության համար 451-ին Ասիայի դաշտին վրա կոիվի ելան վեց անգամ ավելի հզոր պարսկական բանակին դեմ: Վարդանին հետ նահատակվեցան հազար երեսունվեց կողիճներ:

Քաջն Վարդան իր վաթսուհազարանոց բանակը և ժողովուրդը խրախուսելու համար հորդորեց ամենքը հետևիլ Հիսուսի, որ աշխարհի փրկության համար չարչարվեցավ ու խաչվեցավ Գողգոթայի վրա: Հաստատուն կացեք յանշուշտ զօրագլուխն մեր, որ ոչ երբեք մոռացի զգործն նահատակութեան ձերոյն:

Հայոց պատմության ամենեւն քախտորոշ

դրվագներեն մեկն է Վարդանանց պատերազմը:

Հայերն Ասիայի ճակատամարտը կորսնցուցին քայց պատերազմը շահեցան: Անոնք զրադաշտական չեղան, պարսից հետ չծուլվեցան, մնացին և կապրին որպես հայ քրիստոնյա, որպես ջահակիր քրիստոնեական քաղաքակրթության:


Հայոց սպարապետին և ժողովուրդին Տեր Հիսուսի Քրիստոսի հետևիլը, արյան գինով ճշմարտության համար վկայելը հասկանալի է այն իրողությամբ որ, քրիստոնեությունը՝ առաքելական շրջանեն իսկ արմատ գտած, լուսավորչյան շարժումով պետականացած, Ե դարուն ծաղկումի, զարգացման և պողալերումի մեջ էր արդեն:

Ասիկա կհաստատեն հայերեն գիրերուն գյուտը, Աստվածաշունչի թարգմանությունը, կրոնական, աստվածաբանական, իմաստասիրական և պատմական ինքնագիր և թարգմանածո գլուխ-գործոցներու իրականացումը, հայ մշակույթի ոսկեդարուն ստեղծումը:

Վարդանանք խանդավառ սերունդն ու պաշտպանը հանդիսացան այս ամենուն, որ բերքն ու քարիքն են քրիստոնեության:

Հայոց քրիստոնեութենն հրաժարումը և զրադաշտականության հաղթումը կնշանակեր մոռնալ այս ամենը, ուրանալ իրենց լույս

¹ Եղիշե, Վասմ Վարդանայ և հայոց պատերազմից, Վեմեսիկ, 1888, էջ 191:



հավատք, Աստվածը, հայրենիքը, լեզուն, հնավանդ կարգերն ու սրբությունները, որոնք ուրույն պետականության հետ ժողովուրդ մը կը կենն ազգ:

Ահա թե ինչու բոլոր ժամանակներու և ամեն դասակարգի հայերու համար այնքան սիրելի են Վարդանն ու Վարդանանքը:

• •

Վարդանանց վայելած լայն ժողովրդականության անշուշտ որ մեծապես կնպաստե Հայաստանայց եկեղեցիին, որ սրբացուցած է Վարդանանքը՝ իր պաշտպան հավատքի և հայրենյաց և Բուժ Բարեկենդանի հինգ-շաբթից կտրուկ սրբոց Վարդանանքը: «Յիշատակ մեռելոց և տօն ազգային»¹:

Սրբոց Վարդանանց հիշատակին մշտավառ և սրտամոտ լինելուն պատճառներեն մեկն ալ սա իրողությունն է: Վարդանանք և Ավարայրը՝ իրենց նախընթաց և հետագա անցքերով միասին՝ ամենեւնի ավելի հարազատորեն կարտահայտեն հայ ժողովուրդին ազգային-կրոնական նկարագիրն ու ձրգտումները:

Քաջն Վարդան իսկական մարմնացումն է հայուն: Եվ ըստ Դեբլիդ Մ. Լանգի պատկերացումին՝ «Հայը բնության անհատապաշտներն մեկն է, խմոր մը մարդկային ցեղի համակերպող զանգվածին համար: Տրամաբանորեն ան պետք էր վաղուց վերջ տար պայքարի, ինչպէս որ մեռներ շատ վաղուց: Բայց նա մերժեց և դեռ կմերժե անձնատուր լինել: Ահա այս իսկ է բանալին հասկնալու համար բնությունը այս դիմաց-կուն և անպարտելի ժողովուրդին, որուն նպաստը քաղաքակրթության՝ ամենեւին չի համեմատել իր թվական ուժին»²:

Հայը Հիսուս Քրիստոսի և Ավետարանին հանդեպ առաքելական շրջանն մինչև Ա աշխարհամարտն ունեցաւ ամենաանբոս հարում մը:

Հայ քրիստոնեության և քրիստոնեական կրոնը հայուն հետ միացան, նույնացան: Ասոր փաստը մեր հայ քրիստոնյա կոչումն է:

Հայը իր լույս հավատքին, հայրենիքին, պատիվին և սրբություններուն պահպանման և պաշտպանության համար ունի անհավական նվիրում և նախանձախնդրություն:

Վարդանանք լավագույնս կանձնավորեն մեր ազգային քրիստոնեությունները որոնք գեղեցիկ հատկանիշներն են հայոց հոգևոր կյանքին:

Պատմականորեն հայ մշակույթը ծլած,

¹ Օրացոյց Մայր Աթոռի:

² David M. Lang, Armenia: Cradle of Civilization. London. Cr 1. 491թ

ծաղկած և զարգացած է Հիսուս Փրկչին սիրովն ու Ավետարանին լույսովը:

• •

Բանն Աստված իր մեսիական կոչումը բացատրելու համար ի մեջ այլոց կրսն.

Հոր եկի արգանել յերկիր...

Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտել...

Համարիք եթէ խաղաղութիւն եկի տալ յերկիր,

Ոչ, ասեմ ձեզ, այլ բաժինս:

(Ղկա. ԺԲ 48—51)

Քրիստոսի երկրի վրա թողած հուրը բարձրագույն սիրտ կրակն է: Կրակն սերն Աստուծո: Սիրտ կրակը եղբոր, ճշմարտության, արդարության, իրավունքի, ազատության, կրոնքի և հայրենիքի:

Երբ բարձրագույն սիրտ վառի կրակը ժողովուրդի մը հոգիին մեջ, անկա կենս, կեփի, ամեն գինով կձգտի հասնիլ իր լինելության նպատակին:

Մկրտությունը խորհրդական լվացումն է զատ նշանակ է չարչարանքի, տառապանքի: Մկրտություն է նաև կենդանի կամ մարտիրոսական վկայություն տալու հավատքի և հայրենիքի համար: Ոչ ծիսական մկրտությունն ալ կբարձրացնե և կարիացնե զայն ընդունողը:

Ահա սրբոց Վարդանանց հասկացողությունը Հիսուսի ակնարկած հորին և մկրտության, որ կմղե գիրենք գերադասել այլ բաժինները, իմա նվիրում, անձնուրաց գոհողություն, բաժանում սիրելիներե, ստացութենե և վայելքներե (Մրկ. Ժ 28—31):

Վարդանանք Փրկչին խոսած մեռնող ցորենահատիկին քաղմիցս արդյունաբեր լինելուն առակովը (Հվր. ԺԲ 24—28) համոզված էին թե «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»³:

Այս հավատքով ինկան Սարգսարապատի նահատակները, որոնց հուշարձան արձանագրությունը համեմատու է վերինին:

«Անմահ է այն ժողովուրդը, որ ապրելու մտադրությամբ նահատակվել է դարերով, բայց մեռնելու մտադրությամբ չի ապրել թեկուզ մի օր»:

Ինչպէս Վարդանանց նույնպէս Սարգարապատի քաջերուն համար տեղին է Եղիշեի հավաստումը: «Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի նմանէ, իսկ որ գիտէ՝ զմահ՝ ոչ երկնչի ի նմանէ»⁴:

⁴ Եղիշէ, անդ, էջ 28:

⁵ Անդ:

Մահվան և կյանքի այս հասկացողությամբ Ավարայրի և Սարդարապատի հերոսները փորձվեցան Հիսուսի երկրի վրա թողած կենդանի հուրովը, մկրտվեցան կրակով և վկայեցին արյունով:

Ահա խաղաղության տեղ աճոճ վիճակված «այլ բաժինները», գորս իրենց ուներուն առին իբր գլուծ քաղցր և բեռն փոքրոգի» (Մտթ. ԺԱ 30):

Աճոճ հետևեցան Հիսուսի որ բացարձակ Գվիրում և աճճնորացություն կպահանջե:

«Եթե ոք կամի զկնի իմ գալ, ուրացի զանձն և առցե զխաչ իր հանապազ և եկեսցե զհետ իմ: Զի որ կամի զանձն իր կեցուցանել՝ կորուսցե զնա, և որ կորուսցե զանձն իր վասն իմ՝ կեցուցե զնա» (Ղկս. Թ 29—25):

Հիսուսի օրինակին և Ավետարանի այս հատվածին վրա հիմնված է Ավարայրի և Սարդարապատի ճակատամարտերուն իմացյալ մահով և ապրելու նպատակով նահատակվելու առաքինությունը:

Այս համոզումով է որ Սանատրուկ արքային դուստրը ս. Սանդուխտ՝ Քրիստոսի սիրուն կրակովը հրեղինացած կհրաժարի ամեն վայելքն և կնահատակվի ըսելով՝

Հայր քան զքեզ սիրելի
24ա ոգիկ մ'իճճ հերկրի.
Բայց երբ զՄատնածն իմ ճանչցա
Սեր քան զամեն մեծ գտա...
Հիսուս իմ հայր, իմ փեսա,
Այս իմ վերջին խոսքն ըլլա՛:

Այս զգացումով ս. Հռիփսիմն կմերժե Տրդատ Գ-ին ամուսնության առաջարկը, թագուհի չի լիներ հայոց արքային, կհարսնանա Քրիստոսի իր քառասուն կուրսերուն հետ՝ հարսնաքույր առնելով Խոսրովիդուխտ և Աշխեն:

Աճծինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի
Երկնաւոր նահատակք և կուսանք իմաստունք՝:

Միննույն սիրո կրակեն կայծ կառնեն Լուսավորչի կանթեղն աճմար՝ որ՝

Հայոց մթնած երկնքից
Կախ է ընկած առանց պարան

Արագածի կատարին,
Եվ խորանից հսկայական
Լույս է տալիս աշխարհին՝:

Միննույն սիրո կրակին թոցովը լուսեղի-նացան Տրդատ և Վռամշապուհ արքաները, Ներսես և Սահակ Հայրապետները, Մաշտոց և Եղիշե վարդապետները, Եզնիկ և Աճառաթ փիլիսոփաները, Նարեկացի և Շնորհալի սուրբերը, Ֆրիկ և Քուչակ աշուղները, Ալիշան և Դուրյան քանաստեղծները, Սրվանձտյանց և Հովսեփյան Գալսեղիները, Սեակն ու Դեմիրճյանը, որոնք Վարդանանքը Պարոյրի Աճլեղի զանգակատունին հետ դեռ ձեռքն ձեռք կհափշտակվին:

Ուստի զարմանալի չէ տեսնել որ Լուսավորչի կանթեղը և հայրենասիրության հուրը իբր սիրո կրակ վառին ինչպես Շավարշան և Սարդարապատի դաշտերուն նույնպես Երևանի կից Միժեռնակաքերդի բարձունքին կոթողացող մեր քյուրավոր նահատակաց հուշարձանին մեջ, իբր նշանակ հավատքի և հայրենասիրության, հույսի և աճմահույության:

• •

Վարդանանք կյանքով և գործով հաստատեցին թե իրենք ճշմարիտ վկաներն են իրենց լույս հավատքին և հայրենիքին: Ավարայրն ու Սարդարապատը պատմություն են: Վարդանանք իմացյալ մահով աճմահացան:

Սարդարապատի հերոսները ապրելու նպատակով նահատակվեցան հետևելով հավատքի գորագույնին, որ իբր լույս աշխարհ եկավ և ճշմարիտ սիրո կրակը թողուց երկրի վրա:


Եկեք հաղորդվինք սրբոց Վարդանանք խորհուրդովը, որ զիրենք հրեղինացնող կրակն է սիրո և Գվիրումի, որպեսզի կարենանք շարունակել Ավարայրի և Սարդարապատի գոյամարտերը բոճության, ուրացումի և ալլասերումի դեմ «վասն հաւատոյ, վասն հայրենեաց»:

Միլան

• Հովհ. Թումանյան:

⁶ Հ. Ղ. Ալիշան:

⁷ Շավարշան:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Փետրվարի 25-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

..

Փետրվարի 27-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատող տիկին Էմմա Բարսամյանը կարդում է հետաքրքիր դասախոսություն՝ «Տիեզերքի կառուցվածքը ժամանակակից գիտական լույսի տակ» թեմայով:

..

Մարտի 4-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Մայր տաճարում, փակ սեղանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը:

«Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով Մեծ պահքի և ապաշխարության խորհրդի կարևորությունը հավատացյալի հոգևոր ու քարոյական կատարելության ճանապարհի վրա:

..

Մարտի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր տաճարում առավոտյան պաշտամունքին

կից սկսվում է «Զկարգ ապաշխարության» և Արևագալի հանդիսավոր ժամերգությունը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

..

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում ս. Էջմիածնի միաբան տ. Ոսկան ծ. վրդ. Գալթակյանը:

..

Մարտի 11-ին, կիրակի.—Քառասնորդական պահոց (Արտաքսման կիրակի).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ադան վրդ. Բալեղյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Տիրան արք. Կյուրեղյանը՝ «Որ զօրենս սրբութեան պահոց նախ ի դրախտին աւանդեցեր» (Շաբական) քնարանով:

..

Մարտի 18-ին, կիրակի.—Քառասնորդական պահոց (Անառակի կիրակի).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը՝ «Հայր, մեղայ յերկինս և առաջի քո» (Ղուկ. ԺԵ 18) քնարանով:

Մարտի 24-ին, շաբաթ.—Տօն է սրբոյն Գրիգորի Լուսաւորչիւն մերոյ սոսկալի չարանացն և մտին ի վիրապն.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ալան վրդ. Բալեղոյանը:

Նույն օրը հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի է գնում Խորվիրապ, ուր ս. պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը և քարոզում ս. Գրիգոր Լուսավորչի առաքելական և քարոզչական գործունեության մասին Հայոց աշխարհում 301—325 թվականներին:

Ս. պատարագին ներկա են լինում հոգևոր ճեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմը և բազմաթիւ ուխտավորներ:

Նույն օրը, երեկոյան, Մայր Աթոռ է ծաւանում Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը, որը մեկնել էր Լոնդոն՝ ստանալու փիլիսոփայության դոկտորի իր վկայականը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանին այս փայլուն հաջողության առիթով և բարեմաղթում նրան նորահոր հաջողություններ իր ապագա եկեղեցանւթեր գործունեության ճանապարհի վրա:

Մարտի 25-ին, կիրակի.—Քառասնորդական պահոց (Տնտեսի կիրակի).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Ոսկան ծ. վրդ. Գալթալյանը՝ «Անմիտ, յայտ գիշերի գոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն ո՛ւմ ինճիցի» (Ղուկ. ԺԲ 20) բնաբանով:





ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարեհամ կարգադրությամբ և Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի հրավերով, 1972 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 1973 թվականի հունվարի 28-ը հովվական այցելությամբ Բուենոս-Այրես էր գտնվում Մայր Աթոռի միաբան և Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը:

Ստորև մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում տ. Նարեկ վարդապետի հովվական այցից որոշ լուրեր, արգենտինահայ մեր ազգային-եկեղեցական կյանքի մասին:

Տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը հետևյալ Արգենտինայի հյուրընկալ հողի վրա ապրող հայ ժողովրդի պանդուխտ զավակներին է հաղորդել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու հայրական ողջույնները և վերածնված հայոց աշխարհի խանդավառ լուրերով մխիթարել հայրենակարոտ հայորդիների սրտերը:

Սկիզբի մեր ազգային-եկեղեցական կարեվորագույն և մեծագույն թեմերից մեկն է Արգենտինայի տիրախմած թեմը իր հայկականությամբ, իր հոծությամբ, իր կազմակերպվածությամբ, թեմ, որ ապրում է եկեղեցական, կրթական, մշակութային, հայրենասիրական եռուն կյանքով, շնորհիվ արգենտինյան քաղաքում կառավարության հոգածությանն ու հովանավորությանը, հայրապետական պատվիրակ սրբազան հոր ու կենտրոնական վարչության եկեղեցաշեն ու կրթանքներ ջանքերի:

Արգենտինահայ համայնքը, որն իր ծո-

ցում հաշվում է ավելի քան 80.000 հայ ազգաբնակչություն, կենտրոնացած մայրաքաղաքում և Գորդոբայում, առավելապես կազմված է կիլիկեցիներից, Կ. Պոլսո հայերից և ռումինահայերից:

Բուենոս-Այրեսում կան չորս փառավոր հայկական եկեղեցիներ. ս. Գրիգոր Լուսավորիչ, ս. Գևորգ, Վարագա ս. Խաչ և ս. Հակոբ, բոլորն էլ մասամբ ապահովված են հավատավոր և պաշտոնասեր հոգևոր հովիվներով և եկեղեցական խորհուրդներով:

Թեմում բարձր մակարդակի վրա է դրված նաև նոր սերնդի հայեցի ու քրիստոնեական դատախազական գործը, շնորհիվ ստեղծված երկրորդական և միջնակարգական մակարդակի ուսումնական ցանցի:

Անցյալ տարի է ավարտվել ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կողքին կառուցումը երկրորդական հայ վարժարանի մեծ շենքի, որի հիմնարկների օրհնությունը կատարել է Հայոց Հայրապետը 1988 թվականի տոնանք, երբ հովվապետական այցելությամբ գտնվում էր Բուենոս-Այրեսում: Անցնող չորս տարիների ընթացքում պատվիրակ սրբազան հայրը, կենտրոնական վարչությունը և թեմի ողջ հայ ժողովուրդը ոչինչ չեն խնայել՝ քարծրացնելու համար կրթության այդ նոր օջախի շենքը, որի պաշտոնական քացումը կատարելու համար դարձյալ հրավիրվել է Հայոց Հայրապետը այս տարվա ամռանը:

Թեմում գործում են բազում հայրենակցական, մշակութային, սպորտային, երաժշտական, երիտասարդական կազմակերպություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր համապատասխան գեղեցիկ և բոլոր հարմարություններով օժտված ակումբները: Չա-

վազանց մխիթարական է արձանագրել հայ երիտասարդության կազմակերպվածությունը, երիտասարդությունը, որը խանդավառ է հայ մշակույթով և իր ժողովրդի ստեղծած հոգևոր ու մտավոր զանգեղությամբ:

Խեմում գոյություն ունի նաև հայ մամուլ, որը պատվով է կատարում իր առաքելությունը:

Թեմը հայրենասիրական սրտագին կապեր է պահպանում մշակութային հողի վրա մայր հայրենիքի հետ: Հաճախ այստեղ են այցելում հայրենական գիտության, արվեստի և այլ բնագավառի ներկայացուցիչներ, որոնց ներկայությունը այստեղ ստեղծում է ջերմ հետաքրքրություն դեպի հայրենի մշակույթն ու գիտությունը:

Հովվական իր այցելության օրերին տ. Նարեկ վարդապետը քանիցս պատարագել է ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդաճիստ Մայր եկեղեցում և Բանին կենաց քարուղւյթամբ մխիթարել հավատացյալներին:

Տ. Նարեկ վարդապետը այցելություններ է տվել նաև տեղի արգենտիճյան եկեղեցական և պետական իշխանության ներկայացուցիչներին՝ հաղորդելով Նորին Արքունւյան ողջույնները:

Հունվարի 5-ին տ. Նարեկ վարդապետը այցելություն է տալիս Բուենոս-Այրեսում արտաքին գործերի մինիստրությանն առնալով կրոնական գործերի տեսուչ դոկտ. Ինոքենտո Ռոման Բրավոյին՝ Երան հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույներն ու օրհնությունները: Կրոնական գործերի հարգելի տեսուչը ջերմորեն ընդունելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, զրույցի ժամանակ ասում է. «Ն. Արքունւյան Վազգեն Ա կաթողիկոսը մեր ժամանակի քրիստոնեական եկեղեցու մեծագույն հոգևոր պետերից մեկն է, որի անձնավորության մեջ մարմնավորվում է հայ ժողովրդի հոգեվոր ու իմացական քարեմասնությունները: Նորին Արքունւյան անձով և Բաբգեն արքեպիսկոպոսի միջոցով այստեղ, Բուենոս-Այրեսում, մենք ավելի և ավելի ենք սիրում տաղանդավոր հայ ժողովրդին: Ես այնքան մեծ հաճությամբ եմ լսել, որ Նորին Արքունւյանը դարձյալ այստեղ են հրավիրել Արգենտինայի մեր քարեկամ ու պատվական հայերը: Լսել եմ, որ Նորին Արքունւյանը քարեհաճել է ընդունել այդ հրավերը: Մենք պատրաստ ենք սիրով ու հարգանքով դիմավորել Նրան: Երբ, հարգելի վարդապետ, վերադառնաք ս. Էջմիածին, խնդրում եմ իմ հարգանքներս հաղորդել Նորին Արքունւյանը և ասել, որ ես մեծ սիրով եմ պահում ս. Էջմիածնի այն փոքրիկ հիշատակ-խաչը,

որն ինձ նվիրել է Նորին Արքունւյանը իր վերջին այցելության ժամանակ այստեղ»:

Հունվարի 29-ին տ. Նարեկ վրդ. Շաքարյանը վերադառնում է Մայր Աթոռ՝ հովվական իր այցելությունից անմոռանալի հուշերով ու տպավորություններով. «Ամեն անգամ տարբեր թեմաների շուրջ ինչ գրույց կամ հանդիպում էլ տեղի ունենա, դպրոցականի թե եկեղեցականի, մտավորականի թե առևտրականի, մանկավարժի թե հասարակական գործչի հետ, քոլորի խոհերն ու մտորումները դառնում են Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Հայոց Հայրապետի գործունեության և վերածնված հայոց աշխարհում ապ-



Բուենոս-Այրես. տ. Նարեկ վարդապետը և տ. Շավարշ քահանաճ Ապրիլյան եղևոճի հուշարձանի առջև

րող ու ստեղծագործող մեր հայրենաքնակ ժողովրդի պատմական նվաճումների և Երապայծառ ապագայի մասին», — եզրակացնում է տ. Նարեկ վարդապետն իր ուղևորության հուշերի մեջ՝ շնչտելով նաև հայրենիքսիրույթ կապերի է՛լ ավելի սերտացումն ու ամրապնդումը՝ ի շահ մեր եկեղեցու և հայրենիքի:



ԻՐԱՔԻ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐՈՒՄ

Վեհափառ Հայրապետի հրահանգով և Իրաքի հայոց թեմի առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանի ու Եգիպտոսի հայոց առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպս. Չինչիճյանի եղբայրական հրավերով 1978 թվականի հունվարի 9-ից մինչև փետրվարի 9 օրերին Մայր Աթոռի միաբան և Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը հովվական այցելության է գնում Իրաքի ու Եգիպտոսի հայոց տիրախմամ թեմերը՝ տանելով իր հետ Ամենայն Հայոց Հայրապետի սերն ու հայրական օրհնությունները՝ հայրենիքից հեռու ապրող մեր բազմաթիվ պանդուխտ հայրենակիցներին:

Հունվարի 9-ին տ. Տիրայր սրբազանը ժամանում է Բաղդադ, ուր նրան հարգանքով դիմավորում են Իրաքի թեմի հայոց առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանը, թեմական, եկեղեցական խորհուրդների անդամները և հավատացյալների բազմությունը:

Տ. Տիրայր սրբազանը Բաղդադում եղած օրերին այցելում է տեղի հայկական հաստատությունները, հետաքրքրվում թեմի եկեղեցական-ազգային, կրթական-հասարակական կյանքով: Նա այցելում է տեղի հայկական ազգային վարժարանը, ուր սովորում են 1500 աշակերտներ, ծերանոցը, մտերմիկ զրույց ունենում այս հաստատու-

թյունների ղեկավարների հետ, իր ելույթներով ոգևորում ու հուսադրում նրանց:

Հունվարի 8-ին, ս. Ծննդի օրը, սրբազանը պատարագում է և քարոզում Բաղդադի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ուր հավաքվում է հայ հավատացյալների մի խումբ ներամ բազմություն:

Հունվարի 9-ին տ. Տիրայր եպիսկոպոսը տ. Ասողիկ սրբազանի հետ այցելության է գնում Բաղդադից 550 կմ հեռավորության վրա գտնվող հայաշատ Բասրա քաղաքը և «Հրաշափառ»-ով մոտք գործում ս. Աստվածածին եկեղեցին: Այստեղ նա լինում է հայկական վարժարանում, մանկապարտեզում, հայ երիտասարդաց ակումբում և իր հայրենաշունչ ելույթներով խանդավառում հայությանը, նրանց պատմում ս. Էջմիածնի, վերածնված հայրենիքի և մեր ժողովրդի մասին:

Հունվարի 14-ին սրբազանը այցելում է Մուսուլի ս. Էջմիածին եկեղեցի, պատարագում, Բանին կենաց քարոզով մխիթարում տեղի հայությանը: Սրբազանն այցելում է նաև Իրաքի Քերքուկ և Զախո քաղաքների հայ համայնքներին, ծանոթանում հայապահպանման դժվար, սակայն պատվաբեր գործերի հետ, հուսադրում նրանց՝ հաղորդելով Հայոց Հայրապետի օրհնությունները:

Հունվարի 19-ին տ. Տիրայր եպիսկոպոսը հրաժեշտ է տալիս Բաղդադի հայությանը

և մեկնում Բեյրութ: Այստեղ երեք օր մնալուց հետո, հունվարի 28-ին, ժամանում է Կահիրե և դիմադրվում տեղի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Զավեն եպս. 2-ին չինյանի և այլ ազգայինների կողմից: Կահի-

րոս եկեղեցի, ողջունում ժողովրդին և հայտնում Հայոց Հայրապետի օրհնությունները: Այստեղ ևս սրբազանը տալիս է մի շարք այցելություններ, խոսում ու ոգևորում բոլորին:



Կահիրե. տ. Տիրայր, տ. Զավեն եպիսկոպոսները և «Ճնորհալի» կրգչախումբը

րենում զանված օրերին սրբազանն այցելում է տեղի «Արև», «Ջահակիր» և «Հուսարներ» հայկական թերթերի խմբագրությունները, Գալստյան, Նուբարյան վարժարանները, «Այծենճիկ» հայոց ծերանոցը և այլ հաստատություններ, ծանոթանում այս հաստատությունների հարկերից ներս կատարվող ազգանվեր, կրթական աշխատանքների հետ, նրանց հաղորդում վեհափառ Հայրապետի օրհնությունները:

Հունվարի 28-ին սրբազանը պատարագում և քարոզում է Կահիրեի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Փետրվարի 2-ին տ. Տիրայր սրբազանը տ. Զավեն եպիսկոպոսի հետ այցելության է գնում Ալեքսանդրիայի հայ համայնքին: Առաջնորդվում է տեղի հայոց ս. Պողոս-Պետ-

Փետրվարի 4-ին պատարագում և քարոզում է Ալեքսանդրիայի հայոց ս. Պողոս-Պետրոս եկեղեցում:

Փետրվարի 12-ին տ. Տիրայր եպս. Մարտիրոսյանը, ավարտելով իր հովվական այցելությունը, վերադառնում է Բուխարեստ:

Սրբազանն ուրախությամբ հատառտում է, որ ինչպես Իրաքի, այնպես էլ Եգիպտոսի հայոց թեմերում հայ ժողովուրդը խոր հարգանք և ակնածանք ունի ամենայն հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածնի և նրա գահակալի նկատմամբ: Հայ ժողովուրդը միշտ և ամենուրեք գիտակցում է հայ եկեղեցու անխախտ միության կարևորությունը, սիրում է իր վերածնված հայրենիքը և հպարտ է այնտեղ կատարվող ազգաշեն ու վեհ գործերով:





ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆՔԻ ՕՐԵՐ

(Նյու-Յորք, 1972 թ., 88 էջ, հեղինակ՝ Շեն-Մահ)

«Վանքի օրեր» խորագիրը կկրե բանաստեղծություններու այն հատորը, որ մեզի կուգա **Շեն-Մահ** ծածկանունով բանաստեղծեն: Այս խորհրդավոր անունը կրող հեղինակը Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի միաբանության անդամ մախկին Թորգոմ վարդապետ Մանուկյանն է, այժմ Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոսը: Հատորը կամփոփե մեծ մասամբ, ինչպես վերագրին ալ կթելադրե, վանքի կյանքեն ու միջավայրեն քաղված ներշնչումներ: Արքագանի գրական-բանաստեղծական գործունեության սկզբնավորությունը կերթա մինչև քառասունական թվականներու առաջին տարիները, երբ Երուսաղեմի հայոց պատրիարքության պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրի մեջ կսկսի երևնալ **Շեն-Մահ** ստորագրությունը խորհրդապաշտ տրամադրությամբ համակված ինքնատիպ բանաստեղծություններու տակ: Արդարև, ուշադրության արժանի երևույթ մըն է միշտ այդ թվականներուն բանաստեղծի մուտքը սիյուռքահայ գրականության սեմեն ներս: **Շեն-Մահ** ընթերցողներուն պաշտոնապես կներկայացվեր վանքի գրականության ուսուցիչ և արևմտահայ գրականության մեծ երախտավոր Հ. Օշականի կազմած «Հայ գրականություն» դասագիրքով: Օշական, ձայն ու կշիռ ունեցող քննադատ, սիյուռքահայ նորագույն սերունդի բանաստեղծներուն մեջ կհայտնաբերեր Շեն-Մահը, ի հեճուկս գրական ասպարեզի վրա նկատվող ընթացիկ ճաշակներուն և կաղապարյալ ըմբռնումներուն...:

Ս. Հակոբյանց վանքը, որ անցած են բանաստեղծի պատանությունն ու երիտասարդության որոշ տարիները, ճշմանակալից դեր մը վստաղար սիյուռքահայ գրքի ու գրա-

կանության զարգացման մեջ, ինչպես նաև իր նպաստը կրերեք տոհմային դաստիարակությամբ մտավորականներու պատրաստության միգրում: Թորգոմ պատրիարք Գուշակյանի ջանքերով և անոր հմայիչ ու պատկառելի անձին ներգործությամբ ստեղծված էր գրականության ու մշակույթի պաշտամունք մը, որուն շունչով ու ջերմությամբ սոգորված միջավայրը, ավելի հետո՝ գրագետ-քննադատ Հ. Օշականի, արվեստաբան-իմաստասեր Ծ. Պերպերյանի և ներկա պատրիարք-բանաստեղծ Եղիշե արքեպ. Տերտերյանի (Եղիվարդ) անմիջական ազդեցությամբ վանքը վերածած էր տեսակ մը գրական կեդրոնի: Հոն մտնող-ելլող ամեն պատանի իր մեջ կկրեր մասնիկ մը այդ պաշտամունքի ոգին...:

Եվ, ահավասիկ, 1938 թվականին էր, որ Շեն-Մահ առաջին անգամ կերևեր Թորգոմ պատրիարքի մահվան նվիրված «Սիոն» ամսագրի հատուկ թիվին մեջ, որուն կմասնակցեին նաև իր սարկավագ ընկերները մեծ հոգևորականին և մտավորականին կորուստը ողբացող իրենց գրվածքներով: Ինչ որ ճշմանակալից էր այն ատեն, լույս տեսած բոլոր այդ չափածո գրվածքներուն մեջ ամենեն ավելի սրտագրավն ու հուզիչը, ամենեն ավելի խոհ և բանաստեղծական տրամադրություն արտահայտող քերթվածը Ավետիք սրկ. Մանուկյանի ստորագրած բանաստեղծությունն էր («Օրերդ որո՞ւ...»), որ արդեն հասունցած և կազմավորված բանաստեղծի մը գոյությունը կհայտնեք:

Այդ խոստումնալից ու սրտառույ լքերթվածեն վերջ, Թորգոմ արքեպ «Սիոն» ամսագրի էջերուն մեջ տակավ պիտի գտնեք բանաստեղծական իր ուրույն դիմագիծը, պիտի դառնար Շեն-Մահ և պիտի կոչվեր

անկեղծ շեշտերով երգելու իր պատարագ-
յազ հոգիին տրտմածոր ապրումները, որոնք
պիտի կազմեն Երկա հատորին բուլանդա-
կությունը:

Ամեն Երեք Կառքի օրեր» գիրքը աշ-
քի կզարնե հատկանշական քարեմասնու-
թյամբ մը. առիկա բանաստեղծի ներքին
աշխարհին միության վկայությունն է, աշ-
խարհը մը, որ գիրքին տված է համոզակա-
նության ուժ: Մենք կտեսնենք միևնույն հո-
գին իր վիշտերուն ու ցնծություններուն, իր
կարոտներուն և երազներուն մեջ. հա-
կադիր վիճակներ ու ապրումներ, որոնք,
սակայն, ներքին ներդաշնակությամբ կյրա-
ցեն ու կամբողջացեն գիրքը: Այդ միևնույն
հոգին է դարձյալ, որ գիտե իր անկեղծ
հուզումներն ու հոգեկան ապրումները հա-
կալիքով զսպությամբ ու չափավորությամբ,
անձնատուր չըլլալ իր տարերքին: Բանաս-
տեղծի նյութերու աշխարհը վաճառ ու վա-
ճականներն են, մարդկային ալապես շահե-
կան ու իրավ ապրումներուն առարկան, մի-
ջավայրը, ուր կուգան միանալու մանկու-
թյուն, պատանություն, բնություն, սեր,
հայրենիք և այլ առնչակից իրողություններ,
զորս հեղինակը կշնչավորե իր հոգիի միև-
նույն ջերմությամբ ու խանդաղատանքով:
Բանաստեղծին քնարական հերոսը միշտ
«երիտասարդ ու դժգույն աքեղաներ»-ն են,
որոնք իրենց առանձնացման ու մեկուսա-
ցումին մեջ՝ տառապանքի կամավոր որդե-
գությամբ, անհիմանալի խորհուրդ մը կըզ-
գենուն ամեն անգամ, որ դիտող աչքին նայ-
վածքն իյնա անոնց վրա: «Նոճին», «Վաճ-
քի բակին», «Վաճքի տղա», «Քալե, հոգի,
քու ճամփեդ», «Նարտյաշ որան օրերուս»,
«Տեսիլք-ներկան» և, վերջապես, «Լուսն
ծաղիկ» և «Ըսե, ինչպե՞ս լեցնել» քերթվա-
ծներն յուրաքանչյուրը թեև առանձին և
տարբեր պահերու ծնունդ, բայց զգալու-
թյամբ ու հոգեկան անդրադարձմամբ բոլորն
ալ կմիանան ու կխմբավորվին: Անոնք հո-
րինված ըլլան այսպեանկան եղանակով,
թե ուղղակի իմաստով, միշտ կենդանական
վշտի ու տխրության ալեծուսի տրամադրու-
թյամբ մը, որ անդենականի երջանկության
կարոտն է այս աշխարհի վրա: Մենք այդ
քերթվածներուն եղերականությունը գրեթե
չենք կրնար հասկնալ մեր աշխարհիկ մար-
դու ընթացիկ չափանիշներով, մինչ անոնց
տողերուն տակ թաքչած Տեսիլքի մարդու
խոսվածքներն ու անձկությունները կլուսավոր-
վին, և մեծավորի, մեծակյացի անոր և-
ռանձնությունները կիմաստավորվին դեպի
իր իդեալը տանող ճամփուն պայծառ հա-
րացույցներով:

Հուլիս խողացքը լույսն'ը երբոր թափե
վերերեն,

Գիշերին մեջ, մեղմ ու խոր երգեր զայն
մերթ կցողեն...
Ճա՛վ մը թաքուն յո՛ւ աղոթք՝ վաթթեր
մարմինն են անոր...

Մինչ շուրջն իրեն մութ ծառեր գլուխ կճո-
ճեն դառնօրոք,
Վաճքի բակին, մեկուսի, ըսես դեռ նոր
արեւա,
Հավերժությունը գրկած, լուռ, երազին իր
կերթա...

Անոնք, «արեւաները», սակայն, կյանքեն
հրաժարած և կյանքը ուրացողներ չեն, այլ
զաղափարական լավագույն կյանքի մը տեճ-
չացողներ: Այս առումով, հանուն տեսա-



«Վաճքի օրեր» գրքի շապիկի առաջին էջը

կան կյանքի մը բերկրանքին, այս աշխարհի
մեջ անոնց ողջակիզումը ուրախ ու ցնծուն
երգի նման «Շեն-Մահ» մըն է, զվարթ մա-
հացություն մը ա՛յս աշխարհի համար, որ
վեհացնող ու վսեմ բան մը ունի իր մեջ և
անով իսկ «իմաստ» և «խորհուրդ» կրթվա-
ղակե («Վաճքի բակին»):

Կտեսնենք, ուրեմն, որ վաճքը կյանքի
պայքարեն զինաթափ եղած հոգիներու հա-
մար փախուստի ու փախուտականի ապաս-
տարանը չէ, ուր գային անփութ երանու-
թյամբ իրենց օրերն անցնելու մեղկ իր աճ-
աշխատ մարդիկ: Այլ, ընդհակառակը, լույ-
սին և երազին տենչն ունեցող հոգիներու

սրբարանն է, ուր քարձրիմ ու քարձրագոյնիմ համար երազ, ձգտում և կիրք կայա-հանգչիմ, մտքի կուրության ու խաւարի դեմ անդուլ մարտնչումներով-

Լույս-ճակատով ի՞նչ կեցեր սա ծառերուն դեմ անտեր,
Տերևներուն կնայիս, ծաղիկներուն, ու դողիմ,
Որ կանչերուն հետ մեռնող, հովն ու ձայ-
ները թողիմ...:
Վաճճի՛ տղա, տեսիլքիդ քալե՛ն ճամփան
ըստվերում...

և կամ

Կհեռանամ երբ քեզմե, իմ աչքերուն մեջ
սառած
Հարցումն է շեշտ՝ ինձմե քեզ.—«Կյանքին
մեջնեմ կրնա՞ն դու
Քալել այդպես միայնակ, միշտ հոգիով
ալ գեղում...»
—Դարձիր տեսիլք այն կյանքին, ուր օրհ-
նըվիս պիտի դում...:

Բանաստեղծ սրբազանը, իր իսկ քառե-
րով, «Գազաթներու տեսիլքին» անձնվեր
ու անվերապահ ուխտավորն է, միշտ մտա-
սեպնեռ «Մեն մարդերու հավերժության,
հրաշքին...»: Եվ այդ շունչով ալ ահա կուզե
տոգորել այն կոչումնավոր տղաքը, որ կու-
գան իրեն և կամ կգտնվին իր շուրջը: Սա-
կայն բանաստեղծը միևնույն ատեն կգի-
տակցի, որ այդ ճամփան դյուրին չէ: «Հո-
գիին ցունց տվող» քաղմաթիվ փորձություն-
ներ կուգան կյանքեն՝ հուշեր, հույզեր, կիր-
քեր, հաճույքներ, իբրև «Մութ անտառի»
կախարդական երաժշտություն, կապրա-
վանդեն հոգիին իր ազատ և վերապաշտ ճախ-
րին մեջ ու վար կքաշեն մարդը: Իրերամերժ
թախտմն է այս իրականին ու երագին, կիր-
քին ու հոգեկանին, անցյալին ու ներկային:
Անոց հակադրութենեն, հակասութենեն ա-
ռաջացած տառապանքին առջև տխուր է
բանաստեղծը իր քերթվածներուն ծնունդ
տվող պահերում մեջ: Բայց կհաղթանակե
ա՛ն, որ կրնա այդ առաձիգ բեռներու ձգ-
դրութենեն ազատագրվի...:

Ծեն-Մահ լույսի, բույրի, գույնի և ստվեր-
ներու զգայությանց բանաստեղծն է, խոր-
հորդապաշտության երանգավորություններ,
միացած իրապաշտ ապրումներու, կկազմեն
իր արվեստին քաղկացուցիչ տարրերը:
Մարմնուն կարող սը մարմանդ բոցի պես
հեզիկ կծվաւ իր քերթվածներուն մեջ և ա-
նոց տողերը կվերածեն երկարաձիգ ու օրո-
րուն դաշներգության մը: Նկատելի է, եր-
բեմն, որ այդ քերթվածներուն թելադրած
ապրումները կգերազանցեն իրենց նյութը:

Բանաստեղծի հոգին ընդունակ է, իր ընդ-
գրկած երևույթը անմիջապես վերածելու
բանաստեղծական դրության մը: Ասիկա
կենթադրեմ ենք ինչ գերզգայուն վիճակ մը, որ
փոքրիկ ազդանշանի մը պետք ունի իր ա-
փերեն դուրս հորդելու համար: Բայց, ինչ-
պես ճշեցինք վերը, արվեստի զսպանո-
թյունը կսանձահարե, կհակակշռե ներքին
հորձանքը, զգացումի սաստկությունը չա-
փավորելով ի հաշիվ իմացական ապրումի:
Այս իմաստով, դասական քերթված մըն է
«Լույսե ծաղիկ» բանաստեղծությունը, ժո-
ղովածուի լավագույն ստեղծագործություն-
ներն մեկը: Նյութը պարզ է. մանկության
վերադարձը իր շարունակությունը հանդի-
սացող երիտասարդության: Մեկ անձի մեջ
այդ երկու հասակներու հանդիպումը սըր-
տառույ պահ մըն է.

Հարածրփում ու քեկքեկ բույրովն այս
թարմ հասակիդ,
Այսօր, եկար, հոգվույս դես քացիդ սա-
հանք մ'անցյալեն,
Մի՞նչ քեզ մոռնալ կկարծեր ան տարիներ
այսքան վերջ.
Դո՛ւմ՝ շողշողո՛ւմ լիովին, զըտար զիս
մութ ու լըռիմ...:

Կարճ՝ երկվայրկյան մը միայն, դըպար
հոգվույս, լույծ, թոճուտ,
Ու փորձեցիր իջնել խոր, սև-սաթ դույլովն
աչերուդ.
Բայց հեռացար՝ շրվարուն, նոր սա երգեն
քեզ օտար...:
Ջըվարթ տղան փընտրեցիր, ու չը գտար...
տխրեցար...:

Բանաստեղծը կերգե այդ երկու հասակ-
ներու բաժանումեն, օտարացումեն առաջա-
ցած հոգիին ցավը: Լույսին, արևին ու բնու-
թյան քաղվող մանկությունը չի կրնար հաս-
կընալ գաղափարական երիտասարդի կյան-
քեն ունեցած սա կամավոր «փախուստը»:

Հոգիդ ծաղիկ մ'էր լույսե, քաղվող՝ կյան-
քին, արևուն,
Ես մեճամով մը թախծոտ, կյանքեն փախ-
չող-խենթ-հեռո՛ւն.
Դում չգիտցար ասիկա, ու հեռացար ալ
այդպես...:

Նույնպիսի սրտահույզ ու հարազատ շեշ-
տերով կհնչեն բանաստեղծի քնարին հայ-
րենասիրական լարերը: Այդ բանաստեղծու-
թյունները առանձին, տարանջատ ապրում-
ներ չեն բանաստեղծի հոգիեն ներս, այլ
ընդելուզված և սերտորեն միացած են անց-
յալեն, առօրյալեն, միջավայրեն ու շրջապա-
տի այլ երևույթներեն արձագանքվող ապ-

րումներում: Հայրենիքի սեր, հողի սեր, տան, երդիկի սեր կոգեկոչվին ինչպես պատմական անցյալի հիշատակներում, այնպես ալ ներկայի վերելքին ընդմեջեն: Այս շարքեն են՝ «Ամայքներու վրան», «Դուռ մեր հրաշք», «Հո՛ղ, հիշելու համար քեզ», «Հին իմ տունեն» և մասամբ՝ «Մայրավանքի զանգակ» քերթվածները: Բանաստեղծը այն «սերունդի վկան է», որուն մանկությունը զուգահեյակցավ մեր մեծ Տառնականքի վաղորդայնին բացվող «ամայքներում»: Հայրենիքը (Արևմտահայաստանը) իր անկարելի ողբերգության մեջ դիտապաստ՝ իր պատմական անցյալի հիշատակներով սկսավ հուզել և հուսադրել անհետված սերունդի մը տարահաված մնացորդացը: Բայց ինչպես միշտ, այս անգամ ևս շատերու համար եթե ոչ հայրենիքը փոխարինող, գոհն անոր պատրանքը տվող իրողությունը մնաց վանքը, եկեղեցին, որպես «տրտուլ պալատ մը հիմա» իր «կաթուղիկե կառույցներուն» և վեհանիստ լեռներուն խորհուրդով, որ հավատք կընրշնչե դեպի բացվելիք նոր առավոտները («Ամայքներու վրան»):

Հարության այդ գաղափարն է ահա, որ գեղեցկորեն արտահայտված է Էջմիածնին նվիրված «Դուռ մեր հրաշք» ներբողական բանաստեղծության մեջ: Էջմիածինը կխորհրդանշե հայ ժողովուրդը, հայ ժողովուրդի ոգին, անոր անցյալն ու պատմությունը, որ միշտ կենդանի մնացած է ու կմնա ընդդեմ ճակատագրի պատուհասներուն: Էջմիածինն է մահապաշտ, որ անցյալի փառքին ու ներկայի ծաղկուն վերելքին մեջ ամեն հայու «սփոփանքի կարոտն է և հիվանդ սիրտերուն բուժակը»: Ահիկա, դարեր շարունակ, ինչպես ուրիշ նվիրական անուն մը, Արարատը, իբրև հուռույթ կախված է հայ ժողովուրդի հոգիին վերև գայն ապահով պահելու համար այս աշխարհի դժբախտություններեն ու ոգեկան կործանումներեն:

Միայն անունդ—հրաշք—բավ է պանդուխտ իմ հոգիս
Կործանումն և անլուր իր նահանջեն կորզելու:
Էջմիածին, դուռ կանգուն... Թող միշտ
հպարտ կոթողիս
Իմ պապերեն իբրև ձայն, ու մայր հողեն
այցելու:

Ծեն-Մահի ներկա տաղարանը, չենք գի-

տեր, իր հաջորդները կունենա՞ արյոք, թե ոչ: Բայց մեկ բան կընանք վստահորեն ըսել, թե «Վանքի օրեր» ժողովածուն ամփոփագիր մեկ մատյանն է կյանքի մը և հոգիի մը պատմության: Բանաստեղծի ներշնչման աղբյուրը կյանքն է ընդհանրապես՝ տարբեր հանգամանքներու կնիքով և տարբեր պահերու շունչով արտահայտություն գտած: Իր տեսիլքը մարդու իդեալն է: Իր հոգիին աչքերը կսենեոհն կյանքին ու մարդուն, որպեսզի վերծանեն անոնց աստվածային խորհուրդը: Բանաստեղծի վերջնական քաղձանքն է մարդը տեսնել ներքնապես լուսավոր, իր «հիղն ու ստերը» կիրքերեն ազատագրված:


Ու լույսին մեջ, երանի՛, լա՛յն, թեև իրենց
բանային
Մեր տեսիլներն անդրանցող մեր հոգի-
նե՛րն անըստվեր,
Ըսպասն իրա՛վ անձուկին, հավերժու-
թյա՛ն, երկնքի՛ն,
Վյանքի մեր գիրքը ընդ լույս էջերու
փունջ մ'աղվոր...

Արդարև, «լույս էջեր»-ով գողտրիկ քերթվածներու դիվան մըն է Ծեն-Մահի բանաստեղծություններու ներկա ժողովածուն: Ի՞նչ նյութի մասին ալ գրելու ըլլա հեղինակը, միշտ սիրող ու ջերմ սրտի մը անկեղծ շեշտերը կթրթոտան անոր տողերուն մեջ: Տիրապետող ազդեցությունը ընդհանրապես թեքնյանական է, որուն ետևեն քալեց մեծ մասամբ ետպատերազմյան սփյուռքահայ բանաստեղծությունը: Օշականյան արվեստին հատուկ բառ ու բանի, խոսքի գեղարվեստական պատկերավորման ձևերն ու եղանակները զգալի տեղ ունին բանաստեղծի նախասիրություններուն մեջ:

Ծեն-Մահի քերթվածները մարդու ազնվագրման, վեհացման և հանուն գերագույն տեսիլքի մը՝ հոգիի անմնացող ընծայաբերման հուզիչ վկայությունն են: Կրոնական, եկեղեցական, ազգային և կրթական գործունեությանց առընթեր բանաստեղծական այս վաստակը ամենեն մնայուն և արժեքավոր արտահայտությունը կթվի ըլլալ սրբազանի բազմամյա ճիգերուն:

ԳԵՎՈՐԳ ՀՍԻՏՅԱՆ

Լենինական



ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ԾԵՆ-ՄԱՀ)

ԴՈՒՆ ՄԵՐ ՀՐԱՇՔ

Միայն անունըդ—հրաշք—բավ է պանդուխտ իմ հոգիս
Կործանումն և անլուր իր մահանջն կորզելու.
Է՛ջմիածին, դու՛ն կանգուն...: Թող միշտ հպարտ կոթողվիս
Իմ պապերեն իբրև ձայն, ու մայր հողեն այցելու:

Ինչ փույթ ըլլաս ալևոր, ի՛նչ փույթ՝ քեկված հո՛րդ բաժակ.
Ըստվերներուդ, գիտնաս դու՛ն, ըսփոփանքի՛ն ինչ կարոտն
Ունի՛մ խորունկ: Կապրի՛ս դու՛ն, Է՛ջմիածին, ու բաժակն
Ես դու՛ն հիվանդ արտերուն, անհույսներուն թափառոտ:

Ու կտեսնե՛մ, կտեսնե՛մ... պայծառանաս պիտի դու՛ն,
Դառնաս խարխիս ամբողջան ու հրավեր դեպի տուն...:
Տես, կքալեն, կքալեն, կարավաններ մոր, ցնծուն,
Փոխակերպած անապատն ու հին ըսպանդն զազրանուն...:

Բավ է անունըդ միայն: Է՛ջմիածին, կապրի՛ս դու՛ն:
Ու քեզի հետ կապրի՛մ ե՛ս, հազար-հազար սրտերուն
Համազարկին տալով ձայն: Ծաղկազարդվե՛ դու՛ն կանգուն,
Դու՛ն մեր հրաշք, մեր կտակ, մեր գալիքին երգ զանգուն...:

ԱՄԱՅՔՆԵՐՈՒՆ ՎՐԱ

Իմ հայրենիք, հին հայրենիք, հեռո՛ւ, հեռո՛ւ,
Ծամանդաղվող երգերուն պես աշուղներու,
Ի՛նչ է անունն այս տրտմության ու քաղցրության,
Ձայնե՛ն, շեշտե՛ն, քեզմե՛ն եկող սա աղջըկան:

Հըրածորան հասակներովն իմ պապերուն
Կքաղցրանաս հաճախ դու՛ն զերթ հաղորդություն.
Քեզմով հըպարտ, պատմումանված—պանդուխտ իշխան—
Շղթաներով, ըստվերի մեջ կու գաս ես ման...:

Մերթ կուրվանաւ կաթողիկէ կառուցներուն
 Լուրջ, վեհանդերձ ալ խորհուրդով—ե՛րգ մը լեցուն
 Ու միշտ փառքե՛ր՝ քարե, գիրե, վըրան դաշտի
 Ու լեռներուն իմ հայրենի կանոնն մարմին...:

Պարտեզներո՛ւ, ամտառներո՛ւ դուն կախօրդան,
 Ու քու շուքի՛ն՝ պապերուս տո՛ւնն՝ արյունի ծայն
 Անճրեկի՛ն տակ՝ ծառե՛ր բեռցած, արտե՛ր՝ հըղի,
 Ու դեռ՝ երգե՛ր աղջիկներու՝ կանա՛չ, հուղթի՛....:

Ի՛մ հայրենիք, հի՛ն հայրենիք, հեռո՛ւ, հեռո՛ւ,
 Ծամաղաղվող երգերուն պես աշուղներու,
 Ի՛նչ է անունն այս տրտմության ու քաղցրության,
 Ջայնե՛ն, շեշտե՛ն, քեզմե եկող սա աղջըկան,

Ամալքներուն վըրա օտար այս լեռներուն,
 Երդիքներուն ցերքն պանդուխտ մեր սրտերուն...:
 Ի՛մ հայրենիք, հի՛ն հայրենիք...:

ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՋԱՆԳԱԿ

Մայրավանքի հի՛ն զանգակ, ահա քու ծայնըդ նորե՛ն
 Կփշրվի հոգվույս դեմ, խոր բեկումով, ծանրորեն
 Եվ ա՛ն այնպե՛ս է հեռու, անհրաժե՛ր, վիրավո՛ր,
 Նըման հատնող օրերուս, ուր չի բացվիր հույս մը նոր...:

Մայրավանքի զանգակ հի՛ն, հոգիիս մեջ ի՛նչ փառքե՛ր
 Դու՛ն երգեցիր, ի՛նչ հրճվա՛նք, հպարտությունն իմ ցեղի՛ն,
 Երբ ժողովուրդ մը լըման՝ ծնծղա-ծնծղա կհնչե՛ր՝
 Կամարներով, ջահերով, հասակներով արվային...:

Հիմա, գիտնա՛ս, հի՛ն զանգակ՝ անարձագանք հըրավեր,
 Ջայնեդ ամեն մեկ կաթիլ՝ տրտմություններ քակելեն
 Հեռու-մոտիկ անցյալիդ բավիղներուն ընդմեջեն,
 Կու գա թաղվիլ սա ցերկա հոգիներուն մեջ ավեր:

Ըսե՛, ըսե՛, դարձընե՛ս պիտի նորեն ի՛նչի տուն
 Հի՛ն քաղցրությունն իմ սրտի՛ն..., կարոտ այնքան որ ունի:
 Ու մանավանդ՝ դարձընե՛ս պիտի հըպարտ իմ հոգվույն
 Ի՛նչ որ երեկն էր՝ շըքե՛ղ, հավերժադե՛մ, կորովի՛....:

Մայրավանքի զանգա՛կ հի՛ն, գիտնա՛ս, ի՛նչպե՛ս կկոտուա
 Սիրտըս՝ ծայնիդ դեմ հիմա...:



«ՏԱԹԵՎ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԸ

Երկրորդ տարին է ահա, որ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի լսարանական բաժնի ուսանող Սամվել սարկավազ Պետրոսյանի խմբագրությամբ, ճեմարանի սաների ջանքերով և նրանց աշխատակցությամբ լույս է տեսնում «Տաթև» ուսանողական պարբերալները: Մինչև հիմա լույս են տեսել արդեն վեց համարներ:

«Տաթև» պարբերալների հրատարակության փաստն իսկ նշանակալից, հուսադրող երևույթ է հոգևոր ճեմարանի կյանքում: Ծնողների աչքին թվում է, թե երեխաները չեն մեծանում, բայց մեր սաները մեծացել են, աճել հոգով ու մտքով, չեն բախարարվում ուսումնառությամբ, այլ ուզում են խոսել, յուրովի տեսնել աշխարհը և քաջվել նրա առաջ: Նրանց առաջին թոթովանքները չեն կարող չուրախացնել մեզ, մեզ, որ տարիներ շարունակ հետևել ենք նրանց հոգու ու մտքի ձևավորման աշխատանքներին, առաջին դասարանի աշակերտական սեղաններից բաժանել նրանց դժվարությունների դառնությունը և հաջողությունների թերկրանքը: Նման իր կանաչած արտի եզրին կանգնած մշակին, մենք այսօր ի սրտե ուրախանում ենք «Տաթև»-ի էջերում տեսնելով մեր սաների հոգու ծլարձակումները՝ ցողված պատանեկան վառ հասակի հույսի ու թախծության, հավատքի և լավատեսության շիջերով:

Անցյալ տարի կողմից միաժամություն կլինեք ակնկալել, որ նրանց գրական առաջին փորձերի մեջ կհանդիպենք տաղանդի վավերական վկայությունների, կաղապարված մտածումների, քանդակված զգացումների: Ո՛չ, հաջողությունը միանգամից չի գալիս, գրական վարպետությունը միանգամից ձեռք չի բերվում: Տաղանդը պայմանավորված է

կենսափորձով, սեփական փորձի ընդհանրացման կարողությամբ: «Տաթև»-ը սկիզբ է միայն: Առայժմ կարևորը այն չէ, թե ինչը ինչպես են ասում, այլ այն, թե ի՞նչ են ասում: Առայժմ կարևորը սիրտ և աշխատանքի ապացույցն է, որ հաստատապես տեսնում ենք «Տաթև»-ի հաջորդական համարների մեջ: Հոգևոր ճեմարանի սաները լեզու առած խոսում են այն ամենի մասին, ինչ հուզում է նրանց: Ակնհայտ է նրանց սերը գիր ու գրականության, հոգևոր արժեքների նկատմամբ: «Տաթև»-ի էջերում քաղվածաբար ներկայացված գրականության համառոտ մեջբերումները խոսում են նրանց լայն հետաքրքրությունների մասին, կյանքում ճշմարիտ ու գեղեցիկը որոնելու, հաստատելու նրանց հարատև ճիգի մասին: Առավել ուրախալին այն է, որ «Տաթև»-ի էջերում երևում են նաև դասարանական բաժնի սովորողների ստորագրությունները: Ուրախալի, հուսադրող է նաև այն, որ «Տաթև»-ի էջերը համարից համար դառնում են բովանդակությամբ ավելի հարուստ և բազմազան: Գնալով ընդարձակվում է սովորողների հետաքրքրությունների շրջանակը, լայնանում է նրանց հույզերի, ապրումների, խոհերի ու մտորումների ոլորտը:

Շատ խորհրդանշական է, որ «Տաթև»-ի առաջին համարի առաջին էջը բացվում է Վեհափառ Հայրապետի՝ ս. Ծմբդյան տոնի առթիվ խոսած ճառից բերված հատվածով: Վեհափառ Հայրապետը իրեն հատուկ ավետարանական պարզությամբ, քանաստեղծ հոգու լավատեսությամբ ավետում է Քրիստոսի ծնունդը, աշխարհի փրկագործությունը, երկնքի և երկրի հեշտացումը: Ամեն ծնունդ բերկրանք է, որովհետև ամեն ծնունդ

կյանքի հաստատում է և հաղթանակ: Ծը-
նունդ է նաև «Տաթև»-ը, որի շուրջ հավաք-
ված տղաքը բնակիչներն են այս սուրբ
Հաստատության, որ դարեր շարունակ մեր
ժողովրդի համար եղել է երկնքի ու երկրի
հաշտեցման այն միակ վայրը, որտեղից վեր
է բարձրացել մեր հոգին, բախել երկնքի
դռները Ամենաբարձրյալից խնդրելու հա-
մար, որ «ի մարդիկ հաճութիւն» լինի «և
յերկիր խաղաղութիւն»: Այս սուրբ Հաստա-
տության ավանդությունների ժառանգորդներն
են տաթևականները, որոնք այսօր սկսել են
խոսել՝ «Տաթև»-ի էջերին հանձնելով իրենց
հոգու ու մտքի առաջին ճիշերը, իրենց
զգացածի և իմացածի արդեն իսկ իմաստա-
վորվել սկսվող առաջին արձագանքները:

«Տաթև»-ում կան արձակ և չափածո գըր-
վածքներ, բանասիրական հոդվածներ, գրա-
բարից աշխարհաբար փոխադրումներ,
թարգմանություններ, որոնք գրվել կամ կա-
տարվել են հոգևոր ճեմարանի սաների ու-
մերով:

«Տաթև»-ի աշխատակիցներից իրենց
գործոն մասնակցությամբ, ինչպես նաև ի-
րենց գրական շնորհով առանձնապես աչքի
են ընկնում Ավետիք սրկ. Արաքսյանն ու
Սամվել սրկ. Պետրոսյանը: Երկուսն էլ
գրում են և՛ արձակ, և՛ չափածո: Սամվել
սրկ. Պետրոսյանը ստորագրել է նաև պատ-
մա-բանասիրական հոդվածների տակ, ո-
րոնք գուրկ չեն շահեկանությունից: Նա ունի
փաստերի համադրումով կամ հակադրու-
մով սեփական եզրակացությունների հան-
գելու կարողություն, որը նրա առաջիկա
հաջողությունների նրաշխիքն է: Սամվել
սրկ. Պետրոսյանը օժտված է նաև արձա-
կագրի շնորհներով, նս ունի նուրբ ու քնն-
քնուշ բանաստեղծական խառնվածք, բնու-
թյան զգացողություն, սահուն լեզու և նկա-
րագրելու կարողություն: Հաճությով են կար-
դացվում նրա «Ծաղիկներ», «Բնության գըր-
կում», «Կիրակնամուտի ժամերգություն»
արձակ գրվածքները: Բայց առանձնապես
հաջող է նրա «Զոն» խորագրված բանաս-
տեղծությունը՝ նվիրված Վեհափառ Հայրա-
պետի հոբելյանին, բանաստեղծություն, որը
գերծ է անհարկի սեթևեթանքներից: Հա-
ջողական տողերի մեջ քաջվում է Վեհա-
փառ Հայրապետի անձի և գործի նկատմամբ
սիրով ու նրախազիտությամբ քաբախող
մի պարզ, անբասիր և զգայուն հոգի:

Զարմանալի գուցե թվա այս ումանց,
Բայց արեգակ եք Դուք դարձել, Վեհա-
փառ,

Որ սիրում է ճառագայթներն իր թովիչ
Ու տարածում լոկ խնդություն կենսավառ:

Նորաբողբոջ հոգիներ ենք, Վեհափառ,
Սրբեցեք մեզ Զեր հայրական օրհնու-
թյամբ,

Ու շնչի տակ Զեր դեռնողյան բոցավառ
Թող մենք աճենք, լցվենք հույսով, խըն-
դությամբ:



«Տաթև» պարբերաթերթի շապիկի առաջին էջը

Ավետիք սրկ. Արաքսյանի մոտ գրական
վարպետությունը ավելի է ընդգծված: Նա
ունի իր ոճը, որ անմիջապես տարբերվում
է մյուսներից: Անհանգիստ, որոնող մտքի
տեր է Ավետիք սարկավագը: Հավասար
հաջողությամբ գրում է և՛ արձակ, և՛ չափա-
ծո: Իր արձակը, որպես ձև, ավելի հաջող
է: Նախադասությունները կուռ են և լավ
կառուցված: Ոճավորված է նրա արձակը:
Տառապում է, սակայն, ինչ-որ հստակու-
թյան պակասով: Հարցականներն ու կախ-
ման կետերը շատ են: Այս էլ հատուկ է,
անշուշտ, երիտասարդական տարիքին: Ե-
րիտասարդները շատ շուտ են տպավորվում
և առանց խորացնելու իրենց տպավորու-
թյունը և հասնելու քյուրեղացման, իրենց
հերթին ուզում են տպավորել հարցական-
ներով և կախման կետերով: Սակայն այս

մի թերությունն է, որ ժամանակի ձեռքը շուտով կվերացնի:

Այնուամենայնիվ, ճշմարտապես զգացված, հուզիչ և սրտագրավ է նրա գրածը Հայկազուն արքեպիսկոպոսի մահվան կապակցությամբ: Այստեղ հարցականներն ու կախման կետերը տեղի՞ն են: Սիրված անձի մահը ցցել է նրան: Տագնապած կյանքի ու մահվան առեղծվածից մա մերթ ըմբոստանում է, մերթ ընկնվում՝ ի հայտ բերելով վշտից տարուբեր իր ավելո՞ծ հոգու հակընդդեմ շարժումները: Վերջում կարծես հաշտվում է և խաղաղվում՝ հանգելով այն ճիշտ եզրակացությանը, որ «կյանքը լոկ փորձությունն է մահապարհի է...»:

Հետաքրքիր են նաև Ավետիք սարկավազի բանաստեղծությունները: Նա ունի խոհական խառնվածք. սիրում է մտածել, քրքրել կյանքի հանգույցը և երբեմն երջումիկ զուգադիպությամբ կանգ է առնում կյանքի իրական, ճշմարիտ պատկերացման վրա.

Մեղքի մթագին գիշեր
Անաստղ, անույս,
Հավերժ թվացող
Ոսկեշող մի հույս.
Ահա մեր կյանքը...

Անհանգիստ մտքի տեր այս սարկավազը կարծես չի վախենում տառապանքից. նույնիսկ սիրում է այն. մերժում է կյանքը առանց վշտի: Թույլ հոգիներին, անշուշտ, տառապանքը խորտակում է, քայց ուժեղներին ավելի ևս կոփում է՝ նրանց հասցրնելով «մարդկային սրտի սուրբ զարկերակի» շոշափմանը: Ծառ հաջող է Ավետիք սարկավազի «Պիտի տառապես» բանաստեղծությունը: Ծառ գեղեցիկ է հատկապես հետևյալ քառյակը.

Պիտի ապրես մանկությունն աշխարհի.
Որ մեծանաս,
Եվ տանել է պետք ծանր բեռն այս գնդի,
Որ ամրանաս...

«Գեղեցիկ բաներն արցունքի մեջ են ծնվում»: Որնանի այս խոսքերը կարծես արձագանք են գտել Արաքսյանի հոգում: Տառապանքի հաղթահարումը ստեղծագործությամբ արիության գործ է, որից զուրկ չէ Ավետիք սարկավազը: Արաքսյանը մի անուն է, որ հուսադրում է:

Ինձ առանձնապես ուրախացրեց Հարություն Սարգսյանի «Տատիկա» խորագրված արձակ գրությունը: Սարգսյանը սովորում էր ճեմատանի դասարանական բաժնում, երբ գրեց այդ էջը: Այժմ մա Բ լսարանի ուսանող

սարկավազ է: Ի բնե լուրջ, ինքնամիտի, համեստ այդ տղան օժտված է գրողի արժանիքներով: Ունի նյութի մատուցման պարզ ու բնական եղանակ: Գրվածքը շատ վոքքը մշակումով կարող էս տպագրել ուզածդ թերթում: Ամեն ինչ ճշմարիտ է այստեղ և անկեղծորեն զգացված: Հեղինակը սրտառույշ պարզությամբ, անսեթևեթ բնական ոճով, վերհուշի ձևով պատմում է իր «լավ, բարի տատիկի մահին», տարիների մշուշի միջից նրան դուրս բերելով ու կանգնեցնելով մեր առաջ իր «խորշումած դեմքի կնճիռներով, արծաթյա մազերով, բարի հայացքով, լուսն հավատով լեցուն աչքերով, որոնց անկյունները ծվարած ինչ-որ կարոտ կա, թե վախ, սպասո՞ւմ կա, թե երազանք»,—հարցնում է հեղինակը ուշացած թախիծով ու խանդաղատանքով:

Սարգսյանին հաջողվել է գտնել այն տիպական մանրամասները, որոնցով բնորոշվում է հայ տատիկի և ընդհանրապես տատիկի խորապես մարդկային հուզիչ կերպարը: Ողբերգական է եղել մեր պատմությունը. տեղահանություն, աքսոր, կորցրած սիրելիներ, քայց մահ անմարում հույս, հայրենիքի կարոտ...: Սարգսյանին հաջողվել է իր տատիկի հետ կապված հուշերով տալ հայ տատիկի հավաքական կերպարը: Կարելի է հույսեր կապել նաև Հարություն սարկավազ Սարգսյանի անվան հետ:

Անհետաքրքիր չեն նաև «Տաթև»-ում լույս տեսած գրաբարից մյուս փոխադրումներն ու ֆրանսերենից կատարված թարգմանությունները, որոնցում նկատվում է որոշակի ճաշակ և հմտություն: Առանձնապես ուշագրավ է Ժիրայր սարկավազի «Մոտորումներ Նարեկացու գրական վաստակի շուրջ» աշխատությունը՝ իր խիտ բնութագրումներով, նարեկյան գործի ճիշտ մեկնաբանությամբ և զնահատումով: Արժի հիշատակել նաև Գրիգոր սարկավազ Քեշիշյանի «Լևոնի խաղալիքները» արձակ գրությունը, որի մեջ մանկական անմեղ տարիների նկատմամբ զգացված կարոտն ու ափսոսանքը անկեղծ ու համոզիչ են հրնչում:

Ինչ որ անտարկելի է և խրախուսանքի արժանի, դա կազմակերպված, հետևողական աշխատանքի փաստն է, որ նկատվում է «Տաթև»-ի էջերում: Տղաները սիրով ու ոգեվորությամբ աշխատում են. ամեն մեկն իր մասնակցությունն է բերում «Տաթև»-ի աշխատանքներին. ոմանք փոխադրումներով, ոմանք թարգմանություններով, ոմանք էլ զուտ գեղարվեստական ստեղծագործություններով: «Տաթև»-ի արժանիքներից է նաև լեզվական որոշակի մակարդակի հաղթահարումն ու նվաճումը: «Տաթև»-ում լույս

տեսած բոլոր հողվածներն էլ շարադրված են կիրթ ու մաքուր հայերենով. սայթաքումներն ու վրիպակները շատ սակավ են: Զգացվում է իր գործը սիրող հմուտ ու քաղցրահամ խմբագրի ձեռքը:

Որպեսզի «Տաթև»-ը նյութերի ժողովածուի տպավորությունը չթողնի, առաջիկայում ցանկալի կլինեն, որ խմբագրությունը նյութերը ենթարկեր որոշակի դասակարգման, ամեն մեկը զետեղելով համապատասխան բաժիններում: Վատ չէր լինի, եթե «Տա-

թև»-ը ունենար նաև կրոնա-քաղաքական բաժին և ավելի լայնորեն արձագանքեր նեմարանի և միաբանության կյանքը հուզող հարցերին:

Հաջողության գրավականը աշխատանքն է: «Տաթև»ում կա աշխատանքի փաստը: Հույսով ենք, որ կունենանք նաև հաջողությունների փաստը:

Հաջողություն տաթևականներին:

ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒԼՅԱՆ





ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՆԱՐԵՆ ԽՄԱԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՕՔՐԻԴԱՅԻ ՎԱՐՔԸ)

Թարգմանությունն հունարենից՝ Հրաչ Բարթիկյանի
Առաջարան՝ Արամ Տեր-Ղևոնդյանի

Ագաթանգեղոսի Հայոց պատմությունը մինչև այժմ հայտնի է ութ միջնադարյան լեզուներով գրված մոտավորապես երկու տասնյակ մեծ, միջակ և փոքր խմբագրություններով: Այս բազմաթիվ խմբագրությունները երկու մեծ խմբի են բաժանվում:

Առաջին խմբի մեջ մտնող խմբագրությունների հիմքն է կազմում այն հայկական բնագիրը, որը մեզ քաջ հայտնի է¹, որպես ոսկեդարյան հայ մատենագրության մի գոհար: Դրանից կատարված հունարեն թարգմանությունը քանասիրության մեջ հայտնի է² դեռ ԺԸ դարից և ունեցել է մի քանի հրատարակություններ: Այժմ հայտնի է նաև հունարենից կատարված արաբերեն թարգմանությունը³: Այս երեք լեզուներից էլ կատարվել են համառոտումներ և թարգմանություններ (հունարեն, արաբերեն, վրացերեն, լատիներեն, եթովպերեն, սլավոներեն):

Ագաթանգեղոսի բազմալեզու խմբագրությունների երկրորդ խմբից առայժմ հայտնի է չորս խմբագրություն, որոնք արդեն բանասիրության մեջ հայտնի են Վարք անունով: Դրանցից առաջինը պետք է հիշել հունարեն Վարքը, որն իսպանիայի Էսքորիալ մատենադարանում հայտնաբերել և արժեքավոր

ուսումնասիրությամբ հրատարակել է պրոֆ. Ժ. Գարիտը 1948 թվին⁴: Սա ունեցել է մի հայկական բնագիր, որը մեզ չի հասել: Մասամբ սրանից է թարգմանված այն արժեքավոր արաբերեն Վարքը, որը Սինայի ու Կատարինե վանքում հայտնաբերեց և հրատարակեց Ն. Մատը⁵: Իր հայտնի ուսումնասիրության մեջ նա դեռ 1805 թվին սկիզբ դրեց Ագաթանգեղոսի այս խմբի (Վարք կոչված) բնագրերի ուսումնասիրմանը, որն այժմ արդեն շնորհիվ բազմաթիվ մոր ձեռագրերի հայտնաբերման առաջընթաց քայլեր է կատարել⁶:

Ամեն մի նորահայտ խմբագրություն թեև լուծում է որոշ խնդիրներ, բայց շատ փոքրիկ հարցեր դեռ մնում են չլուծված և դեռ միաժամանակ մոր խնդիրներ են առաջանում: Օրինակ, Գեորգ Ասորի արաբաց եպիսկոպոսի (686—724) Յոշուա վանականին ուղղված 714 թվականի նամակում, ուր պատասխանում է ինը հարցերի, Գրիգոր Լուսավորչին վերաբերող հիմնվորող հարցում պատմվում է նրա Վարքի բովանդակությունը: Սա թեև իր ընդհանուր բովան-

⁴ G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Valtican, 1946, (Studi e testi, 127).

⁵ Н. Марр, Крещение Армян, Грузин, Абхазов и Алабнов святым Григорием (арабская версия), С. Петербург, 1905.

⁶ Այժմ հայտնի է նաև մի արաբերեն Վարք, որն ասորերենից է թարգմանված և գրված լինելով ասորաժամ արաբերեն (քարշունի), բանասիրության մեջ Քարշունի Վարք անունն է ստացել: M. Van Esbroeck, Un nouveau témoin du livre d'Agathange, Revue des Et. Arm., VIII Paris, 1971.

¹ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեան, Էջմիածին-Տիֆլիզ, 1808: Ուղղակի հայերենից է թարգմանված նաև մի վրացական պատմոհիկ:

² Agathangelus und die Akten Gregors von Armenien, neu hrsg. von P. de Lagarde, Oditten-gen, 1887.

³ Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արաբական մոր խմբագրությունը, Երևան, 1968:

դակությամբ համընկնում է հայերեն Ագաթանգեղոսի հետ, այսուհանդերձ շատ բան մնում էր անեղծվածային: Այսպես, Գեորգ Ասորին Գրիգոր Լուսավորչին հոռոմ է համարում, թեպետ և հայերեն Ագաթանգեղոսի մեջ Գրիգորը պարթև է: Սակայն հունական Վարքը Գրիգոր Լուսավորչին կապադոկիացի է կոչում: Այսուհանդերձ դեռ շատ բան մնում էր մնում Գեորգ Ասորու մասակում, մանավանդ, որ պարզ չէր, թե ի՞նչ խմբագրություն է նա ձեռքի տակ ունեցել:

Բացի դրանից, հունական Վարքի հայտնաբերումը հնարավորություն տվեց թեկուզ մասամբ պարզելու արաբական Վարքի ծագումը: Վերջինիս մի մասը թարգմանված է հունարեն Վարքից, բայց և այնպես, դեռ հայտնի չէր, թե մնացած մասերը որտեղից են թարգմանված:

Դեռ շատ բան անեղծվածային էր մնում Ագաթանգեղոսի խմբագրությունների երկու խմբի միջև փոխհարաբերության ասպարեզում: Իհարկե այս երկուսի միջև անջրպետ չկա, քանզի նրանք նույն նյութի, նույն պատմության երկու տարբեր խմբագրություններն են: Բացի նյութի ընդհանրությունից, այժմ հայտնի է, որ այս երկու խմբագրությունները ինքնուրույն գոյություն ունենալուց հետո դարձյալ իրար խառնվել են և իրարից ազդվել:

Այս հարցերին եկալ պատասխանելու վերջերս Օքրիդայում հայտնաբերված հունարեն Վարքը, որը բանասիրական մեծ արժեքներ կայացնող բնագիր է:

1861 թվին Հ. Ֆ. Հալկինը Մակեդոնիայի (Հարավսլավիա) Օքրիդայի ազգային թանգարանում հայտնաբերում է Ագաթանգեղոսի մի հունական խմբագրություն (Ms 4 Ochrida): Դա գտնվում է մի հունական Հայտնավորքում (նախամետափրաստյան) գրված մագաղաթի վրա և պարունակում է 508 էջ: Ձեռագրում կան 33 բնագրեր, որոնք սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 22-ը տոնված սրբերի Վարքերն են: Ձեռագիրը սկզբից ու վերջից վնասված է, բայց գրության ձևը հստակ կերպով ցույց է տալիս, որ ժ դարից է: Օքրիդայի Վարքը զբաղեցնում է ձեռագրի 97ա—163 էջերը և իր շարադրանքով հարում է Ագաթանգեղոսի Վարք կոչված խմբագրությունների խմբին, որի հետևանքով էլ բանասիրության մեջ Օքրիդայի Վարք անունն է ստացել:

Օքրիդայի Վարքի սկզբնական մասը (ձեռ. 97ա—131բ էջերը) պարզապես ընդօրինակություն է հունարեն Ագաթանգեղոսից (մինչև պարբ. 76) գրչական չնչին տարբերություններով: Դրանք սովորական շեղումներ են, որոնք ընդհանրապես պա-

տահում են միևնույն աշխատության տարբեր ձեռագրերի մեջ: Պարբ. 76-ից հետո արդեն Օքրիդայի Վարքը ինքնուրույն է և այդպես շարունակվում է մինչև վերջ: Ահա այս մասն է, որ տալիս ենք թարգմանաբար: Այն բանասիրական մեծ նշանակություն ունի Ագաթանգեղոսի խմբագրությունների փոխադարձ կապը պարզաբանելու համար: Ժ. Գարիտը սույն մասի հունարեն բնագիրը արժեքավոր ուսումնասիրությամբ հսկողներ Ջրատարակեց 1865 թվին Բել-գիայում⁷:

Օքրիդայի Վարքը իր բովանդակությամբ իհարկե հիմնականում նման է մյուս բոլոր խմբագրություններին, սակայն Ագաթանգեղոսի պատմության որոշ մասեր նրանում ջնջված են⁸: Դրանք վերաբերում են ս. Գրիգորի Բարոզի ու Տեսիլքի և Հայոց Դարձի հատվածներին: Բարոզից փոքր մասը չկա, իսկ Տեսիլքը ամբողջովին պակասում է: Այսուհանդերձ Հալկական Ագաթանգեղոսի Վարդապետություն խոշոր հատվածից գոնե մի փոքր մաս պահպանել է Օքրիդայի վարքը (պարբ. 104—105): Մեծ պակասներ կան վկայարանների կառուցման բաժնից, Լուսավորչի կեսարիա ճանապարհորդության և Հայաստանում նոր կրոնի արմատացման բաժնիցներից պակասներ կան, իսկ լրիվ պակասում են Գրիգորի որդիների, Կոստանդին կայսեր մոտ Հոռոմ այնելության, Նիկիայի ժողովի բաժնիները և վերջաբանը:

Օքրիդայի Վարքի աղբյուրը դժվար է որոշել, քանզի առայժմ մենք չուենք նրա հունարեն նախատիպը: Հունական Ագաթանգեղոսի հետ նա սերտ կապ ունի, սակայն ոչ հունարեն Ագաթանգեղոսն է նրա նախատիպը, ոչ էլ ինքն է նրա նախատիպը: Սկսելով այն տեղից (պարբ. 76), ուր Օքրիդայի Վարքը արդեն ինքնուրույն է, այս բնագիրը հունարեն Ագաթանգեղոսի հետ շատ քիչ նմանություն ունի:

Սակայն նրա համեմատությունը հայերեն Ագաթանգեղոսի հետ մեծ նմանություն է ցույց տալիս: Ժ. Գարիտը⁹ բազմաթիվ օրինակներով ապացուցում է, որ Օքրիդայի Վարքը շատ տեղերում հայերեն Ագաթանգեղոսի հետ է կապված: Վերջինիս հետ կապի նշաններից է նաև Վարդապետությունից մի փոքրիկ հատվածի պահպանված լինելը այս նոր վարքում, մինչդեռ հունական Ագաթանգեղոսը ամբողջովին զանց է առել Վարդապետությունը: Օքրիդայի Վար-

⁷ G. Garitte, La Vie grecque inédite de Saint Grégoire d'Armenie, Analecta Bollandiana. I. 83, fasc. 3—4, Bruxelles, 1965.

⁸ Անդ. 298—241:

⁹ Garitte, Vie grecque, 244—246.

քի խմբագիրը ուղղակի հայկական բնագրից է վերցրել այս հատվածը, որը համապատասխանում է Ագաթանգեղոսի 852, 853 և 854 պարբերություններին:

Օքրիդայի նորահայտ բնագրի աղյուսի հայկական լինելու մասին կան ուղղակի ապացույցներ հենց հունարեն շարադրանքի մեջ: Օրինակ, Տիր աստծու մեհյանի մասին խոսելիս, հունարեն «Տրիդիս տանար» արտահայտությունը պարզ կերպով հայկական բնագրի «Տրի դից» արտահայտությանն աղավաղված թարգմանությունն է¹⁰: Թարգմանիչը բոլոր դեպքերում հայկական աստվածությունների անունների համապատասխան հունական ձևերն է հիշում, օրինակ.

Անահիտ—Արտեմիս
Արամազդ—Կրոնոս
Նանե—Աթեմաս
Միհր—Դիոնիսոս
Աստղիկ—Ափրոդիտե

Սակայն Տիրը, որի կողքին այս բնագրում նրան համապատասխանող Ապոլոն անունը օգտագործված է, հստակ չի թարգմանված և աղավաղված ձևով հայկական անվան և դից բառի միաձուլումից անհավանալի Տրիդիս բառն է գոյացել: Ի դեպ այս նույն տեղի է ունեցել նաև հունարեն Ագաթանգեղոսի մեջ, ուր կա նույն Տրիդիս ձևը¹¹:

Նորահայտ Վարքը խառնածին բնագիր է և միացման օղակ է հանդիսանում Ագաթանգեղոսի մինչև այժմ հայտնի երկու խմբագրությունների միջև: Ամենակարևորն այն է, որ Օքրիդայի բնագիրն այն նախատիպն է, որից թարգմանվել է արաբերեն Վարքի մի զգալի մասը: Վերջինիս մեջ մի մեծ հատված (պարբ. 25—44 և 83—78), այսինքն՝ Հռիփսիմյանց վկայաբանության մի մասը և ս. Գրիգորի Քարոզը թարգմանված են Օքրիդայի Վարքից (պարբ. 78—118): Այս մասերում արաբերեն Վարքի ծագումը մինչև այս մնում էր անորոշ, քանզի նրա համեմատությունը Ագաթանգեղոսի գոյություն ունեցող թագմաթիվ խմբագրությունների հետ կարևոր տարբերություններ էր ցույց տալիս: Բազում են այն օրինակները, որոնք ցայտուն կերպով ապացուցում են արաբերեն Վարքի և Օքրիդայի Վարքի մերձակցությունը և նրանց տարբերությունը հայերեն կամ հունարեն Ագաթանգեղոսներից¹²: Վերցնենք երկու օրինակ Հռիփսիմյանց վկայաբանության բաժնից.

Օքր. Վարք (պարբ. 77)

«...Քանզի թագավորը մտնելով նրա մոտ փորձեց իրագործել իր ցանկությունը: Իսկ սուրբ Հռիփսիմեն Սուրբ Հոգով զորացած, սկսեց մարտնչել թագավորի դեմ ժամը երեքից մինչև տասը. մա մարտնչեց նրա դեմ. [թագավորը] կարծես կապյալ լիներ Քրիստոսի զորությամբ: Տեսնելու էր, թե ինչպես պատերազմներում արտակարգ հզորը, բոլոր ժողովուրդներին իրեն եմթարկողը, աշուտ ռու արջին իր գրկում խելոյողը, մի աղջնակի կողմից պարտության էր մատնվում Քրիստոսի զորությամբ:

Արաբ. Վարք (պարբ. 34)

«...թագավորը մոտեցավ նրան, որպեսզի իր ցանկությունը կատարի: Իսկ սուրբ Հռիփսիմեն, Սուրբ Հոգով զորացավ և սկսեց մարտնչել թագավորի դեմ ժամը երեքից մինչև տասը. հաղթեց նրան և [թագավորը] կարծես կապյալ լիներ Քրիստոսի զորությամբ: Նա, որը հզոր էր պատերազմներում, բոլոր ժողովուրդներին հաղթել և իրեն էր եմթարկել, աշուտ ռու արջը ձեռքերով բլզկլետ էր և նա մի դեռատի աղջկանից պարտվեց Քրիստոսի զորությամբ:

Հայ. Ագաթանգեղոս (պարբ. 181)

«...Արդ՝ մտեալ թագաւորն՝ բուռն հարկաւ էր զճմանէն, կատարել զկամս ցանկութեանն: Իսկ նա զօրացեալ լինէր ի Հոգւոյն Սրբոյ. զազանաբար ռզորեալ, առնաբար մարտնչէր. իբրև յերեք ժամուց սկսեալ մարտնչել մինչև ի տասն ժամն՝ պարտեալ լինէր զթագաւորն իսկ զայն, որ անհաբիւն համարեալ ուծով. որ մինչ ի Յունաց աշխարհին էր՝ բազում ոյժ պնդութեան ոսկերաց ցուցեալ էր, զարմացուցեալ զամենեւեան. և ի թագաւորութեանն իսկ, իբրև ի հայրենի բնութիւնն դարձեալ էր՝ բազում գործս արութեան քաջութեան և անդ ցուցեալ. և որ այնպէս հռչակեալ էր ամենայնի՝ արդ յաղջկանէ միոյջէ պարտեալ վատթարանալը կամօք և զօրութեամբն Քրիստոսի»:

Հետաքրքրականն այն է, որ Օքրիդայի Վարքը և արաբական Վարքը ոչ միայն շարադրանքով իրար նման են, այլև երկուսն էլ հիշում են, որ Տրդատ թագավորը առյուծ և արջ է խեղդել, մի բան, որ բոլորովին անծանոթ է հայերեն Ագաթանգեղոսին:

Օքրիդայի Վարքի հետ սերտ կապ ունի նաև Գեորգ Ասորու 714 թվականին գրած նամակը¹³: Դրա հիմնվածությունը քաժնի երկրորդ պարբերության մեջ նա հայտնում է. «Այժմ անհրաժեշտ է մեր խոսքի ճշմարտացիության համար որոշ տեղեկություններ վերց-

¹⁰ Անդ, 281 (ծան. 1):

¹¹ Agathangelus. 65.

¹² Garitte, Vie grecque. 235—238.

¹³ Սա ապացուցում է, որ Օքրիդայի հունարեն Վարքը Ը դարի սկզբին արդեն գոյություն է ունեցել և հայտնի է եղել Արևելքում:

նել Վարքից...»¹⁴, ապա բառացի մեջ է բերում վեց կետ, որոնք քիչ չափով են համընկնում Ազաթանգեղոսի հայերեն կամ հունարեն բնագրերի հետ: Սակայն Օքրիդայի Վարքի և նրա վերջին երեք կետերի համեմատությունից պարզվում է, որ դրանք իրար համապատասխանում են: Այսպես, օրինակ.

Օքր. Վարք (պարբ. 89)

«...վեց օր հետո տեղի տալով իր իշխանների խնդրանքին, նա հրամայեց հավաքել իր զորքը, որսի գնալու համար: Երբ դա կատարվեց, ձիերը լծվեցին և նա կառք քարձրացավ, հանկարծ նրա վրա Աստծո պատմապատասխանություն եկավ, չար ոգին հարվածեց նրան և կառքից տապալեց: Նա սկսեց մոլեգնել, իր վարմիցն ուտել...»:

Գեորգ Ասորի (գլ. 5, պարբ. 2, կետ 4)

«Եվ հետո թագավորը հրամայեց, որ իր բանակը գումարսով, որպեսզի գնան որսի: Երբ պատրաստ էր և ձիերը լծված էին կառքերին ու նա պատրաստվում էր իր արքայական կառքը նստելու, Աստծո բարկությունը ուղարկվեց նրա վրա և չար ոգին հարվածեց նրան: Նա կառքից վայր տալով վեց երեսի վրա, խելագարվեց ու սկսեց ատամներով կծել իր մարմինը»:

Պերճախոս է հաջորդ կետի համեմատությունը:

Օքր. Վարք (պարբ. 112)

«Իսկ երանելի Գրիգորիոսը ծուր դրեց ու աղոթելով պաղատեց ամենագոր Աստծուն, որպեսզի բուժի թագավորին: Եվ ահա երկընթից ձայն լսվեց, որ ասում էր. «Գրիգորիոս արիացիր ու զորացիր, քանզի ես քեզ հետ եմ մինչև հավիտյան: Դու ինձ համար եկեղեցիներ կկառուցես և կբարձրացնես նրանց եղջյուրը: Ինչի մասին որ դու աղոթեցիր, ահա ես լսեցի քո ձայնը, և այն շնորհքը, որ խնդրեցիր, կպարգևեմ քեզ: Նա դարձավ դեպի թագավորը և դիպչելով նրա ձեռքերին ու ոտքերին մեր տիրոջ Հիսուս Քրիստոսի շնորհքով վերականգնեց [նրա] մարդկային կերպարանքը»:

Գեորգ Ասորի (գլ. 5, պարբ. 2, կետ 5)

«Եվ հետո Սուրբ Գրիգորիոսը ծնկի է գալիս գետնին և աղոթում ամենակարող Աստծուն, որպեսզի բուժի թագավորը: Երկնքում մի ձայն է լսվում, որն ասում է «Գրիգորիոս զորացիր և քաջ եղիր, որովհետև ես քեզ հետ եմ հավիտյան. դու ինձ համար եկեղեցիներ կկառուցես, իմ սրբերի համար բնակության վայրեր և կբարձրացնես նրանց եղ-

ջյուրը: Եվ որովհետև դու աղոթեցիր իմ առջեվ, ես կատարում եմ քո խնդրանքը, ինչ որ խնդրեցիր ինձնից»: Երբ այս բանը ասվեց սրբին, նա դարձավ թագավորին, շոշափեց նրա ձեռքերն ու ոտքերը [թագավորը] վերստացավ իր մարդկային կերպարանքը՝ մեր Ֆրոդ Հիսուս Քրիստոսի զորությամբ»:

Հայերեն Ազաթանգեղոսի այս նույն տեղում այլ շարադրանք ունի և մանավանդ բոլորովին չունի երկնքից լսվող խոսքերը.

Հայ. Ազաթանգեղոս (պարբ. 764)

«Իսկ երանելի Գրիգորիոս ծուր կրկնեալ ամենատեսաոց բարերարի մարդասիրին Աստուծոյ, երթեալ անկանէր գտորբընկալ արկեղօքն երանելի մարմնոցն Քրիստոսական վկայիցն՝ մատուցանել պաղատանս. համբարձեալ գրագուկսն հանապազատաբաժ յերկինս՝ ամենայն ժողովելոցն և թագաւորին բժկութիւն հայցէր: Այսա դարձաւ առ թագաւորն, շնորհելովն Քրիստոսի զոտան նորա և զձեռսն բժշկէր. զի թախեցան կնդակք ոտիցն և ձեռացն, որպէս զի առ մի նուագ հաղորդեալ լիցի ի գործ սրբոցն՝ իւրոց ձեռացն վաստակելով»:

Այս նույն ձևով կարելի է համեմատել Գեորգ Ասորու նաև վեցերորդ կետը Օքրիդայի Վարքի 121—123 պարբերությունների հետ և բոլոր դեպքերում միանությունն ակնհայտ է Գեորգ Ասորու և Նոր Վարքի միջև: Հետևաբար վերջինս եղել է այն առեղծվածային խմբագրությունը, որից Գեորգ Ասորին իր տեղեկություններն է քաղել¹⁵ և նույնիսկ որոշ տույր ընդօրինակել է:

Թեև արդեն կարելի է ասել, որ Գեորգ Ասորու օգտագործած ալբյուրը Օքրիդայի Վարքն է, սակայն միաժամանակ դժվար է պնդել, որ վերջինս այժմյան ձևով է ասորի մատենագրի ձեռքն անցել: Օքրիդայի Վարքի այն սկզբնական հատվածը, որն այժմ սոսկ հունարեն Ազաթանգեղոսին է ընդօրինակված, գուցե նախկինում այլ կերպարանք է ունեցել: Հավանաբար Օքրիդայի Վարքը այս մասում էլ ունեցել է իր ինքնուրույն շարադրանքը, որն ինչ-ինչ պատճառներով դուրս է ընկել և վիոխարենը դրվել է հունարեն Ազաթանգեղոսին համապատասխան հատվածը:

Ասորեն տրված է Օքրիդայի Վարքի թարգմանությունը՝ կատարված Հ. Բարթիկյանի կողմից: Ինչպես ասվեց, նրա սկզբնական մասը (մինչև պարբ. 76) պարզապես Ազաթանգեղոսի հունարեն թարգմանությունից է ընդօրինակված, ուստի Ժ. Գարիտը վերահիշյալ հոդվածում այն չի հրատարակել և կարիք էլ չկա տալ նրա թարգմանությունը: Ինչ վերաբերում է դրան հետևող ինքնու-

¹⁴ Հ. Հ. Տաշյան, Ազաթանգեղոս առ Գեորգայ Ասորի եպիսկոպոսին, Վենետիկ, 1890, էջ 5. Հ. Մելքոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1970, էջ 190—197:

¹⁵ Garitte, Vie grecque, 255.

րույն հատվածին, ապա դա ամբողջովին տրված է արտեղ թարգմանաբար: Հունարե-
ցից հայերեն թարգմանության մեջ Հ. Բար-
թիկյանը անձնանունների և տեղանունների
հայկական ձևերն է դրել: Նկատի ունենա-
լով, որ բանասիրության համար չափազանց
հետաքրքրական է հայկական անունների
հունարենում կրած փոփոխությունները, տա-
լիս ենք նրանց ցուցակը.

Քւψυρία	Հոփսիսմէ
Γαζανή	Գաշիանէ
Γογγόριος	Գորիգորիոս
Τριδάτης	Տրդատ
Ἀσάξας	Արտաշատ
Κοσμοδόουκας	Խոսրովիդուխտ
Λύσιας	Օտայ

Ἀσείτης	Ասէշնդ	Աշխէն
Μαρία	Մարիա	Մասիս
Ἀρξάρης	Արարատ (Արարատ)	Վաղարշապատ
Οὐλαρσάπας	Սիլիս	Տիդ (Տրիդից)
Τριδης	Տրիդիս	Դարանադի
Δαρζανί	Թրճան	Թորդան
Θηρδάν	Վի	Անի
Ἀνί	Էթի	Երեզ
Θιδαί	Թիդ	Թիդ
Δερζάνη	Դերշան	Դերշան
Βαζααρί	Բազաարի	Բազաարի
Ταρζυνή	Տարոն	Տարոն
Ἀστιας	Աշտիշատ	Աշտիշատ
Βαζαβάν	Բազաան	Բազաան

ՄՐԱՌՑ ՀՌԻՓՄԻՄՅԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոփսիսմեն պալատում. նրա գտնվածքը Տրդատի
հետ

76. Ապաստվորները, առնելով սուրբ Հոփսիսմենի,
մերթ քարշ տալով, մերթ [թևերից] բռնած, տանում
էին: Իսկ նա, աղաղակելով, ասում էր. «Տեր Հիսուս
Քրիստոս, օգնիր ինձ»: Հորդացած համայն ամբողջ
հետևում էր նրան, բազմությունն այնքան էր, որ
[մարդիկ] իրար էին տրորում: Նրանց փութանակի
ապարանքը բերեցին և սեմյակում արգելափակեցին:
Արքունիքն սկսեց աղաղակել առ Աստված ու ասել.
«Տեր զորությանց, ճշմարիտ Աստված, որ ճեղքեցիր
Կարմիր ծովը և նրա միջով անցկացրիր ժողո-
վուրդդ, որ ամուլ ու չոր վեմը փոխակերպելով, նրա-
նից քրի աղբյուրներ բխեցրիր ու հագեցրիր ծաղաղ
ժողովուրդը, որ ծառայող Հովնանին ծովի խորքերը
իջեցրիր և ողջ ու առողջ պահպանելով, նրան ճա-
մաչել տվեցիր զորությունը Քո, որ սարսափելի առ-
յունների ժամկետներից փրկեցիր Դամիելին, ոսոխնե-
րի առաջ դատապարտվածին փառավորեցիր, որ քեզ
պաշտան լինելու պատճառով հնոց մեռած երեք
մանուկներին կրակից ողջ ու անարատ պահեցիր,
որ Բաբելոնի քարասիրտ ու անօրեն թագավորին
անասուցի վերածելով, հրամայեցիր անպատում գա-
զանների հետ թափառել, ցի մմամ խոտաճարակ
լինել, քամոյի տեսնելով համոզեմք քո հրաշքները, նա
չցանկացավ փառավորել քեզ՝ ճշմարիտ Աստծուն,
որ Քո աղախին Շուշանին կրկնակի մահից փրկե-
ցիր, նրա անօրեն ոսոխներին ոչնչացրիր, իսկ նրան,
որ հույսը Քո վրա դրեց, զարդարեցիր քարեմտու-
թյան պսակով: «Բայց դու մոյն իսկ ես, և ամբ Քո
ոչ անցանեն՝ և «Կիսուս Քո այլում ոչ տաս»՝ քամոյի

դու ես, որ փառավորվում ես համայն տիեզերքում:
Հեթանոսները չեն պղծի Քո ամունը, միայն Դու կա-
րող ես ինձ անվնաս ու ամարատ պահպանել,
արժանացնել ինձ մաքուր վախճանվելու և մեռնելու
համուն Քո սուրբ անվանը:

77. Երբ նա այդպես աղոթելիս էր, նրա մոտ
սեմյակ մտավ թագավորը: Ժողովուրդը, այդ իմա-
նալով, համայն ապարանքում, ամբողջ քաղաքում
սրիմզների, կիթառների ու տավիղների [նվագակ-
ցությանը] սկսեց պարել, ինչպես թագավորական
հարսանյաց համոնի առթիվ: Իսկ Տերը, լսելով
[Հոփսիսմենի] աղոթքի ձայնը, նայեց նրան փրկելու
համար, որպեսզի չկորչի նրա անարատ կուսություն-
ը, զորացրեց նրան, ինչպես Հալեդին, Գեքուրային
ու Եսթերին, որպեսզի փրկվի նա բռնակալի ապա-
կանությունից, քամոյի թագավորը մտնելով նրա մոտ
փորձեց իրագործել իր ցանկությունը: Իսկ սուրբ
Հոփսիսմեն Սուրբ Հոգով զորացած, սկսեց մար-
տընչել թագավորի դեմ՝ ժամը երեքից մինչև տասը.
նա մարտնչեց նրա դեմ. [թագավորը] կարծես կապ-
յալ լիներ Քրիստոսի զորությանը: Տեսնելու էր, թե
ինչպես պատերազմներում արտակարգ հզորը, բոլոր
ժողովուրդները իրեն եմթարկողը, աղյուծիմ ու ար-
ջիմ իր գրկում խեղդողը, մի աղջնակի կողմից պար-
տության էր մատնվում Քրիստոսի զորությամբ:

Փայաննի հորդորը

78. Պարտվելուց հետո նա դուրս գալով, հրամա-
նեց պարանոցից շղթայակալ բերել սուրբ Փայաննին
և կանգնեցնել սեմյակի դռան առջև, որպեսզի նա
համոզի [Հոփսիսմենին] եմթարկվել նրա կամքին:
[Փայաննին] քաշեցին [բերեցին] և նա, լսվելով
Սուրբ Հոգով, կանգնեց դռան առջև ու հռոմեական
լեզվով Հոփսիսմենին ասաց. «Որդայկ, Աստված քեզ

¹ Սաղմ. ՄԱ, 28:

² Հմմտ. Եւ., ԽԲ, 8:

անբիծ կապի, կփրկի ամեն մի պղծությունից, կզուրացնի ու զլորավիզ կրանգնի, որպեսզի դու չզըրկվես նրա ժառանգությունից»։ Երբ իմացան, որ [Գալանեն] նրան հորդորում էր անասան մնալ այդ մավատքին, սկսեցին քարկերով մարվածել նրա բերանին, մինչև որ փշեցին նրա ատամները, նրան ստիպում էին մամուկել կույսին եղբարկվել թագավորի կամքին։ [Գալանեն] առավել ևս շարունակում էր նրան հորդորել ու ասել. «Այիացի՛ր ու գորացի՛ր, որդյակ, այժմ դու կտեսնես բաղձալիզ Քրիստոսին։ Հիշիր, որ ես քեզ սննցի գորույսամբ Սուրբ Հոգու։ Հիշիր իմ հորդորները՝ քարկաշտ լինել առ Աստված և ի մավատս։ Հիշիր հալածանքները, որոնց միասին եղբարկվեցինք։ Հիշիր մամվան քաժակը, որից բուրսս միասին պիտի ըմպենք։ Հիշիր տիեզերական հարությունը։ Հիշիր ամեն լեց բացանալստույ օրվա մասին։ Հիշիր մավիտնական հրո զեննի մասին։ Հիշիր անապական պարզենլորի մասին, որ պատրաստված են նրանց համար, որոնք անաբասու են պահում կոտորությունն ու քարեմտությունը։

78. «Հիշիր աստվածային ձայնը երկնային, որ զուրացրեց քեզ այսօր մեզ հետ միասին, որպեսզի արժանացնի մեզ պսակին ու հանգստին, որ խոստացավ իրեն սիրողներին, գորացնի՝ մեզ հետ միասին՝ լուսավելու Աստծո լուսեղեն մավիտնական մարկերում։ Այլ մեր Տեր ու թագավոր Հիսուս Քրիստոսը, որ մեր սիրույն խոստովեց և ընդունեց մեր անարժանքները, մեզ չի լքի, քանզի մենք Նրան ջանակալենք։ Որպես փրկիչ ես կօգնի մեզ և կարժանացնի լսելու ձայնն իր խոսքի և կպահպանի մեզ՝ իր աղախիմներին ամեն մի պղծությունից ու անարգությունից, ինչպես որ այսօր ես համարվեցիք՝ ես իր հզոր ձեռքով պահպանեց քեզ և ես կփրկի մեզ մավիտյանս։ Բայց Նրա սիրույն թող մենք չհիտանանք, որպեսզի Նա զարթոնեցնի իր գորությունը և զու մեզ փրկելու, և մենք կոչ անենք Նրա անվան, Նա ցույց կտա իր դեմքը մեզ և կպահպանի մեզ, քանզի Նա է մեր Աստվածն ու մայրը և մենք Նրա սիրույն է, որ այս ամեն տաճում ենք։ Հիշիր Տիրոջ, որ մեզ բարձրացնելու համար իրեն խոնարհեցրեց, որ իր արյունը մեզից մարդկանց փրկության համար, որ մեզ փրկելու համար հոժարեց վերք ստանալ։ Քո մտքում Նրան ունենալով, գոչիր Նրան ամբողջ հոգով։ Ահա, Նա գալիս է քեզ օգնության, Նա կզորացնի քաղուկները քո, ինչպես իր որդի Գավթի, որ առյուծին ու արջին խնդրեց կարծես նրանք այժմ ու լինին, ջարդեց հակա Գողիաթին, և ես կփրկի քեզ։ Նա կխորտակի բռնակալի սամեմադեան ճեղքությունը և քեզ, մեզ հետ միասին կարժանացնի պարգևիս և քեզ կալալանալու իր դատաստանին»։

Հոփսիմնի հաղթանակը

80. Մուրբ Գալանեն ամա դուսն առաջ կանգնած հռոմեական լեզվով այդպես հորդորում էր կույսին, որը թագավորը մաքառում էր նրա դեմ։ Թիկնապաններից ոմանք, որոնք գիտեին հռոմայեցիների լեզուն, [Գալանեն] ձևաքրքին դոճից, քարերով

մարվածներ հասցնելով նրա բերանին, և թակտ նրանք շարունակեցին այդպես վարվել, ջարդ ու փշուր արեցին նրա ատամներն ու լեղերը, [Գալանեն] չդադարեց հորդորել կույսին՝ անարատ մնալ։ Սուրբ կույս Հոփսիմեն այդպես շարունակում էր մաքառել թագավորի դեմ տաճնորդ ժամից մինչև զիշերվա առաջին պահը։ Նա պատառ-պատառ արեց նրա մամուկները, հաղթեց Սուրբ Հոգու գորությունը և [թագավորին] դիակի մամու գցեց սննցի մի կողմը, ապա քաղելով դոճը, զիմկորների միջով տեսց վազել դեպի քաղաք։ Ոչ ոք ի վիճակի չտեսավ նրան քոճի։ Նա քաղաքից դուրս եկավ Արեւելյան կաշվող դարպասից, եկավ մեծաճը, որտեղ մահապալես թաքնվում էր, գտավ իր ընկերակից կույսիին և ավետեց, թե անարատ մնաց ու կարողացավ փախչել։

Սուրբ Հոփսիմնի գոհությունը

81. Նա հասավ դեպի Արտաշատ քաղաքը տանու աշխարհական պողոտան և մի լարձր սեղ ելնելով, ծուրը դրեց ու աղոթեց, այսպես ասելով. «Տեր Աստված ամենայնի, ո՞վ կարող է ըստ արժանեցյուն հասունցի Քեզ մեզ պարգևած Քո բոլոր քարիքները։ Քանզի Դու մեր մեզ հաստատուն պահեցիր մուշը առ Քեզ, փրկեցիր մեզ ապակամել ցանկացող ճեղք մարդկանց պիղծ ժանցներին։ Դրա համար ամա մենք Քո քարերարության դիմաց Քեզ ենք մատուցում մեր մոգիները, քանզի Դու արժանացիր մեզ կրկ Քո սուրբ ամուրը, որով մեզ փրկեցիր։ Իացի Քեզանց, Տեր, մենք ոչ ոքի չգիտենք։ Մեզ Քո սուրբ ամուրն ենք հղում, մեզ համար գերադասելի է աճարատ մոռել, քան թե ձեռքերը պարզել օտար ասածն։ Հեթանոսների տաշտածը աստվածներ չեն, Դու ես արարիչն ամենայնի, Աստված ճշմարիտ, և Քո Որդին Միածին, Ամենայն ինչ նույն եղև, ես առանց նորա եղևի ու ոչ ինչ որ ինչ եղևին»³ և Քո Սուրբ ու քարի Հոգին, որ առաջնորդեց և առաջնորդում է մեզ դեպի ուղի ճանապարհը, դեպի մավիտնական երկնային կյանքը, որպեսզի առանց ամոթի կաճենք Քո միածին Որդու դատաստանի աջ կողմում իր կրկին զատության՝ «ի պատրաստ բնակությունն հայել լամենայն բնակիչս երկրի»⁴։

82. «Դու ես, Տեր, որ ստեղծեցիր առանձին մեր սրտերը և ակամք ես դնում մեր քոլոր գործերին⁵, «Ջի ես մեզ ի ժողովրդներն լամեն եմք ես ի խաչն սրտիս քոյ»⁶ արժանացրու մեզ, Տեր, մտնել մարկելը, որ պատրաստել ես Քեզ սիրողների համար, քանզի մենք շտապում ենք դուրս գալ այս մարմնից և մտնել սրբերի դասը և միանալ նրանց, որոնք սիրել են մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի երևալու օրը։ Դու գիտես, Տեր, որ ես չեմ ջանկացել ոչ փառք, ոչ գովք, ոչ էլ այս տեսանելի աճյուղիկ կյանքը, այլ

³ Թովմ., Ա, 3:

⁴ Հմմտ. Սաղմ. ԼԲ, 4:

⁵ Հմմտ. Սաղմ. ԼԲ, 15:

⁶ Հմմտ. Սաղմ. ՀԸ, 18:

դեպի Քեզ եմ նայել, հավատալով Քո խոսքին, թե «վա՛ր» ձեզ յորժամ քարի ասիցեն զձե՛զ մարդիկ. ե-րանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և ասիցեն զամենայն քան չար զձե՛զ սուտ վասն իմ, «ցնծացե՛ք և ուրախ լըրուք»⁷։ Արդ, Տեր, մե՛նք իսկական ուրախությամբ քերկրեցինք ու ցնծացինք միտ գլխին եկած ճշմարտությունների ժամանակ և պատերազմի, որին ճշմարտություններ չուր զորությամբ հաղթեցինք, «ուրախ եղե՛ք ընդ այս փոխանակ ասարցն, որ խոհարար արա-ղին զմեզ, և [ամացս], յորս տեսաք զչարչարանս»⁸։ Նայիր քո ժառանգության և Քո ձևերի արարչա-զորության և առաջնորդի մեզ Քո սուրբ քաղաքը՝ վերին Երուսաղեմ, որտեղ Ղու հավաքելու ես Քեզ սիրով բոլոր սրբերին ու արդարեւորին, որպեսզի մեր Տեր Աստծո լույսը մեր վրա էլ տարածվի»։

Հոփսիմեհի և նրա երեսուներեք ընկերուհիների նահատակությունը

83. Երբ [Հոփսիմեհ] այդպես աղաթում էր, ցույց դիշեր ջանալով ու կանթեղներով կույսի գտնված վայրը եկան իշխանները և բռնելով նրան ձեռքերը մեջքին կապեցին, ցանկաճալով կտրել նրա լեզուն։ Իսկ սուրբ կույսը կամուփն քացեց քերամը և նրանց կրկարեց իր լեզուն։ Անգործները գետնին չորս ցից գամեցին, նրանցից պրկեցին սրբին և կանթեղներն առնելով, քաղում ժամեր պահեցին նրա կողերին և նրա մարմինը գրեթե ամբողջությամբ այրեցին։ Այ-նուհետև սուր քարերով կտոր կտոր արեցին նրա մարմինը։ Տեսնելով, որ Քրիստոսի գառը էլ ավելի է զորանում, դեռ կենդանի վիճակում աչքերը հանեցին, որից հետո մարմինը մաս-մաս անելով, առաջին այսպես. «Ով չի ուզում եմթարկվել թագավորի հրա-մաններին, նա այսպիսի պատժի կենթարկվի»։ Ահա այսպես [Հոփսիմեհ] մինչև վերջին շունչը հավա-տարիմ մնալով մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի հա-վատքին, մեռավ։ Նրա ուղեկիցներն էլ Քրիստոս, իմանալով նրա վախճանման մասին, շտապեցին, տեղ հասան, սրբուհու աճյունն ամփոփելու համար։ Իշխանները, իմանալով դա, քաշեցին դաշույնները և նրանցից երեսուներեքու հոգու սպանեցին։ Նրանք մորթվելիս, աղոթք էին երգում և ասում այսպես. «Մե՛նք սիրեցինք Քեզ, Տեր, որ լսեցիր մեր խնդրող ձայնը և, ով Ղու քարի, ակամջ դրեցիր մեզ, երբ գուցեցինք Քեզ՝ փառավորյալ Աստծուն և Ղու Տեր, Քո քարեքարությունից չզրկեցիր մեզ, անարժանե-րիս, այլ պահպանեցիր աչքի քթի պես, Քո թևերի հովանու տակ ու փրկեցիր մեզ քաղում անգործնե-րից և մահվան արժանացրիր՝ Քո անվան սիրույն»։

84. Երանելիների այդպես սպանվելուց հետո, թիկ-նապահներին մեկը գնաց Ռձանը և սուրբ կույսերի խմբից մեկին գտնելով, մորթեց։ Գառան պես մորթ-վող [կույսը] մինչև վերջին շունչը գոհանամ էր ա-սում այսպես. «Միհմում եմ Քեզ, իմ Տեր Աստված,

ես հիվանդ էի, ի վիճակի չեի իմ ընկերուհիների հետ ընդունել այս ցանկալի նահատակությունը, քայք Ղու ի՞նձ չզրկեցիր դրանից։ Արդ, Տեր, ընդու-միր իմ հոգին և համարիք ի՞նձ քո սրբերի հետ»։ Եվ այդ ասելով, ավանդեց հոգին։

Տրդատի ողբը

85. Իսկ թագավորը, պատերազմների մեջ այդ քաջն ու հզորը, վայրի գազաններին գրկելով խեղ-դիղը, Պարսից համայն կրկնող իրեն ճեթարկողը, տեսնելով իր խայտառակվելը՝ Աստծո զորությամբ մի կույսի կողմից պարտվելը, սկսեց արտասվալից ուլբալ ու ասկ. «Տեսնո՞ւմ եք քրիստոնյաների կա-խարդանքը, ինչպես են նրանք կործանում սարդ-կանց հոգիները, բաժանելով դրանք աստվածների պաշտամունքից, ինչպես են նրանք անգոսնելով մահը գեղեցկագույն Հոփսիմեհին էլ ի՞նձից առան, [Հոփսի-մեհին], որի ցմաց գեղեցիկը չի գտնվի համայն կանանց մեջ։ Ես իմ ողջ կյանքում չեմ կարող մո-ռանալ նրա գեղեցկությունը։ Ես հոռմայեցիների կրկ-րում էլ լուսնու ժամանակ և այլ ժողովուրդների մոտ, երբեք չեմ տեսել նրա մմանը, Պարթևներին մեջ էլ մմանը չեմ տեսել։ Բայց նրանց կախարդանքները իմ վրա էլ ազդեցին և նրան ի՞նձից խլեցին»։

Գայանեի դատապարտումը

86. Երբ նա այսպես խոսում էր, նրա մոտ մտավ խոհարարապետը⁹, խնդրելով վճիռը ընդշին սուրբ Գայանեի։ Թագավորը, լսելով նրան և կարծելով, որ Հոփսիմեհն դեռ կենդանի է, սկսեց մեծագույն պա-տիվներ խոստանալ [խոհարարապետին], եթե նա կույսին կենդանի իրեն ներկայացնի։ Խոհարարա-պետը ասաց նրան. «Ահա այսպես կապառվեն թա-գավորի թշնամիները և աստվածներին անարգողնե-րը, քո հրամաններն անգոսողները։ Կենդանի է դեռ այն կախարդը, որ մոլորեցրեց կույսին և կյանքից զրկեց նրան և նրա հետ երեք հոգու էլ»։ Թագավորը, համոզվելով երանելի Հոփսիմեհի մահվանը, կալ գահից և նստելով գետնին, սկսեց սգալ նրան։ Նա հրամայեց սուրբ Գայանեի լեզուն [ձոձորակից] հա-նել ու կտրել, ապա մահապատժի ենթարկել, քանզի նա հանդգնեց հորդորել կույսին անարգել աստվա-ծներին, որոնք իրեն էին շնորհել իրենց գեղեցկու-թյունը։ Խոհարարապետը, ստանալով [սուրբ Գա-յանեի] դեմ հանված վճիռը և դուրս գալով ուրա-խությամբ, հրամայեց [Գայանեին] և նրա հետ եղող երեք կույսերին շղթայակալ քաղաքից դուրս հանել, տանել գետի կամրջի մոտ, որտեղ, ըստ իրենց սու-վորության գլխատում էին մահապարտներին, հրա-մայելով յուրաքանչյուրի համար գետնին չորսակամ ցից գամել։

(Ծարուհակելի)

⁷ Հմմտ. Ղուկ. Զ, 26: Մատթ. Ե, 11—12:

⁸ Հմմտ. Սաղմ. 26, 15:

⁹ Բնագրում՝ ἀρχιμαγειρος գուցե ἀρχιμαγειρος մոզակնու։ Հայերեն Ագաթանգեղոսն ունի՝ դահմապետ։



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅՈՒ

Հովհաննես Դրասխանակերտցին միջնադարյան այն եզակի պատմագիրներից է, որոնց կենսագրությունը խորապես թափանցված է իրենց ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական իրադրությունների պատմության մեջ: Այս հանգամանքն, անշուշտ, պայմանավորված է նրանով, որ Հովհաննես պատմագիրը եղել է հայոց կաթողիկոս և որոշակի ու վճռական դեր ունեցել 9-րդ դարի վերջի և 10-րդ դարի առաջին քառորդի պատմական անցքերի ծավալման մեջ: Հովհաննես կաթողիկոսի հասարակական-քաղաքական գործունեությունը, ինչպես և նրա Պատմության արժանիքները բացահայտելիս, մեր առջև գտնում ենք մի մեծ ու հետաքրքիր անհատականություն, հայրենակներ գործչի ու պատմագրի մի խոշոր տիպար:

Զնայած Հովհաննես Դրասխանակերտցու Պատմությունը զգալի թվով փաստեր է պարունակում իր՝ հեղինակի կյանքի ու գործի վերաբերյալ, այսուամենայնիվ պատմիչի կենսագրության մի շարք կետեր մնացել են մութ ու անորոշ: Ամենից առաջ ստուգապես հայտնի չէ նրա ծննդյան թվականը: Միայն ենթադրաբար կարելի է ասել, որ նա ծնվել է 9-րդ դարի 40—50-ական թվականների սահմանում: Ինքը՝ Դրասխանակերտցին, իր «Շարք կաթողիկոսաց» աշխատության մեջ իրեն ծնունդով համարում է «ի մեծ դաստակերտ Դրասխանակերտէ»: Դրասխանակերտը, որ 10-րդ դարում հավանաբար վերածվել էր մի անճշակ գյուղի, գտնվում էր Դվին և Գառնի քաղաքների միջև: Այդ պատճառով Ստեփանոս Տարոնցի (Ասողիկ) Դրասխանակերտցուն անվանել է Հովհաննես Դվնցի, իսկ Ստեփանոս Օրբելյանն ու Կիրակոս Գանձակեցի՝ Հովհաննես Գառնցի: Իր դառն ու հալածական կյանքի համար Հովհաննեսն ստացել է Մաշեալ մականունը: Սակայն լինելով խոշոր պատմագիր և պատմական անցքերի փայլուն մեկնաբան, նա հաջորդ մատենագիրների կողմից աչելի շատ անվանվել է Հովհաննես Պատմաբան: Մանուկ հասակից Հովհաննեսը Սևանի անապատում աշակերտակ է ժամանակի նշանավոր հոգևոր գոր-

ծիչներից մեկին՝ Մաշտոց վարդապետին, և ապա կաթողիկոս, որին նա, ինչպես ինքն է ասում, «արեան հարազատությամբ մերձաւոր» է եղել: Հստ երևույթից Հովհաննեսը Մաշտոցի մոտ սատկածաբանության, քերթուական արվեստի և այլ գիտությունների հետ միասին ուսումնասիրել է նաև հին աշխարհի գրականությունն ու փիլիսոփայությունը: Ուշագրավ է այն փաստը, որ 10-րդ դարում, երբ Եվրոպայում մերժված էր հին հունական և հելլենիստական շրջանի մշակույթը, Հովհաննես Դրասխանակերտցին իր Պատմությունն մեջ մի քանի անգամ հիշատակում է Հոմերոսին ու նրա «Իլիականը» և մեջբերումներ կատարում Սոլոնից:

Գեորգ Բ Գառնցի (877—897) կաթողիկոսի օրոք Դրասխանակերտցին բարձրացած է եղել եպիսկոպոսության աստիճանի և պաշտոնավարել է կաթողիկոսարանում, հավանաբար որպես «եպիսկոպոս Իրան»: Երբ 894 թ. արաբ ոստիկան Մոհամմեդ Աֆշինը նենգորեն բանտ նետեց խաղաղության առաջարկով իր մոտ եկած Գեորգ կաթողիկոսին, Հովհաննեսը առաջինն էր այն հոգևորականներից, որոնք հալածեցին Աֆշինի պահանջած փրկագինը և արձակել տվեցին Հայոց Հայրապետին: Հավանաբար Դրասխանակերտցու միջնորդությամբ և ջանքերով էր, որ 897 թ. Գեորգ Գառնցու մահից հետո կաթողիկոս ընտրվեց Հովհաննեսի ուսուցիչ և «ըստ մարմնոյ» ազգակից Մաշտոց Եղվարդցին: Վերջինիս, սակայն, վիճակված չէր երկար ժամանակ վարել հայոց կաթողիկոսի պաշտոնը, յոթ ամիս անց նա վախճանվում է և 898 թ. Սմբատ արքայի և «նախարարակոյտ բազմութեան» կողմից Հայոց Հայրապետ է ընտրվում ինքը՝ Հովհաննես Դրասխանակերտցին:

Այդ ժամանակ արաբական հրոսակները դեռևս ասպատակում էին Հայաստանում, սպառնալով հայոց նորաստեղծ պետությանը և թշնամություն սերմանելով հայ ավատատերերի միջև: Եվ ահա, իրար հաջորդող արտաքին ու ներքին պոկոծությունները հայոց կաթողիկոսին նետեցին մերթ այս, մերթ այն կողմ: Եվ որտեղ էլ լինում էր նա՝ Գուգարքում թե՛ Վրաստանում, Տարոնում

թե Արարատում, ամենուրեք հաշտություն էր քարոզում երկպառակտված հայ իշխաններից և հաճախ կոչ անում գեներալ ուղղել երկրի անկախությանը սպառնացող ընդհանուր թշնամու՝ հագարացիների (արարների) դեմ: Այսպիսով Դրասխանակերտցին մի անգամից քաղաքական գործիչ էր, որը Սմբատ և ապա Աշոտ Բ հագարատունի թագավորների օրոք օժանդակում էր կենտրոնացած ուժերի հզորացմանն ու կենտրոնացված հայկական պետականության ստեղծված հայկական պետականության մասին: Սակայն կաթողիկոսը լավ էր հասկանում, որ առանց մեծ պետության օժանդակության անհնար է լուծել Հայաստանի վերականգնման հարցը: Ուստի 814 թ., երբ Ատրպատականի ոստիկան Յուսուֆը գրավել էր գրեթե ամբողջ Հայաստանը և խոշտանգելով սպանել Սմբատ արքային, երբ երկիրը հեծեծվում էր սուլից ու բնական աղետներից, նա վճռում է մի աղեքսական թուղթ (նամակ) գրել բյուզանդական կայսր Կոստանդին Ծիրանածնին (813—859): Կաթողիկոսը խնդրում է կայսրին, որպեսզի վերջինս հայոց թափուր գահի վրա հաստատի Սմբատի որդի Աշոտին և զենքով աջակցի հավատակից հայերին: Հովհաննես կաթողիկոսի այս նամակը Ռ. Միքայել Չամչյանը դիտել է որպես Դրասխանակերտցու քաղկեդոնական տրամադրությունների արտահայտություն: Նրան հետևելով այս տեսակետին հարեցին նաև Գաբրիել վարդապետ Ալվազովսկին և ֆրանսիացի բանասեր Ֆելիքս Լաժարը: Սակայն ժամանակին Չամչյանի այս ոչ գիտական պնդումը հիմնովին քննադատվեց ինչպես հայագետ Մկրտիչ Էմինի, այնպես էլ Միքայել Նալբանդյանի կողմից, որոնք մերկացրին այս հարցում Միսթաթյան պատմագրի անձնական մոտեցումը: Իրականում, ինչպես ցույց է տալիս մանրագրին ուսումնասիրությունը այս նամակում, որը «սկզբից մինչև վերջ քաղաքական մի գրություն է» (Լեո), Դրասխանակերտցին ոչ մի բացահայտ կամ քողարկյալ միտում չի դրսևորել հոգուտ քաղկեդոնության: Ավելին, շեշտը դնելով հավատի միասնության վրա, նա ձգտել է խուսափել դավաճաբանական տարբերության ակնարկումից և, ինչպես նկատում է Մ. արք. Որմանյանը, «Համարձակ օգնություն և միություն կնկարե, բայց միշտ քաղաքական տեսակետով և զգուշանալով, որ դավաճանական միության խնդիր մեջտեղ չելլե»:

Որպես կաթողիկոսի նամակի պատասխան Կայսրը Հայաստան է ուղարկում իր պաշտոնյաներից Թեոդորոս Վասիլիկոսին, որը հատուկ հրովարտակով Բյուզանդիոն է հրավիրում Հովհաննես կաթողիկոսին և արքայազն Աշոտին, վերջինին հայոց թագա-

վոր օժելու համար: Սակայն Հովհաննես կաթողիկոսը, որը կարծես թե հասել էր իր նպատակին, սկսում է վարանել և, գնալով մինչև Դերջան գավառը, կանգ է առնում այնտեղ, այլևս չի ցանկանում անույլ հրավերին: Իր այդ քայլը նա արդարացնում է, գտնելով, որ իր Բյուզանդիոն մեկնելը տկարամիտների մեջ կարող էր կասկած հարուցել, թե ինքը հարակից է քաղկեդոնությանը: Կաթողիկոսը կանխագույմ էր, որ Բյուզանդիոնում իրեն դավաճափոխության առաջարկներ կանեին: Բացի այդ, նա թերևս հասկանում էր նաև կայսրի քաղաքական միտումները, որոնք ի վերջո հանգում էին Հայաստանի ստրկացմանը: Մեր կարծիքով Հովհաննես կաթողիկոսը հատուկ դիտավորություններ էր կանգ առել Դերջան գավառում, որտեղ, ինչպես հայտնի է, մի քանի սրբատեղիներ կային՝ կապված ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Շրջապանելով այնտեղ, նա վստաստեմ կենդանի կերպով ապացուցում էր իր նվիրվածությունը հայոց եկեղեցու դավանությանը: Հովհաննես կաթողիկոսի այս քայլը նշանակվել է Մխիթարյան որոշ պատմագրությունների, ինչպես և ֆրանսիացի ճանապարհորդ Էժեն Բորեի կողմից: Մինչդեռ Դրասխանակերտցու այս վարքագծի մեջ, ինչպես նկատել է պրոֆ. Մ. Մկրյանը, «քաղաքական հետադարձություն և հայրենասերի համարձակություն կար»: Ընդհանրապես Հովհաննես կաթողիկոսի վարած քաղաքականությունը բյուզանդական արքունիքի հետ հայ գրականության պատմության մեջ իրավամբ դիտվում են որպես «միջնադարյան հայ դիվանագիտության նրբամտության մի արտահայտություն»:

Երբ Աշոտը հայոց թագավոր դարձած, բյուզանդական օժանդակ ուժերով մտնում է Հայաստան, Յուսուֆ ոստիկանը իսկույն խորամանկորեն թագ է դնում նրա հորեղբորորդու՝ Աշոտ Ծապուհյանի գլխին: Եվ ահա երկու թագավորացած Աշոտների միջև մեծ թշնամություն է ծագում: Եղբայրասպան պատերազմները կանխելու համար դարձյալ գործի է անցնում Հովհաննես կաթողիկոսը, ստանձնելով անդու հաշտարարի ծանր պարտականությունը:

826 թ. Յուսուֆին հաջորդում է նրանից ավելի արյունարբու Նսրը Սրուբը, որը անգործորեն սկսում է հալածել հայոց հայրենակներ կաթողիկոսին: Վերջինս պատասպանվում է մերթ՝ Այրիվանքում (Գեղարդ), մերթ՝ Սևանա կղզում, մերթ՝ Բյուրականի իր փոքրիկ ամրոցում: Նա հույս ուներ, թե կհաջողվի բանակցել արաբ ոստիկանի հետ և թերեկս որոշ զոհողությունների գնով կկարողանա վերստին բնակություն հաստատել Դվինում, պահպանելով իր կաթողիկոսա-

րանը: Ասկայն բոլոր փորձերն սուարդյուն են անցնում և հուսահատ, հիվանդ և այդքն չափազանց ծեր հայոց կաթողիկոսը 927 թ. ստիպված փախչում է Բագարան՝ Աշոտ Շապուհյանի մոտ: Նույն թվականին նա Գագիկ Արծրունու հրավերով մեկնում է Վասպուրական և հաստատվում Աղթամարում: Այդ թվականից ի վեր հայոց կաթողիկոսների նստավայրը դառնում է Աղթամարը: Այստեղ էլ հենց Հովհաննես Դրասխանակերտցին, ըստ երևույթի, Աշոտ Շապուհյան և Գագիկ Արծրունի թագավորների առաջարկով շարադրում է իր տաճնապետական Պատմությունը:

Դրասխանակերտցու Պատմության գրության ժամանակի մասին հայտնվել են մի քանի կարծիքներ: Հ. Մ. Չամչյանն ու Մ. արք. Օրմանյանն, օրինակ, տարբեր պատճառաբանություններ բերելով պնդում են, թե Հովհաննես կաթողիկոսն իր Պատմությունը գրել է հատվածաբար, մի մասը՝ կաթողիկոսությունից առաջ, մյուս մասը՝ կաթողիկոսության տարիներին: Որ այդ այդպես չէ, ցույց է տալիս խնդրո առարկա Պատմության թե՛ առաջաբանը և թե՛ վերջաբանը: Այստեղ պատմիչը պարզորոշ կերպով ասում է, թե իր Պատմությունը սկսել է գրել Վասպուրականում, որը բնականաբար նշանակում է, թե 927 թվականին: Մեկ-երկու տարի հետո, 929 թ., արդեն նա փակում է իր մատյանը և շատ չանցած կնքում նաև իր մահկանացուն:



Քանի որ Դրասխանակերտցին իր Պատմությունը գրել է շատ կարճ ժամանակամիջոցում և ձերության հիվանդության մեջ, ուստի այն կրում է որոշ հապճեպության կնիք: Այս թանցը նկատելի է մանավանդ Պատմության այն մասում, որտեղ պատմիչը նկարագրում է Հայաստանի վաղ անցյալի պատմական եղելությունները:

Հետևելով Մովսես Խորենացուն, Դրասխանակերտցին ձգտել է գրել մի ամբողջական հայոց պատմություն, սկսելով Հաբեթի սերունդների ազգաբանությունից, որի հետևա կապել է հայ ժողովրդի ծագումը և ավարտելով ընդհուպ մինչև 927 թ. դեպքերի նկարագրությամբ:

Պատմությունն ունի մի փոքրիկ առաջաբան, թեև հեղինակը ժամանակի սղությունից և իր գործն անավարտ թողնելու մտալիսությունից դրդված չի ցանկացել զուր տեղը առաջաբանի վրա ժամանակ վատնել: Այստեղ նա մի երկու էջի վրա խոսում է իր պատմելիք նյութի շուրջ և ապա առանց

գոյականի բաժանման շարադրում իր Պատմությունը:

Հին շրջանի դեպքերը պատմագրելիս Դրասխանակերտցին որպես աղբյուր քննարկ է 5-րդ դարի պատմիչներից հատկապես Ագաթանգեղոսի, Խորենացու և Եղիշեի մատյանները, իսկ հետագա շրջանի պատմագիրներից օգտագործել է Սեբեոսի, Ղեվոնդի, Լիովսես Կաղանկատվացու և Շապուհ Բագրատունու վկայությունները: Դրասխանակերտցու Պատմության այս հատվածն ունի ճանաչողական ու աղբյուրագիտական մեծ արժեք: Անցյալի այս կամ այն գործչի մասին խոսելիս նա մեծ չափով օգտագործել է ժողովրդական անգիր գրույցներ: Այս տեսակետից նրա Պատմությունը շատ հետաքրքիր ու արժեքավոր վկայություններ է պարունակում նախորդ շրջանի մատենագիրներից ու հոգևոր գործիչներից հատկապես Հովհան Մայրազումեցու, Եզրի, Հովհան Օձնեցու և տակավին անհայտ պատմագիր Շապուհ Բագրատունու մասին:

Ասկայն պատմագիտական և մի մեծ չափով նաև գրականագիտական առումով անգնահատելի արժեք է ներկայացնում Դրասխանակերտցու մատյանի այն մասը, որտեղ նկարագրվում են պատմիչի ժամանակակից, այսինքն՝ 9-րդ դարի երկրորդ կեսի և 10-րդ դարի առաջին քառորդի պատմական իրողությունները: Այստեղ Դրասխանակերտցին, մեծ մասամբ որպես ակնհայտ, մանրամասնորեն շարադրում է հայկական նորմոր վերականգնված պետականության և մեր ժողովրդի ու եկեղեցու անկախության պահպանման համար մղված համաժողովրդական պայքարի պատմությունը: Շատ ընդարձակ մանրամասներով նա պատմագրում է Սմբատ Բագրատունու և ապա նրա որդի Աշոտ Երկաթի ժամանակը, հանդիսանալով այդ շրջանի հայոց պատմության ամենագլխավոր ու հավաստի աղբյուրը: Նա միակն է, որ որոշ ուշագրավ վկայություններ է թողել Գեորգ հայրենասեր իշխանի մասին, որը հ. Միքայել Չամչյանի կողմից բնահանդերն մխրտվել է Մարգալտունի տոհմանունով և որը դարձել է հայ դասական արձակագիր Սուրաբանի հայտնի պատմավեպի կենտրոնական դեմքը:

Իր Պատմության մեջ Դրասխանակերտցին, բնականաբար, խոսել է նաև իր՝ որպես երկրի հոգևոր առաջնորդի մասին, բայց դա ամենևին առիթ չի տալիս եզրակացնելու, թե նա գրել է ինքնակենսագրություն: Բաղաբական անցքերին մասնակցած կաթողիկոսը ձգտել է ավելի շոշափելի ու կենդանի ձևերով ներկայացնել իր ժամանակաշրջանը, բայց նա երբեք այդ ամենն իր շուրջը չի ծավալել և ամենևին էլ նպա-

տակ չի ունեցել գրի առնելու իր կյանքի պատմությունը:

Ընդհանուր կարելի է համարել նաև այն տեսակետը, թե Հովհաննես Պատմաբանը «Բագրատունյաց տոհմը փառաքանու պատմիչ է»։ Նա տոհմագիր չէ, այլ տոհմական մտածողությունից բարձր կանգնած մի անհատականություն, որ գրել է հայոց զննահանրական պատմություն: Հենց սա է պայմանավորում նրա Պատմության գաղափարական բովանդակության խորությունը ու արժեքը:

Արժանահավատության տեսակետից Դրասխանակերտցին չափազանց բարձր է կանգնած միջնադարյան շատ ու շատ պատմիչներից, օրինակ՝ նույն 10-րդ դարի պատմագիր Թովմա Արծրունուց, որի համեմատ նա ունի շատ ավելի «անկախություն ու անաչառություն» (Լեո):

Դրասխանակերտցու Պատմության խոցելի կողմը տարբերների պակասն է, նրա բերած հատուկներ թվականներն էլ չունեն պատմական ստուգություն: Այսպես օրինակ, նկարագրելով Նազրի կողմից Բյուրականի ավերումը, որ ճշգրիտ հաշվումներով տեղի է ունեցել 828 թվականի աշնան վերջին, Պատմաբանը գրում է, թե «այս ամենայն եղև լերեքհարիւրերորդի երեսներորդի երկրորդի թուակնությունն Թորգոմեան»: Եթե վերջինս համարենք հայոց թվականը, ապա ուրեմն պետք է ընդունել, որ այդ դեպքը տեղի է ունեցել 889 թ. (892+551), այնինչ այդ թվականին Դրասխանակերտցին դեռևս կաթողիկոս էլ չէր: Այսուհանդերձ տարբերների այս պակասը հիմնականում չի խաթարում Դրասխանակերտցու Պատմության ճանաչողական մեծ արժեքը: Դրասխանակերտցին իրավագիտորեն Արմաշի ու Աշոտ Երկաթի պարտությունները կապում է Բագրատունյաց պետության մասնատվածության ու թուլության հետ: Նա դատափնտրում է Աշոտ Երկաթի «բղջախոհ» վարքը և առաջ քաշում ուժեղ ու քանակական տիրակալի գաղափարը: Հայրենասեր պատմիչը գալույթով է խոսում հայ իշխանների անմիաբանության մասին, համարելով դա «կորստական դուռ»: Նա ինքը, ինչպես նրկատել է Մանուկ Աբեղյանը, օժտված էր ազգային ինքնագիտակցությամբ և հաճախ էր հաշտեցնել թշնամացած իշխաններին, որոնք չունեին ազգային ընդհանուր շահերի գիտակցում և նորաստեղծ պետության ու միասնական հայրենիքի գաղափար: Այսպես օրինակ, երբ Գագիկ Արծրունին Սմբատ թագավորից չի ստանում Նախճավան քաղաքը, իսկույն հեռանում է նրանից և դաշնակցում Յուսուֆ ռաիկյանի հետ: Իսկ վերջինս «ախորժաբար» ընդունում է նրան և

սկսում իր արշավանքը հայոց մասնատված պետության դեմ:

Դրասխանակերտցու ճիշտ մեկնաբանությամբ, հայ ավատատերերի նդրալրաստան կոիվներից ոչ միայն օգտվում էին օտար ավերիչները, այլև մեծապես ճնշվում էին ռամիկները, որոնք վերածվում էին ռազմական ավարի և մի իշխանից անցնում մյուսին: Այդ պատճառով նրանք ընթուստանում էին իրենց տերերի դեմ, և այդպիսով ջլատվում էր երկիրն ու կորցնում թշնամուն դիմադրելու ունակությունը: Այս ամենը լավ էր գիտակցում նա, քայց երբ ձգտում էր նույնը հասկացնել նաև հայ մեծամեծներին, այնժամ, ցավով նկատում է պատմիչը, «նոքա մարտնչէին ընդ իս»:

Դրասխանակերտցին Խորենացու մասն երազում է քանակականության թագավորություն: Ողջամտություն, ահա ըստ պատմիչի, սա պիտի ուղեկցի լինի քաղաքական գործչին՝ լինի նա թագավոր, իշխան, թե հոգևոր առաջնորդ:

Պատմության վերաբերյալ («Բան ինքնուրոյն սակս յիշատակի անուան իւրոյ»), որն իրականում պատմիչի ինքնագիր հիշատակարանն է, դիմելով հայոց տերերին, Հովհաննես Պատմաբանը խորհուրդ է տալիս նրանց «հորև զմի այդ միանալ» և լսել «քաղաձայնությունն» (միաբանության—Հ. Բ.) խրատին:

Խոսելով Դրասխանակերտցու և միջնադարյան մյուս խոշոր պատմիչների մասին, ֆրանսիացի հայագետ Ֆելիքս Նելլը իր «Քրիստոնեական շրջանի Հայաստանը և նրա գրականությունը» աշխատության մեջ այսպես է բնորոշել նրանց. «Այս բոլոր հեղինակները նկարագրել են աղետալի անցքեր, որոնք մոտիկ հեռավորության վրա հաջորդել են իրար, սակայն դառնորեն ողբալով, նրանք արտահայտել են անկախության վերադառնալու անխափան հույսը, որով համակված էին նրանց բոլոր ժամանակակիցների սրտերը»:

Հովհաննես Պատմաբանը գրել է հարուստ ու ճոխ գրադարով: Հակադրվելով այն ժամանակ արդեն մատնագրության մեջ տառածու գտած «գեղջուկ քանի» ոճին, նա ստեղծագործել է քերթողական արվեստով և մեծ չափով հիմնվել Ոսկեդարի հայ մատնագիրների լեզվաոճական հրահանգների վրա: Ըստ այդմ, ինչպես նկատել է Մանուկ Աբեղյանը, նրա ոճը ձեռք է բերել որոշ նմանողական հատկություն: Արհամարելով իր ժամանակի խոսակցական լեզուն, նա

ցանկացել է նմանվել 5-րդ դարի մատենագիրներին, ձգտելով սեփականել նրանց գրելաձևը և մտածելակերպի ինչ-ինչ կողմեր: Եվ դա ոչ միայն ժամանակի ընդհանուր մտայնության ու ճաշակի արտահայտություն էր, այլև մեծ չափով բխում էր այն հանգամանքից, որ Դրասխանակերտցին իր աշխարհայացքով, քաղաքական համոզմունքներով ու իդեալներով մոտ էր կանգնած 5-րդ դարի պատմիչներին, մասնավորապես՝ Լուիշեին ու Խորենացուն: Սակայն նմանվելով հանդերձ, Հովհաննես Պատմաբանը ամբողջապես չի մնացել նրանց ազդեցության ոլորտում, այլ շատ հաճախ դրսևելոք է ինքնուրույն ու ազկախ մտածողություն և գեղեցիկ ու հուզական պատկերներ: Դրանց շնորհիվ նրա Պատմությունը ձեռք է բերել գեղարվեստական խոր հագեցվածություն և ստացել գրական ստեղծագործության մի շարք հատկանիշներ:

Դրասխանակերտցու լեզուն ու ոճը ումանք (Ստ. Պալասանյան, Եղիշե վարդապետ Դուրյան) համարել են ճոճ ու խրթին, իսկ ումանք (Մ. Աթելյան, Մ. Մկրյան)՝ գունեղ ու ճարտասանական: Ժիշտ է, Դրասխանակերտցու Պատմության մեջ երբեմն կարելի է հանդիպել որոշ խրթին ու մանվածապատ հատվածների, հոմանիշների աճհարկի կուտակումների, բայց ընդհանրապես նա ունի գրավիչ ու հասկանալի գրելաձև, հոնետորական ոճավորման մեծ կարողություն: Պատմիչի բառազանձը հարուստ է, և նա իր հերոսներին և նրանց վարքագիծը կենդանի ու տեսանելի կերպով ներկայացնելու համար մակդիրների մտածված ընտրություն է կատարում: Այսպես օրինակ, Յուսուֆ ուստիկանից թագապսակ ստացած Գագիկ Արծրունու նա անվանում է «թագակերպեայ» և այդ դիպուկ որոշիչով ցուցաբերում իր բացառական վերաբերմունքն այդ թագադրության նկատմամբ: Նույն ձևով նա այսպես անում է Խալիֆայի կողմից շահնշահի տիտղոս ստացած Աշոտ Երկաթին, բայց այս անգամ ոչ թե ծաղրական մակդիրներ է բերում, այլ երկատելով շահնշահ բառը, նրան հեզնաճով անվանում է «շահն կոչեցեալ շահ»:

Դրասխանակերտցու Պատմության մեջ հաճախադեպ են գեղեցիկ համեմատությունները, բնության, ամրոցների, զարդերի ու եկեղեցիների գունագեղ նկարագրությունները: Բայց նա ավելի շատ ողբերգու պատմիչ է, ցնցող ու սահմոկեցնող նկարագրու-

թյունների վարպետ: Որպիսի՞ զարհուրանքով է նա պատկերում արյունալի մարտերը, կոտորածները, բնական աղետները: Անմոռանալի են մանավանդ սուլի, Սմբատ արքայի կտտանքների, Դվինի ներքաշարժի և արաբների կողմից գերված հայերի խոշտանգումների պատկերները:

Ամեն անգամ, երբ երկրի վրա կախվում է թշնամու սուրը, երբ արհավիրքներից հեծեծուս է ժողովուրդը, Դրասխանակերտցին բնարական գեղումների կարգով արտահայտում է իր աղեկեզ վիշտն ու մորմոքը և ցուցաբերում ողբերգուի իր մեծ կարողությունը: Այդ տեսակետից նրա Պատմությունը դառնում է մի յուրօրինակ ողբերգության մատյան:

ՀԱՍՀ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության ամենահին ձեռագիրը 18-րդ դարից է (ձեռ. № 1892, թ. 1ա—82ա): Բացի այդ մեզ է հասել նաև նրա, արդեն հիշատակված, «Շարք կաթողիկոսաց» փոքրիկ աշխատությունը, որը հայ հիսուն կաթողիկոսների մի համառոտ ժամանակագրություն է: և հայ եկեղեցու պատմության համար ունի որոշակի արժեք: Քանի որ 18-րդ դարի ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին Դրասխանակերտցու մասին խոսելիս նրան անվանել է «անյաղթ փիլիսոփայ և պատմագիր», ուստի հավանական ենք համարում, որ Հովհաննես Պատմաբանը հեղինակած լինի նաև իմաստասիրական որոշ աշխատություններ: Հովհաննես Դրասխանակերտցու Պատմությունն ունեցել է հինգ հրատարակություններ. ընդ որում այն առաջին անգամ հրատարակվել է 1841 թվականին Փրանսերեն լեզվով՝ հայազետ Սեն-Մարտենի թարգմանությամբ.

1. Histoire d'Arménie de Jean VI, traduit par Sain-Marlin, Paris, 1841.

2. Պատմագրություն Հովհաննես կաթողիկոսի ամենայն հայոց,

Երուսաղեմ, 1843 թ.

3. Հովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմություն Հայոց,

Մոսկվա, 1853 թ.

4. Պատմություն Հովհաննես կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867 թ.

5. Հովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմություն Հայոց,

Թիֆլիս, 1912 թ.

ՀԵՆՐԻԿ ԲԱՆՉԻՆՅԱՆ



ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԿԻՐԱԿՈՍ ՔԱՀԱՆԱՆ

Հայկական մանրանկարչության ամենահետաքրքրական դեմքերից մեկն է Կիրակոսը: Նրա անվան հետ է կապվում վասպուրականի դարոցի առավել ուշագրավ ճյուղավորումներից մեկը: Ցավոք, քացառությամբ Հարություն Քյուրտյանի մի փոքրիկ հոդվածի¹, որը նվիրված է նրա ձեռագրերից մեկին, արվեստասեր հասարակացությանը, ինչպես նաև մասնագիտական շրջաններին ոչինչ հայտնի չէ այս խիստ ինքնատիպ վարպետի մասին:

Իհարկե, նման մի փոքրիկ հոդվածում հնարավոր չէ տալ այդպիսի նշանակություն ունեցող նկարչի ստեղծագործության թեկուզ և փութանակի արժեքավորումը, անգամ՝ առանձնահատուկ կողմերից մեկի քիչ թե շատ հանգամանալից վերլուծությունը: Ուստի մենք կսահմանափակվենք համառոտակի ներկայացնելով նկարչին, նրա թողած ժառանգությունը և դրա հետ կապված մեկերկու խնդիրները:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում է Կիրակոսի պատկերազարդած կամ գրչագրած հետևյալ ձեռագրերը.

Ա. № 4817, Ավետարան, 1917—1920 թվ. թվ., Ուոկար, գրիչ Հովհաննես, ստացող՝ Տիրացու քահանա, կազմող՝ Կարապետ, 270 թերթ, թուղթ՝ 33×24 մեծության, երկայուն, բոլորգիր: Կան չորս ավետարա-

նիչների պատկերները և համապատասխան անվանաթերթեր:

Բ. № 2829, Ավետարան, 1930 թվ., գրիչ՝ Ստեփանոս, ստացող՝ Պարոն Հովհաննես, 321 թերթ, թուղթ՝ 32×29 մեծության, երկայուն, բոլորգիր:

Կան թեմատիկ ութ մանրանկար, ավետարանիչների դիմանկարներն ու խորանները:

Գ. № 9423, Ավետարան, 1932 թվ., գրիչ՝ Հովհաննես, ստացող՝ Հովհաննես և իր կենակից Ավագ, 344 թերթ, թուղթ՝ 29,5×22 մեծության, երկայուն, բոլորգիր:

Պահպանված են հինգ թեմատիկ մանրանկարներ, ավետարանիչների դիմապատկերները և խորանները:

Դ. № 2745, Ավետարան, 1951 թվ., Ադրակ, Կիլիկիա, գրիչ՝ Կիրակոս (Նկարիչը), ստացող՝ Հովհան, 268 թերթ, թուղթ՝ 30×22 չափի, երկայուն, բոլորգիր:

Կան ավետարանիչների դիմանկարները, խորանները և մեկ թեմատիկ մանրանկար՝ Աստվածամայրը մանուկ Հիսուսը գրկին:

Ե. № 431, Չափաբերականը Ներսես Շնորհալու, 1952 թվ., Ադրակ, գրիչ Կիրակոս (Նկարիչը), ստացող՝ Կարապետ քահանա, 285 թերթ, թուղթ՝ 13×10 մեծության, երկայուն, բոլորգիր: Զեռագիրը ունի միայն գլխազարդեր:

Զ. № 5468, Ավետարան, ԺԴ դար, գրիչ՝ Կիրակոս (Նկարիչը), 318 թերթ, թուղթ՝ 19,5×15 մեծության, երկայուն, բոլորգիր: Կան ավետարանիչների դիմանկարները, անվանաթերթերը և խորանները:

¹ „An Important Armenian. From A.D. 1330. The Journal of the Royal Asiatic society, october, 1939.“

Բացի այս, Կիրակոսի նկարագրողած ևս երկու Ավետարաններ գտնվում են արտասահմանյան հավաքածուներում.

I-ը Նոր Զուղայի սուրբ Ստեփանոսի եկեղեցում², ընդօրինակված 1330 թվ., Լազգշեն գյուղում, գրիչ՝ Խաչատուր, ստացող՝ պարոն Կոստանդ և կենակից Ավագ, 288 թերթ, թուղթ՝ 30,2×22,4 մեծության, երկայուն, բոլորգիր:

Ավետարանիչների դիմանկարներից ու խորանագրողներից զատ այստեղ գտնվում են նաև պատվիրատու Կոստանդիին և նրա կենակից Ավագ տիկնոջ դիմանկարը աղոթելիս, և սրանց որդի Հովհաննեսը՝ ձիու վրա պատկերված:

Երկրորդ ձեռագիրը գտնվում է Հայնալի սուրբ Քառասուն Մանկանց եկեղեցում³, № 33, 1338 թվ., Արծկե, գրիչ Հովհաննես, ստացող՝ Հայրապետ արեղա, 306 թերթ, թուղթ՝ 23×16,5 մեծության, երկայուն, բոլորգիր:

Ձեռագրում պահպանված են տասնմեկ թեմատիկ մանրանկարներ, ավետարանիչների դիմանկարները և անվանաթերթերը:

Այսպիսով, Կիրակոս վարպետից հայտնի է դառնում ութ ձեռագիր մատյան:

Հիշատակագրական սուղ տեղեկությունները հնարավորություն են տալիս ինչ-որ չափով վերականգնել Կիրակոսի կենսագրության մեկ-երկու կողմերը: Ենթադրվում է, որ նա ծնվել է 13-րդ դարի 90-ական թվականներին և մահացել 14-րդ դարի 50—80-ականներին: Ստեղծագործել է Վասպուրականի Աղբակ գյուղաքաղաքում: 1330 թվականին դեռ սարկավագ էր: Իր հիշատակագրություններից քացի այդ մասին տեղեկություն կա նաև Աղբակում 1327 թվ. ընդօրինակված մի գրչագրում⁴: 1351 թվականին նա արդեն քահանա էր:

Նույն՝ 1351 թվականին Աղբեջանի տիրակալ Աշրաֆի կատարած ավերածություններից խուսափելու համար Կիրակոսը թողնում է հայրենի Աղբակը և հեռանում Կիլիկիա: «Թվ. Պ(1351), ի չար և ի դառն ժամանակիս, զի փախուցեալ էաք յերկրէն Ախբակո, ի պատերազմէ այլազգաց իշխանին Աշրաֆին, և գրեցաք յերկիրս Առնոյ, ի բարձր /// այս, քացաւք էաք ի ծաղկագարդ վայելչութիւնս և մատ ի յակունս Տիգրիս գետոյս, ի պանդոկի միոջ, զի ոչ գոյր

/// հովանոցք մեր, և մեք զարն ամենայն ահաբեկ լինլաք և /// ըստ այլ(“) ի տեղիս տեղիս»: Սակայն այստեղ էլ ապահով վիճակ չի ստեղծվում և նա հաջորդ՝ 1352 թվականին վերադառնում է Աղբակ և ձեռնարկում Լատ. № 4911 ժողովածուի ընդօրինակման աշխատանքներին: Կիրակոս քահանան հիշատակում է նաև իր ուսուցչին՝ Ուսեայ քահանային: Մեզ չհաջողվեց ճշտո-



Նկար 1

րեն որոշել, թե ո՞վ է եղել այս Ուսեայ քահանա: Մենք է ենթադրել, որ դա կա՛մ Արտագի ս. Թադեոսի վանքում գործող Հովսեփ նկարիչն է՝, և կա՛մ Քաջքերույաց զավառի Խառապաստա մենաստանի գրիչ Սարգսի ուսուցիչը՝ «զվարդապետն Յովսեփն»:

Թեմատիկ նկարաշարը Կիրակոսի ձեռագրերում ամբողջական չէ: Այստեղ զարմանալիորեն քացակայում են տոնական ցանկի այնպիսի տեսարաններ, ինչպիսիք են՝ «Քրիստոսի մուտքը Երուսաղեմ», «Ուղեկվան», «Մատնությունը», «Խաչելությունը»,

² Ցուցակ հայերեն օնոագրաց Նոր Զուղայի Ամեմափրկիչ վանքի, հատոր Ա, էջ 89—70:

³ Ցուցակ հայերեն ձեռագրաց Հայնալի ս. Քառասուն Մանկանց եկեղեցոյ եւ մասնադրաց, կազմեց Արտավազդ արք. Աուրմեյանը, Երուսաղեմ, 1895, էջ 72:

⁴ «Արարատ», 1811, էջ 480:

⁵ Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 388:

⁶ Լ. Ս. Խաչիկյան, ճշգրիտ աշխատություն, էջ 227:

⁷ Անդ, էջ 182—183:

«Թաղումն Հիսուսի» և «Հարությունը»: Հավանաբար, ձեռագրի թերթերը պոկվել-ընկել են (հազվադեպ գուգադիպություն), աղապես նկարիչը բաց չէր թողնի Հիսուսի կյանքի նկարագրության գլխավոր, հատկապես, վախճանաբանական տեսարանները:

Մի երկու խոսք պատկերագրության մասին: Պատմությունները սկսվում են «ապետման» տեսարանով, (նկ. 1), որի համար նախընտրած տարբերակները թեև հնամենի են, սակայն բավական տարածված:

«Ծննդյան» պատկերում (նկ. 2) հակառակ ենթադրվող «նատուրալիստական»

«Մկրտություն»-ում (նկ. 3) ուշագրավը օդի մեջ, վերևում, գտնվող հրեշտակն է: Գլխիվայր նա բռնել է մի սափոր, որի միջից յուղ է լցվում գետի մեջ կանգնած Հիսուսի գլխին: Սիրարսիի Տեր-Ներսեսյանը նկատում է, որ օդի մեջ գտնվող սափորով հրեշտակի մոտիվը Վասպուրականի պատկերագրության հետաքրքրական կողմերից մեկն է, որը հայկական մանրանկարչության մյուս դարոցներում չի հանդիպում: «Հալա-նաբար,—գրում է Տեր-Ներսեսյանը,— Վասպուրականի մանրանկարիչները Հիսուսի մկրտության ժամանակ ցանկացել են շեշտել նաև օծման փաստը՝ թե սուրբ յուղը Հի-



Նկար 2

նկարագրմանը⁸, շեշտը դրված է Հիսուսի փառաբանման, Նրա երկրպագության կողմի վրա: Թեմայի այդպիսի մեկնաբանումը գրեթե անվերապահ ընդունելություն ստացավ Վասպուրականի հետագա նկարիչների կողմից: Մոտեցման այդ բնույթից էլ, բնականաբար, գալիս են այդ թեմայի «Վասպուրականյան» հորինվածքներում հանդիպող մասնակի հավելումները, որոնք տոնական տրամադրություն են հաղորդում նկարին. հրեշտակների թիվը հասցվում է վեցի, հովիվները պատկերվում են եռուգետի մեջ. բացակայում է զուտ ծննդի հետ կապված Հիսուս մանկանը լողացնելու ինտիմ դրվագը և այլն:

սուսի վրա իջել է սուրբ Հոգու շնորհիվ⁹: Ուշագրավ է, որ այդ մոտիվի նուազին օրինակը Վասպուրականում հանդիպում է մեր հեղինակի մոտ:

Ինչպես Կիրակոսի, այնպես էլ Վասպուրականի շատ նկարիչների աշխատանքներում «Մկրտության» ժամանակ գետի կողքին պատկերվում է կանաչ մի տերևաճյուղ: Այստեղ, սակայն, բացակայում է կացինը, որի առկայությունը ծառի հետ պետք է խորհրդանշեր Հովհաննես Մկրտչի հետ կապված հայտնի միտքը¹⁰: Մեր տարբերակներում ավելի հալանական է թվում ընդունելու Բ. Ռոլլեի ենթադրությունը, թե «Մկրտության» պահի կանաչ բուսամոտիվ-

⁸ Այդ մասին ավելի ընդարձակ տե՛ս Ն. Ս. Кондаков. История Византийской искусства и иконографии по миниатюрам Греческих рукописей, Одесса, 1876, стр. 81:

⁹ Der-Nersessian S., The Chester Beely Library: A catalogue of Armenian manuscripts, Dublin, 1958, p XXXIV.

¹⁰ Հովհաննես, Գ, 10:



Նկար 3

ները երկրորդ ծննդյան կամ հալերժական կյանքի ակնարկությունն են¹¹:

«Պայծառակերպություն» տեսարանում (ճկ. 4) կանոնական ձևերի համեմատությամբ անտվորը մկարի վերին անկյունում աստվածային աջի պատկերն է: Դա, թերևս, պետք է պայմանավորել այն րանի հետ, որ առաջին անգամ հենց այստեղ, այս տեսարանում է բացահայտվում Հիսուսի աստվածային էությունը: Իսկ եղիան ու Մովսեսը բնականաբար ներկայացնում են երկու աշխարհները՝ մեռածների ու կենդանիների՝ ի ցույց այն բանի, որ Հիսուսը իշխանություն ունեն թե՛ կյանքի և թե՛ մահվան նկատմամբ¹²:

Խիստ արխայիկ բնույթ ունի «Ինգեզալքստյան» պատկերը (ճկ. 5): Աղեղնաձև բազմագույն լայն կամարը երկիցքն ու երկիրը անջատում է միմյանցից: Վերևում չորս խորհրդանշական կենդանիներով շրջա-

պատված փառքի արոտին բազմել է Հիսուսը: Յաժում առաքյալներն են, որոնց վրա իջնում է սուրբ Հոգին աղավնու կերպարանքով: Վասպուրականի մանրանկարչության մեջ «Սուրբ Հոգու գալստյան» այս ուշագրավ տարբերակը սկիզբ է առնում Կիրակոսի աշխատանքներից: Այս դեպքում էլ պրպլետումները աղերսներ են ձգում այդ տեսարանի հնագույն, ընդհուպ մինչև 8—10-րդ դարերի օրինակները:

Առավել ինքնատիպը սակայն Կիրակոսի մանրանկարների ոճական առանձնահատկություններն են: Ահա մասնավորապես այս առումով է, որ նրան ուրույն տեղ է հատկացվում ոչ միայն Վասպուրականի, այլ նաև հայկական մանրանկարչության պատմության մեջ: Պետք է ասիսուսալ, որ առ այսօր, ինչպես ասացինք, այդ նշանակությունը իր արժեքով չի բացահայտվել:

Նկարազարդումներ պարունակող էջերը, ինչպես թեմատիկ, այնպես էլ խորանների, զտնվում են ձեռագրերի սկզբում: Հնամենի այդ կարգը ոչ միայն Կիրակոսին է հատուկ, այլև ողջ Վասպուրականի 13—17-րդ դդ. մանրանկարչությանը:

Հորինվածքներն ունեն պարզ-տարածական կառուցվածք: Գործողությունը էջի վրա ծավալվում է ոչ թե խորությամբ՝ հեռանկա-



Նկար 4

¹¹ Н. Похройский, Евангелия в памятниках иконографии преимущественно Византийских и русских. Петербург. 1892, стр. 184.

¹² И. Златоуст, Беседы на евангелия Матфея, ч. II, Москва 1839, стр. 457 (այդ մասին տե՛ս Խան Ն. Պոկրովսկու վերոհիշյալ աշխատությունը, էջ 201):

րի օրենքներով, այլ դեպի վեր, կամ ձախից աջ գնացող դասավորության կարգով: Դա համապատասխանում է նկարաչարի պարզ-պատմողական թմույթին, որից և, բնականաբար, բխում են առանձին մանրամասներ, բխում են առանձին ձևերը: Այսպես, արտա-րի պատկերման ձևերը: Այսպես, արտա-հայտման գլխավոր միջոցը գիծն է՝ շնչու-ված, փոքր-ինչ կռպիտ ու թերևս անկարծ



Նկար 5

թվացող, որն ավելի է ընդգծվում յոթի մա-քուր ֆոնի վրա: Չկա երկրորդ պլան. էջի վրա տեսնում ենք գլխավոր անձանց ֆի-գուրները և ամենաանհրաժեշտ առարկանե-րը: Սակավաթիվ, բայց վառ ու մաքուր գույ-ները հիմնականում նպատակադրված են ընդհանուր տրամադրության ստեղծմանը: Պատկերման այս եղանակում յուրաքանչյուր նկար դիտվում է թեմատիկ ողջ շարի ընդ-հանրության ու շարունակության մեջ: Ծար-ժանկարի կադրերի հաջորդականությամբ մեկը մյուսի հետևից դիտողին ներկայաց-վում են Հիսուսի կյանքի գլխավոր դեպքերը: Սա ընդհանուր մոտեցումն է: Այս ֆոնի վրա աչքի գարնողը խիստ ոճավորումն է, կամ, եթե կարելի է այսպես ասել՝ «մաներայնու-թյունը»: Բաց թողնելով կատարողական մյուս հատկանիշների քննությունը, փոր-ձենք մի երկու խոսքով անդրադառնալ կի-

րակոսի մանրանկարների այդ առանձնա-հատկությանը, քանի որ հենց այդտեղ են ի հայտ եկել որոշ մասնագետների տարա-կարծիքները:

Կիրակոսի մանրանկարների արտաքին ձևակերտման մեկնակետը հանդիսանում է խիստ զարդայնությունն ու ոճավորումը: Դա դրսևորվում է ոչ միայն ֆիգուրների ուրվա-գծերում, հագուստների մեկնաբանման մեջ, այլ, հավասարապես նաև, դիմապատկերնե-րում (օվալի կտրությունը) թերթևոճների ու հոնքերի երկար, աղեղնաձև վերջավո-րություններում, աչքերի լայն բացվածքնե-րում, քիթերի շնչուված թեքվածության մեջ և այլն: Զուտ արևելյան տպավորություն թողնող այս պատկերները խիստ շարժու-նակ են, արտահայտիչ: Հայկական մանրա-նկարչության մեջ մինչ Կիրակոսը մեծ ու-ճով աշխատող որևէ վարպետ մեզ հայտնի չէ: Այս առումով Կիրակոսի մանրանկարնե-րը մոր որակ են¹³:

Ոճավորման այս հետաքրքրական ա-ռանձնահատկությունները տեղիք են տվել միակողմանի կարծիքների հայտնման, ավե-լի հաճախ՝ ակնարկվել է արարական ար-վեստի ներգործության պարագան¹⁴: Իրա-կան էությունը սակայն պահանջում է հար-ցին մոտենալու գերագույն զգուշավորու-թյուն, հատկապես խոսափելով հապճեպ կատարվող եզրակացություններից:

Մի առիթով Գաբեգին կաթողիկոս Հով-սեփյանը գրել է. «Ասորիքը, Միջագետքը, Պարսկաստանը, Հայաստանը, Կապադով-կիան, մինչև իսկ Փոքր Ասիայի միջին գա-վառները մի ամբողջություն են կազմում ար-վեստի տեսակետով»¹⁵: Եվ եթե այս խոսքե-րից հետո հիշենք Ն. Մառի հայտնի թեզը, որ տարբեր ժողովուրդների հուշարձաննե-րում ընդհանրության գծերը իրենց բացա-տրությունը ստանում են թերևս ոչ այնքան մեկը մյուսի վրա ազդելով, որքան աղբյու-րների ընդհանրությամբ¹⁶, ապա պարզ կդառ-նա վերը ակնարկված միակողմանի ազդե-ցության անհիմն լինելը: Փաստերը ցույց են տալիս, որ և՛ հայկական, և՛ արաբական մանրանկարներում արևելյան «ոճամուսնե-րայնության» մեզ հետաքրքրող ձևերը գրե-

¹³ Այնուհետև, ընդհուպ մինչև 16-րդ դարը, ոճա-կան այս առանձնահատկությունները պահպանվում են վասպուրականում:

¹⁴ Ե. Նիկողոսյան, Հ. Զյուրտյան, Ա. Սվիրին, Տ. Իզմայլովա և այլն:

¹⁵ «Հայ արվեստի ծագումն ու ոսկեդարը» («Հասկ», 1954, հունվար):

¹⁶ H. Mapp, Апоп, стр. 124.


միաժամանակ են դրսևորվում¹⁷։ Բայց ց այստեղ, ընդհանուր ձևերի ու աղբյուրի այդ խորթին կապերի մեջ պետք է գրտն առանձնացնել այն հատուկը, մասին, որը ամեն մի ժողովուրդը իր գեղատական իմացություններից ու նախասիրյուններից համապատասխան վերցնում էականում, սեփական ձև ու լեզու տալիս։ Այդ տեսակետից կիրականի, և ընդորայես Վասպուրականի, մանրանկարյունը, իր հիմքով տեղական է։ Ա. Չոյանի խոսքերով ասած՝ «Ուս սկիզբ է ահին արևելյան, միջագետական, սիրիա-ալանդներից, ազդել է ու փոխազդել, և ու վերցրել այն, ինչը իր նախասիրյուններից ավելի է համապատասխանել ուրեղացրել ու կազմավորվել է գուտային թողում»¹⁸։ Վասպուրականի և աական մանրանկարչության միջև ի հայտնմանությունները ավելի արտաքին թի են, մասնակի։ Միջնդեռ դրանք վում են միմյանցից գեղագիտական բեր կարգով ու պատկերաբաններով, ցկություն ըմբռնման միանգամայն այլ ցումով։ Վասպուրականի մանրանկար-

ները ունեն ավելի գուտայ բնույթ, պարզ ու տպավորիչ ձևեր։ Գույները սակավաթիվ են և մեծ մասամբ դրվում են մաքուր։ Արար մանրանկարիչները, ընդհանրապես, սիրում են մանրանալ ձևերում՝ դեմքի (որոնք, ի դեպ, հակառակ Վասպուրականի, երկարավում են և ունեն մեղ-ձգված աչքեր), հագուստների մեկնաբանման մեջ, շրջապատող առարկաների նկատմամբ։ Հայկական մանրանկարների կրակոտ ու անհանգիստ ոգին, խոր ներշնչվածությամբ ասես անհամատեղելի են արաբական մանրանկարների դանդաղկոտ շարժումնին։ Ըստ էության, մենք գործ ունենք սկզբունքային այլ բնույթի աշխատանքների հետ, որտեղ դրսևորվող նմանությունները գուտ արտաքին-հայնջողական բնույթ են կրում և հետևանք են սեղանության ընդհանուր շփումների։ Թերևս այստեղ սխալ էր լինի հիշել նաև չինացիների, մոնղոլների և մանավանդ սելջուկների նվաճած երկրների արվեստում նրանց թողած հետքերի մասին։ Բայց այդ դեպքում մեր հետազոտության հնարավորությունները խիստ սահմանափակ են, քանի որ սելջուկյան համարվող արվեստի քննությունը դեռ համակողմանիորեն չի կատարված։ Նման խնդրի ճիշտ լուսաբանման համար անհրաժեշտ է ոչ թե սոսկ արտաքին նմանությունը հիմք ընդունել, այլ խորը վերլուծության եմթարկել այդ արվեստը սնուցող հողը, տվյալ դեպքում՝ Վասպուրականի 11—13-րդ դարերի մշակության ու սոցիալական իրավիճակը, գեղանկարչական ավանդույթները, նոր հոսանքները (և իհարկե՝ արտաքին) ու գեղագիտական ըմբռնումները։ Իսկ այդ տեսանկյունից ելնելով, չժխտելով փոխազդեցությունների պարագան, պետք է վերապահությամբ մոտենալ Կիրակոսի, և ընդհանրապես Վասպուրականի, մանրանկարչության վրա հաղդադի արաբական արվեստի միակողմանի ազդեցության տեսակետին։ Սա Կիրակոսի արվեստի հետ կապված հարցերից մեկն է։

դանք մեզանում նկատվում են դեռևս 5—7-րդ ի քանդակագործության մեջ։ (Տես Բ. Ն. Աան, Հայկական պատկերաբանականությունը 4—7-րդ դարում, Երևան, 1949), 10—11-րդ դդ. մանրանկարում (գույն և պարզունակ ձևերով) տե՛ս շումի մատենադարանի № 2555, Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 874, 3784, 3723 և հատկապես 12-րդ դարի №№ 3756, 4753 ձևագրություն։ Ուշագրավ են նաև պեղումներից հայտնարկված նույն ժամանակաշրջանի ռախնապակյա և կավե ամանեղենի ու այլ իրերի վրայի պատկերները։ Արաբական գեղանկարչության հնագույն բնորոշ նմուշները թերևս Սամառայի և կուսկյ-ամյայի 9—10-րդ դդ. որմնանկարներն են, ինչպես նաև դեկորատիվ-կիրառական ու ձևագրական արվեստի նմուշները (տե՛ս Arab painting, Treasures of Asia, Text by Richard Ettinghausen, 1962)։

¹⁷ Տես «Պարսիկ և Ռայ մանրանկարչությունը» («Անաթոլիա», № 3, 1928)։

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ
(Արվեստագիտության թեկնածու)





ՅՈՒՑԱԿ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶՆՈԱԳՐԵՐԻ*

№ 814

ՍԱՀՄՈՍՆԵՐ

Թերթերը՝ 202:—Պրակները՝ թերթերը կազմված չեն, այլ երեք տեղից ծակված լինելով ամրացված են երեք օղակաձև մետաղներով:—Մեծությունը՝ $25,4 \times 17,7 \times 2,8$ սմ.:—Նյութը՝ սովորական դիմացկուն թուղթ:—Կազմը՝ արվեստական սև կաշի:—Պահպանակները՝ սկզբում և վերջում մեկական դեղին թուղթ և ստվարաթուղթ:—Վիճակը՝ քավարար:—Գրությունը՝ միասյուն:—Պատարկ թղթերը՝ 2ա, ինչպես նաև ձեռագրի քուր թերթերի 2-րդ երեսը:—Տողերը՝ անկանոն, 22—28:—Գծումները՝ տպագրված զծավոր թուղթ:—Գիրը՝ նոտագիր:—Զարդագրություն՝ չունի:—Թարգմանիչը և գրիչը՝ Տիրայր արքեպիսկոպոս Մեղիք-Մուշկամբարյան (Տեր-Հովհաննիսյան), միաբան Մայր Աթոռ ս. Էջմիածնի:—Ժամանակը՝ 1888—88 թթ.:—Վայրը՝ Նյու-Յորք (ԱՄՆ):—Մանրագրություն՝ Մայր Աթոռի Զեռագրատունը 1880 թ. ստացած է Եվրո գրչի եղբոր որդի Տիգրան Մելիքի (Նյու-Յորք), Մայր Աթոռի՝ դիվանապետ Հայկ Առաքելյանի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հին Կտակարանի «Գիրք Սաղմոսաց»-ի սկզբի մասի աշխարհաբար ազատ թարգմանությունն է սա, թարգմանված նույն ինքն գրչի կողմից ոտանավորի ձևով և Ռանգավոր: Առաջին այս ձեռագիր մատյանն ընդգրկում է սաղմոսների Ա—Կ (1—80) 80 գլուխները:

2. Յուրաքանչյուր գլխի վերջում նշված է տվյալ գլխի թարգմանության և գրչության տարին, ամիսն և ամսաթիվը, ինչպես նաև քաղաքի անունը:

* Ծարումանված «Էջմիածին» ամսագրի 1884 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1885 թվականի №№ Ը—Ժ-ից, 1886 թվականի № Է-ից, 1870 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1871 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1872 թվականի №26 Ա—Բ-ից, Դ-ից և 1873 թվականի №№ Ա—Բ-ից:

3. Հին Կտակարանում չկա «Օրհնություն Մովսեսի և Իսրայելի որդիների» գլուխը, որ գրել է գրիչը իր մատյանում (տեսնել թթ. 52ա—57ա):

4. Սաղմոս ԺԹ երկու անգամ է թարգմանված, որոնք իրարից որոշ տարբերություն ունեն (տեսնել թթ. 81ա—84ա):

5. Սաղմոս ԾԱ երկու անգամ է թարգմանված, որոնք նույնպես իրարից որոշ տարբերություն ունեն (տեսնել թթ. 175ա—178ա):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.—Սաղմոսներ

Աշխարհաբարի վերածննդ

Տիրայր արքեպիսկոպոս Մեղիք-Մուշկամբարյան Միաբան Մայր Աթոռի ս. Էջմիածնի.

Նիւ-Յորք:

Թ. 4ա.—888 Յուդեայ 27, Եշ. N. York.

Թ. 18ա.—888 Նոյ. 8, Որ. Brooklyn, N. Y.

(Յակ. Թերեքեցեանի տ.):

Թ. 82ա.—887 Յուդեայ 24, Կր. N. York.

Թ. 202ա.—888 Նոյ. 18, Դշ. N. Y.

(Այսպես յուրաքանչյուր մի քանի էջում կա գրչության ճշգրիտ թվականը):

№ 815

ՍԱՀՄՈՍՆԵՐ

Թերթերը՝ 184:—Պրակները՝ թերթերը կազմված չեն, այլ երեք տեղից ծակված են երեք օղակաձև մետաղներով:—Մեծությունը՝ $25,1 \times 17,5 \times 2,8$ սմ.:—Նյութը՝ սովորական դիմացկուն թուղթ:—Կազմը՝ արվեստական սև կաշի:—Պահպանակները՝ սկզբում և վերջում մեկական դեղին թուղթ և ստվարաթուղթ:—Վիճակը՝ քավարար:—Գրությունը՝ միասյուն:—Պատարկ թղթերը՝ ձեռագրի քուր թերթերի 2-րդ երեսը դատարկ է:—Տողերը՝ անկանոն, 22—24:—Գծումները՝ տպագրված զծավոր թուղթ:—Գիրը՝ նոտագիր:—Զարդագրություն՝ չունի:—Թարգմանիչը և գրիչը՝ Տիրայր արքեպիսկոպոս Մեղիք-Մուշկամբարյան (Տեր-Հովհաննիսյան), միաբան Մայր Աթոռ ս. Էջ-

միածնի:—Ժամանակը՝ 1898—98 թթ.:—Վայրը՝ Նյու-Յորք (ԱՄՆ):—Եանդթություն՝ Մայր Աթոռի Ձեռագրատունը 1860 թ. ստացած է նվեր գրչի եղբոր որդի Տիգրան Մելիքից (Նյու-Յորք), Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանի միջոցով:

ԲՈՎԱՆԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հին Կտակարանի «Դիրք Աղմուսաց»-ի միջին մասի աշխարհարար ազատ թարգմանությունն է սա, թարգմանված Գույն ինքն գրչի կողմից ոտանավորի ձևով և հանգավոր: Երբորդ այս ձեռագիր մատյանն ընդգրկում է սաղմոսների ԿԱ—ԾԺ (81—110) 50 գլուխները:

2. Յուրաքանչյուր գլխի վերջում նշված է տվյալ գլխի թարգմանության և գրչության տարին, ամիսն և ամսաթիվը, ինչպես նաև քաղաքի անունը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

- Թ. 9ա.—938 Նոյ. 17, Գե., N. Y.
 Թ. 48ա.—936 Դեկտ. 12, Եր.
 Տոն Մեքմայ Հայրապետի. N. Y.
 Թ. 84ա.—937 Փետրուար 8, Բ2.
 Brooklyn, Մեծ պահոց ա. օր:
 Թ. 141ա.—938 Փետրուար 24, Ի2.
 Տոն Ս. Վարդանանց, N. York.
 Թ. 155ա.—938 Փետր. 26—27, Եր. Կր.
 Բուն Բարեկենդան, N. York.
 Թ. 184ա.—937 Յունուար 18, Բ2. N. York.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 187ա.—Peter P. Peterson.

№ 318

ԱՆՂՄՈՍՆԵՐ

Թերթերը՝ 228:—Պրակները՝ թերթերը կազմված չեն, այլ Լորեք տեղից ձակված լինելով ամբողջված են Լորեք օղակաձև մետաղներով:—Մեծությունը՝ 25,5×17,5×2,7 սմ.:—Նյութը՝ սովորական դիմացկուն թուղթ:—Կազմը՝ արվեստական սև կաշի:—Պահպանակներ՝ սկզբում և վերջում մեկական կապտավուն հաստ թուղթ:—Վիճակը՝ բավարար, միայն վերջին մասը, թթ. 179—228, երկաթյա օղակներից դուրս է հանված:—Գրությունը՝ միասյուն: Դատարկ թղթերը՝ ձեռագրի քուրթ թերթերի 2-րդ երեսը դատարկ է:—Տողերը՝ անկանոն, 28—27:—Փծումները՝ տպագրված գծավոր թուղթ:—Գիրը՝ ցուրդգիր:—Ձարդագրություն՝ չունի:—Թարգմանիչը և գրիչը՝ Տիրայր արքեպիսկոպոս Մելիք-Մուշկամբարյան (Տեր-Հովհաննիսյան), միալան Մայր Աթոռ ս. Էջմիածնի:—Ժամանակը՝ 1898—98 թթ.:—Վայրը՝ Նյու-Յորք (ԱՄՆ):—Եանդթություն՝ Մայր Աթոռի Ձեռագրատունը 1860 թ. ստացած է նվեր գրչի եղբոր որդի Տիգրան Մելիքից (Նյու-Յորք), Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանի միջոցով:

ԲՈՎԱՆԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հին Կտակարանի «Դիրք Աղմուսաց»-ի վերջին մասի աշխարհարար աղյուս թարգմանությունն է

սա, թարգմանված Գույն ինքն գրչի կողմից ոտանավորի ձևով և հանգավոր: Երբորդ այս ձեռագիր մատյանն ընդգրկում է սաղմոսների ԾԺԱ—ԾԾ (111—150) 50 գլուխները (թթ. 1—127):

2. Ձեռագրի վերջին մասում կա հավելված, որտեղ աշխարհարարի է վերածված հետևյալ բաժինները (թթ. 128—176ա).—

Թ. 128ա.—Օրհնություն Մովսես մեծ Աստուածատես մարգարեի.

Թ. 137ա.—Օրհնություն Մովսես Աստուածատես մեծ մարգարեի.

Թ. 142ա.—Նոյն Մովսես մարգարեի.

Թ. 145ա.—Աղօթք Սամուելի մօր՝ Աննայի.

Թ. 148ա.—Օրհնություն Եսայի մարգարեի.

Թ. 154ա.—Օրհնություն Կաթակամաքուր Եսայի մարգարեի.

Թ. 158ա.—Աղօթք Յովնան մարգարեի.

Թ. 159ա.—Աղօթք Ամբակում մարգարեի.

Թ. 165ա.—Սաղմոս Դաւթի, արտաքոյ սաղմոսների թուից. ասուած այն ժամանակ, երբ ախօյեանց Կալ Գողիարի դէմ՝ Սաուդի առաջ:

Թ. 187ա.—Օրհնություն Յովհաննէս Մկրտչի հայր Ջաքարիայի.

Թ. 170ա.—Օրհնություն Մարիամ Աստուածածնի.

Թ. 172ա.—Աղօթք Սիմէոն Եբրուճու.

Թ. 173ա.—Աղօթք Հրէաստանի Նեկկիայ արքայի, երբ հիւանդացաւ և ոտքի Լաւ հիւանդութիւնից.

Թ. 177ա.—Ցանկ:

(Ձեռագրի հետևում կա 45 թերթ (թթ. 179ա—223ա), որտեղ աշխարհարարի է վերածված հետևյալ սաղմոսները՝ ԻԾ, ԼԳ, ԽԱ, ԽԲ, ԻԶ, ԽԳ, ԽԴ, ՀԸ, ՀԹ, ԶԳ, ԸԱ և «Օրհնություն Մովսես Աստուածատես մեծ մարգարեի»):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

- Թ. 2ա.—937 Յունուար 17 Կր. N. York.
 Թ. 58ա.—938 Մարտ 10 Ե2:
 Brooklyn, N. Y. 528 8th st.

Յ. Թերթեքեան:

Թ. 128ա.—Ցանկումներ.

Մասեր, որոնց գտնում են Սաղմոսարանի մեջ և ընթերցանութեան համար են սահմանում հոգևոր դասի և հաւատացեալների համար:

Թ. 186ա.—1898 Ապրիլ 21 Ե2:

ԾՆՆՈՂՅԱՆ 71-րդ տարուայ տարեկիցից աւարտեցի Աղմուսների և իւր յաւելումների ամբողջական թարգմանութիւնը՝ գրաքառ քնագրից աշխարհարար, յանգաւոր տողաչափութեամբ, Տիրոջ օգնութեամբ և օրհնութեամբ՝ իմ ժողովրդի հոգևոր կարիքները լցուցանելու նպատակով:

S. A. B. N. York.

Թ. 144ա.—938 Ապր. 18 Բ2. Մեռելոց. N. York.

Թ. 179ա.—S. A. B. Սաղմոսներ:

Թ. 222ա.—938 Փետր. 28. Որ. N. York.

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 222ա.—Peter P. Peterson.

№ 317

ԱԿՏՆԱԿԱՆ

Թերթերը՝ 307 (302+5):—Պրակները՝ 27, աճախ-մաշակի: Պրակ ի՛ն՝ 4, Ա՛՝ 5, Թ՛՝ և Ժ՛՝ 9, Բ՛՝ 10, Է՛՛ և Ժ՛՛՝ 11, Գ՛՛, Դ՛՛, Ե՛՛, Զ՛՛, Ը՛՛, Ժ՛՛, ԺԲ՛՛, ԺԳ՛՛, ԺԵ՛՛, ԺԶ՛՛, ԺԸ՛՛, Ի՛՛, ԻԱ՛՛ և ԻԲ՛՛՝ 12, ԻԳ՛՛, ԻԴ՛՛, ԻԵ՛՛ և ԻԶ՛՛՝ 14 թերթ:—**Մեծությունը՝** 25,5×18,5×8 սմ.:—Նյութը՝ դեղնած ե կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, երկու երեսին ճճշումով մեծ խաչ և զարդեր են նկարված դրսի կողմից, իսկ ներսում երկու երեսին էլ կազմված է ճախշատ-գունավարդ երկու կտոր, որոնց վրա մեծատառ երկաթագրով (մոտ 4 սմ. երկայնությամբ) գրված է «ՋԱ. ՅԱ.»:—**Պահպանակները՝** ձեռագրի վերջում կա երկու թերթ մագաղաթ, որի մեկ երեսին միայն գրված է մանր երկաթագրով: Մագաղաթը վատ վիճակում է, դեղնած և կեղտոտած: Ժամանակը՝ 10—11-րդ դարեր:—**Վիճակը՝** անբավարար:—**Գրությունը՝** երկայուն:—**Դատարկ թղթերը՝** 1Ար, 1Բ, 1Գ, 1Դ, 1Ե, 2Յա, 2ՅԳ, 301բ, 302ա, 302բ:—**Տողերը՝** 18:—**Գծումները՝** ճշումով:—**Գիրը՝** քոյրգիր:—**Ջարդագրությունը՝** ձեռագիր ունի գեղեցիկ շուսանցագրեր, թույններ, կնդակների գլուխներ և կնդակներ, գմբեթներ, խորաններ (14Յա և 2ՅԳ), սրբեր, խաչեր, թույնագրեր, զարդագրեր, մարդագրեր և զազանագրեր: Սկզբում կա չորս թերթ համարադրած: Բազմաթիվ մեծածավալ նկարներ կորել են ձեռագրից, պահպանվել են միայն երեքը (թթ. 282բ, 283բ և 284բ), որոնց պատկերացումն են Հիսուսի խաչելությունը, Ղազարոսի հարությունը և Հովհաննես ամենաարա-նիշը:—**Գրիչը՝** ներսես:—**Ժամանակը՝** 15—16-րդ դարեր:—**Մաղկոդը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 15—16-րդ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** ստացված է Նվեր ճերքի թանկից: Վեհափառ Հայրապետը Ջեռագրատուն հանձնեց 1872 թ. հուլիսի 15-ին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 141բ.—Արձույթից որ կարդա. գովութիւն) որ լսէ: Փառք փրկչին, և յիշատակ քաղմամեղ գրչին (կապգրի ներսես):

Թ. 289բ.—Փառք ամենասուրբ Երրորդութեան լայմ և յախտեանս յախտեմից: (Կապգրի ներսես):

Ենթին և ողորմութիւն և գոհութիւն և փառաւորութիւն և երկրպագութիւն մարդասէր և քարեքար Երրորդութեան և մի աստուածութեան Հայր և որդւոյ և հոգւոյն սրբոյ յամենայն գոյից յախտեանս յախտեմից ամմն:

Ըստ ամենառատ շնորհացն Աստուծոյ անբաւա-պէս հեղեալ ի մարդիկ քաղմադիմիք (թ. 300ա) են տեսակց քարեաց և ճանապարհք փրկութեան որովք հմարաւորիմ ցիր և ճապաղ ախորժակք մարդկան. արիճակաւ ի փառակցորդութիւն քարուն յարձա-կի, և այնու պատճառաւ ըստ չափոյ կարողութեան, յԱստուած մերձեմալ և քարուն մասին ի միջ համ-դիպի: Որոք մեծն և ճշանաւոր արեամբ չափ հա-հատալիքն. որպէս վկայիցն, որ է կատարելագոյն սու Աստուած ճշմանկ սիրոյ ե այլքն ըստ ճմանկ,

կամ անճճական ճուրք Աստուծոյ որպէս ճգնողա-կամ ժուժկալութիւնք, կամ առ ընկերս քարեգործու-թիւնք, որպէս սէր, ողորմութիւն, խոնարհութիւն և այլ քաղում ինչ այսպիսի: Ընդ որս և յորոք ի քաղ-եաց մասանցն է, և գիրս աստուածայինս ստանալ ի փառս Աստուծոյ, ի շահ անձին և յազոտ ճաշա-րակաց, ի պայծառութիւն լրման եկեղ(եց)ոյ և ի կատարումն աստուածաւանդ (թ. 300բ) կարգաց քահանայութեան, որ և տիրապէս անընդմիջաբար յԱստուծոյ տուեալ ի մարդիկ մեծ և աստուածային պարզն և յետ Աստուծոյ փոխանակ Աստուծոյ արի-նադրաւ ժարդկան և ուսուցիչ գկամս Աստուծոյ: Որոք ծայրք և կատարումն աստուածայնոց տառիցն Անտարանս սրբոյ: Որ ունի յայտնապէս ճշմարտու-թեամբ զպատմութիւն աստուածեղէն մարդեղու-թեանց Բրիստոսի, այն որ զաստիկ գլորումն մարդ-կան ազգի կանգնեաց վերստին անկասկած հաստա-տութեամբ, որոց հաւատասցին աստուածագործ տնտրելութեան ճորա և փրկական ճանապարհաց ճորա հետեմամբ, մամանցեցն քացիւնս համարձա-կութեամբ տեսանել զնա ի միս անգամ զալստան ճորա, և լսել ի ճմանէ զերանական կոչումն:

Մինչ այսմ աստուածաւանդ Սուրբ Անտարանիս ցանկացայ ես ճուստ և անպիտ ... (ձեռագրի հա-ջորդ թերթերը կորել են, որով հիշատակարանը կի-ստու է մնում):

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 301ա.—Յիշատակ է Սբ. Անտարանս արգրում-ցի քոյքի Մեկիկ որդի տիրացու Գրիգորեմ և իւր հանգուցեալ կողակցոյն Համասի հուզոյն և (երկու տող քաց է թողնված) հուզոյ այս երեքս տիրոյ Գրի-գոր և իւր կենակիցն Մարիամն և (կես տող սրբված է) ...անց վերստին ըստացան Ը (100) դրչի և և-տուն ի ձեռն Տէր Հստեփան քահանային ի գողն յՀղտաձոր ի դուռն Սուրբ Զակարյա և Սուրբ Աստ-ուածածնի եկեղեցուն յիշատակ իւրեան կնդանեաց արևոյն և ճնչեկեղոցն հուզոյ ոչ ուզ եթէ կարքաոր եթէ աշխարական չունի հրաման ձեռնամուխ լիմելոյ կամ ծախելոյ կամ այս եկեղեցոյս հանելոյ, եթէ ոք անդղձնի կամ հանէ կամ ծախէ, պատիճն Կայէմի, մասն Ութայի և խաչայիսանաց առցէ Սուրբ Երրոր-թումն իւրեան հոգոյն և մարմոյն դադախազ լիցի և ասացն հրեշտակը և մարդիք, եղիցի եղիցի ամեն: Գրեցաւ թվին ՌՄԻԳ-ին (1774 թ.—Ն. Մ.) Ումիս Ե:

№ 318

ԱԿՏՆԱԿԱՆ

Թերթերը՝ 283:—Պրակները՝ 22, յուրացանչուրը 12-ական թերթից, քացի իԲ՛՝ 9 և ժԲ՛՛ 11 թերթից են:—**Մեծությունը՝** 22×15×7 սմ.:—Նյութը՝ դեղնած ե կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ: Նախնական կաշյա կազմի վրա կա երկ-րորդ կաշյա մի երես, որի վրա կարդացվում են մի քանի բառ «Անտարան Զս.ի Զս.ի...»: Մնացալ բառերը անընթեռնելի են:—**Պահպանակները՝** սկզբ-ում երկու և վերջում մեկ թերթ հասարակ թղթեր

կան:—Վիճակը՝ քաղաքաբար:—Գորությունը՝ երկայուն:—Պատարկ թղթերը՝ 1ա—4ա, 282ա, 282բ:—Տողերը՝ 21:—Պեղումները՝ ճնշումով:—Գիրը՝ քոլորգիր:—Ջարդագրություն՝ Ջուղայի դպրոցի մանրանկարչության գեղեցիկ մի ցմուշն է սույն ձևագիրը: Ունի շատ սիրուն լուսանցավարդեր, թռչուններ, ծաղիկներ, գմբեթներ, խաչեր, ինչպես նաև քաղաքի պաշտպանության և վարդապետ: Ջուղագրում կա մեկական խորան (թ. 5ա), գլխավորը (թ. 159ա) և մի ամբողջական էջ, որտեղ նկարված են չորս ավետարանիչները (թ. 4բ):—Գրիչը՝ անհայտ:—Պատվիրատու՝ Աղաջան:—Մաղկոդը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1703 թ.:—Վայրը՝ ս. Գևորգ եկեղեցի, Ապահան-Ջուղա:—Մանրությունը՝ ստացված է նվիր իրանցի հայրենիք ներգաղթած մի հայրենակցի կողմից: Վերափառ Հայրապետը՝ Ջուղագրատան հանձնակ 1972 թ. հունիսի 15-ին:

ՀԻՇԱՏԱԿԱՆԱՆՈՒՄ

Թ. 5ա.—Թվ. 4ի. (1703 թ.—Ն. Մ.) և լամսևանն ապրիլ. Ե. շմս. ժ.Ջ. սկիզբն:

Թ. 258բ.—Ցիշատակարան գրույ: Փառք համազոյ գուգափառ և հատաբարպատի: Մուրք էրբորդու-թառն Հօր և Որդույ և Հուգույն Արդու, յառաջ քան զամենայն յափտեան ամլն:

Ընթերցող Սուրբ Հոգույն սկսած Սուրբ Աստուծան և կարողութեամբ նորին աւարտ հասուցաց: Ի թուականութեան հայոց ՌԺԾԻ (1703 թ.—Ն. Մ.) Յու-նիսի 16 (18) և Ի շրթա Լ, Ի քաղաքիս Ասպանում: Ջուղայ, ընդ մովանեա Սուրբ Գեորգեայ հոշակաւոր եկեղեցույս, Ի թուագրութեան պարսից Յաւ Սելան Յուսէնին, և Ի կաթողիկոսութեան հայոց Տիառն (հունիսի 2ի գրված, տեղը քաց է թողնված), և Ի առաջնորդութեան Ջուղայոյ Տէր Աղեքսանդր արհի-հայրակոյտսին, և Ի քաղաքապետեան Խոջայ Ղուկասին: Որոյ այսպիսի աստուածային զանձին փա-րագօղ կղեւլ քարեմիտ և Ուղանդի և խոնարհա-միտ և արքաներ և համեմարեղ պարոն Աղաջանն և եւ գրել Ի հայալ վաստակոյ իւրոյ յիշատակ իւր... (հաջորդ էջը կտրել է, որով հիշատակարանի սնաց-յալ մասը պակասում է):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Պ. 217:

Թ. 4ա.—Ծնեց Ապրահամ Թումանյան 1892 ձն. թիւ, Ապրահամ Թումանյան վախճանեց 1949 թիւի:

Թ. 280ա.—Գրեցի որ իմանաք, Ապրահամն որ փո-խեցաւ առ Աստուած ամի Տեառն 1891 յունընվարի 8: Ապրահամն որ Աստուած տվեց ամի Տեառն 1892 յունվարի 20, Այմասն որ Աստուած տվեց ամի Տեառն 1898 օգոստոսի 10:

Մատաղն որ փոխեցաւ առ Աստուած թվից 1897 Ջատիկի ուրբաթ օրն: Մաղադն որ Աստուած տվեց թվից 1898 ճոնքերի 30: Սիմոնն որ Աստուած տվեց թվից 1895 մաիսի 20:

Խողապէրդին որ Աստուած տուց թիւն 1804ին Նոնմերի 20ին:

Ծաւերդին որ Աստուած տուց թիւն 1908ին մարտի 10ին:

Թումանյան որ փոխեց առ Աստուած թիւն 1808ին դեկտեմբերի 20-ին:

Ղուկասն որ հանգեաւ Ի Տէր 116 1812 թ. դեկ-տեմբերի ամսոյ:

Սահակ Ակօրի որ Աստուած տվեց 116 1809 վա-րամն յիցի:

Թ. 280բ.—Ոսկան որ հանգեաւ առ աստուածութիւն 1912ին յունիսի 10-ին:

Այմասն որ հանգեաւ առ Աստուած 1914 թին փետրվարի 6ին:

Թումանյան որ Աստուած տվ. 8 թիւն 1914ին:

Այմասն որ Աստուած տուց թիւն 1914ին:

Խնկին որ Աստուած տուց թիւն 1918ին:

Աքրահամ Թումանյան որ ամուսնացաւ թիւն 1918 յունիսին:

Պողոսն որ Աստուած թիւն 19(1)9ին:

Միհայն որ ամուսնացաւ թիւն 1915ին:

1918 թին ցորեանն ընդ 30 թուման, դարմանն զիդը 2 դան առանք, վերջն ժարդիքն հանգեալսոյի հաճով մեռան և ոչխարն չափով տարաւ. եյի փո-լին փայ կտրեցն ընդ 80 թուման սկսմի համար Աստուած վկայ:

Հրիստիանն որ Աստուած տուց թիւն 1920 թն. յուն-վարի 16:

Խայնումն որ Աստուած տուց թիւն 1920:

Թումանյան որ ամուսնացաւ թիւն 1922 դեկտեմբերի: Ովայնէն որ ամուսնացաւ 1922ին դեկտեմբ.:

Թ. 281ա.—Խոյկն որ Աստուած տուց թիւն 1923-ին:

Միհայն որ ամուսնացաւ Ի 1923ին:

Մաթեոսն որ Աստուած տուց թիւն. 1924 փետրվա-րի 10ին:

Նուդապէրդին որ ամուսնացաւ Ի թ. 1928ին:

Արհակն որ ամուսնացաւ թ. 1928:

Յակօրի որդի Այմասն որ հանգեաւ առ Աստուած թն 1933ին փետրվարի 2ին, օրն շաբաթը:

Մայիզն որ Աստուած տուց թն. 1928ին:

Փիրիզադն որ Աստուած տուց թն. 1928ին:

Թեյլուն որ Աստուած տուց 1928 թն:

Գալուստն որ Աստուած տուց 1922ին:

Սահրուպն որ Աստուած տուց 1928ին:

Գոլխանումն որ Աստուած տուց 1927ին:

Դայգուն որ Աստուած տուց 1928ին:

Աքրահամի որդի Այւշումն որ Աստուած տուց թն. 1933ին փետրվարի 18 օրն շաբաթ վայելումն ինի:

Թ. 281բ.—Թուրվանդն որ փոխեցաւ առ Աստուած թիւն 1846 ռոկտի:

Ակորն որ փոխեցաւ առ Աստուած թիւն 1846ին:

Լուսինն որ փոխեցաւ առ Աստուած 1842:

ճնդյան թիվը

Աքրահամյան Լուսին 1849 թ.

Աքրահամյան Աքրահամ 1850 թ.

Աքրահամյան Ակոր 1853—1854 թ.

Աքրահամյան Մայիս 1855 թ. մայիսի

1-ին գիշերվա ժամը 4-ին:

(Ծարունակելի)



ԷԿՈԼՄԵՆԻԿ ԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՑ

Ի տ ա յ ի ա

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԵՐԵՎՈ

ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԱՀԱՍՏԱՑ
ՄԱՏՈԱՆ ՕԾՈՒՄԸ ՄԻԼԱՆՈՒՄ

Մեղա քաղաքի քաղաքապետարանի մալաձեռնությամբ 1972 թվականի նոյեմբերի 27-ին տեղի «Տղամարդկանց առողիտորիում»-ի ընդարձակ սրահում տեղի է ունեցել «հանգիստն էր եկել» հայերի հետ: Հանգիստն էր եկել և եղել մի հոծ բազմություն, որին մաս են կազմել շատ հայեր Միլանից:

Հանգիստն էր եկել ընթացքում ուղերձներով հանդես են եկել Մեղայի քաղաքապետը, կաթողիկոս եկեղեցու եպիսկոպոս, անվանի գրող մոնսեյնյոր Է. Գալքիատին և Միլանի հայոց հոգևոր հովիվ տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանը:

Օրվա գլխավոր բանախոսն է եղել վեհապետի Միլանի միաբանության անդամ հայր Ռաֆայել Անտոնյանը, որը տպավորիչ մի դասախոսությամբ ներկայացրեց ծանոթացրել է Հայաստան խառնաձուլ, նրա պատմությանն ու մշակույթին: Ապա խոսքի մարտարապետ պրոֆ. Ա. Նովիկին պատմադիվի վրա լուսապատկերներով ցուցադրել է Հայաստանի տեսարանն վաղեր, նրա մի շարք պատմական հուշարձանները և արժեքավոր մշտնջեր հայկական արվեստներից:

Հանգիստն էր եկել և ավարտին տ. Զգոն եպիսկոպոսը օրհնության և գնահատանքի ջերմ խոսքեր է ուղղել Մեղայի քաղաքապետարանին, խոսքի ժողովրդին և հատկապես հնազանդ պր. Անտոնյանի Կասախյանին, որը, վերջերս վերադառնալով սուրբ Էջմիածնից, մախաձեռնողն է եղել այս հանգիստին:

Տեղական ռադիոն և մամուլը լայնորեն արձագանքել են էկոմենիկ ոգով կազմակերպված սույն բարեկամական հանգիստին:

Ռուս պրավոսլավ եկեղեցին Մոսկվայի պատրիարքարանի հովանավորությամբ վերջերս Միլանի մեջ հաստատել է մի մատուռ և կազմակերպել հոգևոր հովվություն: Մոսկվայի պատրիարքարանի՝ Արևմտյան եվրոպայի Էկզարխ միտրոպոլիտ Անտոն Բլումբ անցած դեկտեմբերի 17-ին կատարել է նորահաստատ մատուռն օծումը պաշտոնական մի հանգիստությամբ, որին մասնակցել է նաև տ. Զգոն եպիսկոպոսը հատուկ հրավերով: Հանգիստն էր եկել և ընթացքում սրբազանը շնորհավորական մի ուղերձ է արտասանել հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Միլանի հայ հավատացյալների:

Ս. ԾՆՆԴԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ
ՄԻԼԱՆԻ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Գեկտեմբերի 17-ին Միլանի անգլիկան եկեղեցում տեղի է ունեցել ս. Ծննդի հսկման էկոմենիկ արարողություն, որին ներկա է եղել տ. Զգոն եպիսկոպոսը, կարդացել վերջին Ավետարանը և ներկայացրել տվել արձակման օրհնությունը:

Գեկտեմբերի 19-ին նույն եկեղեցում միտրոպոլիտ Անտոն Բլումբ կարդացել է մի շահեկան դասախոսություն «Եկեղեցի» թեմայի շուրջ: Օրվա մախաբանությամբ մաս են կազմել տ. Զգոն սրբազանը, որը, հավարտ դասախոսությամբ, հանդես է եկել փակման խոսքով՝ ջերմորեն գնահատելով եկեղեցիների համագործակցության և միության նպատակին ուղղված սույն օգտակար մախաձեռնությունը և իր օրհնությունները բաշխելով հավատացյալ ներկայացրել:

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ՎԱՍՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Նոր տարվա երեկոյան Միլանի հուշակալոր Դուոմո տաճարում Միլանի կարդինալ Զոլվանցի Կոլոմբոն մատուցել է պատարագ վասն խաղաղության աշխարհի: Պատարագի հանդիսավոր արարողությանը ներկա լինելու համար հրավիրվել են հայ առաքելական, հույն օրթոդոքս և անգլիկան եկեղեցիների հոգևոր ներկայացուցիչները: Բարոգի ընթացքում կարդինալ Կոլոմբոն մեծարանքի ու եղբայրական սիրո ջերմ լզացմունքներ է արտահայտել աղոթքին մասնակցող քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականների նկատմամբ և ուղջույնի պահին ողջագուրվել նրանց հետ սիրո համընդունելով:

Հավարտ պատարագի մեծարգո հետքերը կարդինալի և տասնյակ եպիսկոպոսների ու ալ պաշտոնական անձնավորությունների ուղեկցությամբ, թափուրով առաջնորդվել են արքեպիսկոպոսարան, ուր քույր եկեղեցիների ներկայացուցիչների պատվին տրվել է ընդունելություն:

Հետևյալ օրը «Ալեքսիե» և իտալական մյուս օրաթերթերը լուսանկարներով և մանրամասն տեղեկություններով արձագանքել են սույն հանդիսությանը:

ԼԿՈՒՄԵՆԻԿ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ «ԱՂՈԹՔԻ ԶԱԲԱԹ» ՎԱ ԱՌԹԻՎ ՎԱՍՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՐՈՒՍՈՆՅԱՆՆԵՐԻ

«Աղոթքի շաբաթ»-վա առթիվ հունվարի 19-ին Միլանի Դուոմոյում տեղի է ունեցել Էկումենիկ պաշտամունք վասն միության քրիստոնյաների: Կրեմայի եպիսկոպոս Կարլո Սազիանայի հրավերով պաշտամունքին իրենց մասնակցությունն են բերել նաև հայ և անգլիկան եկեղեցիների ներկայացուցիչները: Արարողության սկզբին եկեղեցու բեմի առաջ երեք եկեղեցիների հոգևոր պետերը փոխանակել են ի Բրիտոս սիրո և խաղաղության համբույրը: Տ. Զգոն եպիսկոպոսը կարդացել է «Բրիտոս ի մէջ մեր յայտնեցաւ»-ի թարգմանությունը և ըստ կարգի մատուցել քրիստոնեական խաղաղության և միության աղոթքը:

Պաշտամունքի մասնակիցները հուզումով են լսել Կրեմայի եպիսկոպոսի՝ Էկումենիկ ոգով արտասանած քարոզը, որի մէջ վիճակավոր սրբազանը վեր է հանել Հայաստանյայց եկեղեցու կատարած պատմական դերը քրիստոնեական հավատի պաշտպանության գործում՝ միաժամանակ նշելով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ալքելությունը Պոլսու Զ Պապին:

Այս առթիվ ուղջույնի ուղերձով հանդես է եկել նաև տ. Զգոն սրբազանը, որի ուղերձը հրատարակվել է տեղական «Տորրեցո» շաբաթաթերթում:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՎԱՔՈՒՅԹՆԵՐ

Հունվարի 25-ին վաղեղական բողոքականների Սֆորցայի սրահում տեղի է ունեցել միջեկեղեցական մի հավաքույթ՝ նախագահությամբ վերապատվելի Սթաֆֆիի: Հավաքույթին ներկա է եղել նաև հայ եկեղեցու ներկայացուցիչը և մասնակցել տարվա միութենական շաբաթվա «Տէր, ուսո՛ւ մեզ կալ յաղօթս» քնարանի շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը և համատեղ աղոթքին:

Նույն օրը, երեկոյան, Վենեցիանի աստվածաբանական վարժարանը, որը Միլանի արքեպիսկոպոսության յոթ սեմինարիաներից մեծագույնն է, հաստատության շքեղ բազիլիկայում համախումբ մի արարողությանը հարգել է «Բրիտոնյաների միության աղոթքի շաբաթը», որին մասնակցել է տ. Զգոն եպիսկոպոսը՝ հաստատության գլխավոր տեսուչ Բ. Չիտտերիո եպիսկոպոսի սիրալիտ հրապերով: Հայ եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչը թափուրով առաջնորդվել է բեմ, աղոթք մատուցել և ապա արտասանել հավիտյա պատշաճի մի քարոզ: Չիտտերիո եպիսկոպոսը իր խոսքի մէջ դրվատանքով է խոսել Հայաստանյայց եկեղեցու քրիստոնեական դերի մասին՝ պատմական հիշատակումներով: Պաշտամունքից հետո տեղի է ունեցել պաշտոնական ընդունելություն հաստատության նեղաճառանը, որտեղ հայ եկեղեցու եպիսկոպոսը ներկայացվել է աստվածաբանական վարժարանի ուսանողությանը և դասախոսական կազմին:

Յ ր ա ն ս ի ա

1915 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵՎ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԵՐԻՆ ՅՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱՏ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՐՍԵԼԻՈՍ

Սույն թվականի փետրվարի 11-ին, կիրակի օրը, Մարսելի հայոց ս. Թարգմանչաց եկեղեցում 1915 թվականի հայ ճահատակաց և առաջին ու երկրորդ աշխարհամարտերին Ֆրանսիայի ազատագրության համար զոհված հերոսների հիշատակին նվիրված կոթող-հուշարձանի բացման առթիվ տեղի է ունեցել հանդիսավոր պատարագ և Էկումենիկ ժամերգություն ի ներկայության հայ

1. օտար հավատացյալների մի հոծ քազմություն: Օրվա պատարագիչն է եղել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի՝ հարավային Ֆրանսիայի շրջանի փոխանորդ և Մարսելի եպիսկոպոս տ. Հակոբ Վարդանյանը:

Պատարագին և էկումենիկ ժամերգության սրբազան արարողություններին ներկա են եղել քրիստոնեական քույր եկեղեցիների հայ և օտար բարձրաստիճան հոգևոր անդամները և պետական պաշտոնական անձինք, այդ թվում՝ հոռապետական կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչ, Մարսելի արքեպիսկոպոս Ռոմե Էյեզարան, հայ կաթողիկե համայնքի ժողովրդապետ հայր Հովհաննես Ե. վրդ. Չուհաճյանը, հայ ավետարանական համայնքի վերապատվելի Հարություն Հելվաճյանը, Ֆրանսիայի վարչապետի մոտ երիտասարդության և ուսուցիչ հարցերի գծով պետական քարտուղար Ժոզեֆ Կոմիտին, Մարսելի քաղա-

քագլուխ Գաստոն Դեֆերը, Բուշ-Դյու-Ռոնի նահանգի խորհրդի նախագահ Լուի Ֆիդիքերը, Էքսի քաղաքապետ Սիկոլինին և քազմաթիվ այլ պաշտոնական անձնավորություններ:

Էկումենիկ ժամերգությանը ներկա է եղել նաև հրեական համայնքի ռաբբի Մ. Սալզբրին:

Հուշարձանի քացման արարողություններին էկումենիկ աղոթքներով և ժամասացությամբ իրենց մասնակցություն են բերել տ. Ռոմե արքեպիսկոպոս Էյեզարան և պատարագիչ սրբազանը: Հուշարձանի առաջ դրվել են ծաղկեպսակներ, և զինվորական նվագի ղողանջի տակ ներկաները մեկ թույն լուծությամբ հարգել են բյուրավոր նահատակների հիշատակը:

Հանդիսությանց փակումը կատարվել է բոլոր ներկաների կողմից միաբերան երգված «Հայր մեր»-ով և երկու սրբազան հայրերի օրհնությամբ:





ԼՈՒՐԵՐ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ

**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ,
ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՍՏՐ
ՊՐԱԳԱՅՈՒՄ**

Սույն թվականի փետրվարի 7—9-ը Պրագայում տեղի է ունեցել խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարության նիստը, որի ընթացքում քննարկվել են այն մոտ խնդիրները, որ ներկայումս դրված են ԽՀԿ-ի առաջ, որպես հետևանք միջազգային լարվածության թուլացման և ամբողջ աշխարհում խաղաղասիրական մի մոտ մթնոլորտի ստեղծման:

Նիստի մասնակիցները հետաքրքրությամբ են լսել պրոֆ. Գ. Վեոնցերի (Արևմտյան Գերմանիա) գեկուցումը «խաղաղ գոյակցությունը և ժամանակակից աստվածաբանության խնդիրները» նյութի շուրջ:

Քարտուղարությունը ողջունել է Վիետնամի համաձայնագրի ուտորագրումը և խաղաղության վերահաստատումը Հնդկաչինում, որպես հալածանակ միջազգային համերաշխության շարժման՝ միաժամանակ նշելով, որ քրիստոնյաները պետք է հետևողականորեն շարունակեն իրենց պալաքարը Մերձավոր Արևելքում արաբական երկրների և Իսրայելի միջև գոյություն ունեցող կոնֆլիկտի խաղաղ լուծման, ինչպես նաև Լատինական Ամերիկայում և Աֆրիկայում ընդազուրկ ու ճնշված ժողովուրդների ազատագրության և ուսսիզմի հանցագործությունների վերացման համար:

Նիստի ընթացքում քարտուղարությունը նախապատրաստական աշխատանքներ է տարել Աշխատանքային կոմիտեի առաջիկա նստաշրջանի գումարման համար, որը տեղի

է ունենալու սույն թվականի մարտի 20—23-ը Մոսկվայում:

Փետրվարի 8-ին ԽՀԿ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Կարոլի Տոթը, ի պատիվ քարտուղարության նիստին մասնակցող խաղաղության համաշխարհային խորհրդի պատվիրակության, կազմակերպել է ընդունելություն, որին ներկա են եղել ՉՍՀ-ի կառավարության և Չեխոսլովակիայի Էկոմենիկ խորհրդի ներկայացուցիչները:

**ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴՈԿՏ. ՖԻԼԻՊ ՓՈԹՐԸՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ**

Ռուս պրավոսլավ եկեղեցու հրավերով սույն թվականի փետրվարի 17-ին Մոսկվա է ժամանել ԵՀԽ-ի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրը, որն այդ պաշտոնին կոչվել էր 1972 թվի օգոստոսին:

Փետրվարի 19-ին դոկտ. Փոթըրին ընդունել է ռուս պրավոսլավ եկեղեցու պետ Նորին Արքություն Պիմեն Պատրիարքը:

Նույն օրը Մոսկվայի պատրիարքարանի եկեղեցական արտաքին հարաբերությունների բաժինը, ի պատիվ մեծարգո հյուրի, կազմակերպել է ընդունելություն, որին ներկա են եղել բաժնի վարիչ Յուլենայի միտրոպոլիտը, ռուս բարձրաստիճան հոգևորականներ և բաժնի պատասխանատու աշխատակիցներ:

Ընդունելության ընթացքում ներկայացրել են հետաքրքրությամբ են լսել գլխավոր քարտուղարի ելույթը «Որտե՞ղ ենք մենք և ո՞ւր ենք գնում» նյութի շուրջ:

Բացի Մոսկվայից, դոկտ. Փոթըրը միտրոպոլիտ Յուլենայի ուղեկցությամբ եղել է նաև Տուլա քաղաքում:



ԼՈՒՐԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՑ

**ԵՀՆ-Ի «ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՊԱՍՏԱՆՅԱՆՆԵՐԻ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՎԱՔ ՍՈՖԻԱՅՈՒՄ**

Ի պատասխան բուլղար օրթոդոքս եկեղեցու պատրիարք Մաքսիմ Գ-ի հրավերի, ԵՀՆ-ի «Եկեղեցիների փոխօգնության ու ծառայության և ապաստանյալների օժանդակության» հանձնաժողովը որոշել է իր առաջիկա նիստը գումարել այս տարի նոյեմբերի 28—30-ը Սոֆիայում:

Վերոհիշյալ հանձնաժողովը ծրագրել է հավաքվել ամեն տարի տարբեր երկրում, որպեսզի ամփոփակաճորեն շփոմներ ունենա տվյալ երկրի եկեղեցիների հետ և մոտիկից տեղեկանա նրանց կյանքից ու վնասվածքներից: Հանձնաժողովը պատասխանատվություն է ստանձնել ամեն տարի իրականացնելու տարբեր տեսակի ավելի քան 800 ծրագրեր, որոնց մեծ մասի նպատակն է օժանդակել եկեղեցիներին՝ նրանց ամենօրյա կյանքում, ինչպես նաև՝ զանազան բնագավառներում նրանց ծավալած գործունեությանը:

Սոֆիայի առաջիկա ժողովը հանձնաժողովի անդամներին պիտի թույլատրի հանգամանորեն հաշվի առնել Արևելքի եկեղեցիների հնարավորությունները:

**ԴՈԿՏ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՄԻ
ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ**

ԵՀՆ-ի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրը 1872 թ. դեկտեմբերի 15—18 օրերին եղել է Ստամբուլում և այցելություն տվել օրթոդոքս եկեղեցու նոր տիեզերական Պատրիարք Դեմետրիոս Ա-ին: Սա առաջին պաշտոնական այցելությունն է, որ ԵՀՆ-ի ընդհանուր քարտուղարը տալիս է օրթոդոքս եկեղեցու Հովվապետին՝ իր նոր պաշտոնին կոչվելուց հետո:

Տեսակցության ընթացքում տիեզերական Պատրիարքը հայտարարել է, որ «Տիեզերական պատրիարքությունը այսուհետև ևս շարունակելու է գործունեությունն ունենալ եկեղեցիների համաշխարհային խորհրդի ծրագրում»:

Վերջերս, ինչպես հայտնի է, օրթոդոքս որոշ եպիսկոպոսներ քննադատել էին օրթոդոքս եկեղեցու մասնակցությունը Էկումենիկ շարժմանը: Այս կապակցությամբ տիեզերական Պատրիարքը սույն հանդիպման ընթացքում արել է հետևյալ ճշտումը. «Մենք երբեք չենք հայտարարել, որ մտադիր ենք փոխելու մեր մասնակցության բնույթը Էկումենիկ շարժմանը, մի շարժում, որ այնքան լավ ներկայացված է ԵՀՆ-ի կողմից: Սակայն այդ չի նշանակում, որ պատրիարքությունը միշտ որդեգրելու է բոլոր այն ձգտումները, որոնք դրսևորվում են ԵՀՆ-ում... Մենք առավել կարևորություն ենք տալու ԵՀՆ-ի առաջնահերթ նպատակին, այսինքն՝ աստվածաբանության ուղղությամբ տարվող աշխատանքներին, որոնց հիմնական խնդիրն է հող նախապատրաստել իրականացնելու համար քրիստոնեական միությունը»:

Հանդիպման ընթացքում հատկապես շուշափվել է ԵՀՆ-ի գործադիր կոմիտեի կազմում ավելի շատ օրթոդոքս աստվածաբաններ ընդգրկելու հարցի անհրաժեշտությունը:

**ԵՀՆ-Ի «ՀԱՎԱՏՈՒ ԵՎ ԿԱՐԳԻ»
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐԱՎԱՍԿԱՎԻՏՈՒՄ**

Սերբիայի Պատրիարք Նորին Արքություն Հերմանի հրավերով 1872 թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 8-ը Հարավսլավիայում է եղել ԵՀՆ-ի «Հավատո և կարգի» հանձնաժողովի պատվիրակությունը՝ տեսակցություն ունենալու համար Բելգրադի աստվածաբանական ֆակուլտետի դասախոսների հետ:

Տեսակցության ընթացքում օրակարգի գլխավոր հարցերից մեկն է եղել վարչական և հոգևոր դրվածքը եկեղեցում, որը ներկայումս մեծապես զբաղեցնում է «Հավատո և կարգի» հանձնաժողովին: Այդ բնագավառում ձեռք բերված արդյունքները ներկայացվել են ֆակուլտետի անդամներից և սերբ օրթոդոքս աստվածաբաններից, որոնք քրեմլական ժամանակ բանաձևել են իրենց դիրքորոշումը այդ հարցում: Պարզվել է, որ որոշ կետերում երկու կողմերի միջև գոյություն ունի հայացքների նույնություն: Ասկայն կողմերը նկել են այն եզրակացության, որ որոշ բնագավառներում անհրաժեշտ են որոնման հետագա ջանքեր. նպիսկոպոսի կողմից ձեռնադրության հարցը, օրինակ, դեռևս կարիք ունի հստակացվելու:

Պատվիրակությունը հելգրադում և Սիմսկի-Կառլովսիում այցելել է Սերբիայի օրթոդոքս եկեղեցու երկու հոգևոր ուսումնական հաստատություններ, սերբ-օրթոդոքս

հոգևորականաց միության անդամների հետ ունեցել մի հանդիպում, որի ընթացքում քննության են առնվել ժամանակակից աշխարհում ընդհանուր եկեղեցու առաջ դրված մի շարք կարևոր հարցեր:

Նորին Սրբություն Ներման Պատրիարքը երկու անգամ ընդունել է պատվիրակության անդամներին և կարևորությամբ շնորհակալ Սերբիայի օրթոդոքս եկեղեցու և մյուս եկեղեցիների գործակցության անհրաժեշտությունը եկեղեցիների համաշխարհային խորհրդի շրջանակներում՝ մաղթելով միաժամանակ, որ այդ գործակցությունը խորանա:

Պատվիրակության կազմում են եղել պրոֆ. Ուլրիխ Զյուհներ՝ ԳՂՀ-ի լուսերական եկեղեցուց, հայր Լմմանուել Լանը՝ հոռոմեական կաթոլիկ եկեղեցուց, Ռոբեր Նելսոնը՝ Միացյալ Նահանգների մեթոդական եկեղեցուց, «Հավատո և կարգի» հանձնաժողովի տնօրեն Լուկաս Վիշերը և ուրիշներ:

